# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**1. Վերահսկիչ պալատի հաշվետու տարվա ընդհանուր նկարագիրը..........................................................................................................5**

**2. Վերահսկողության արդյունքները...................................................................7**

2.1. ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ...............................................................7

2.2. ՀՀ բնապահպանության նախարարություն...............................................................11

2.3. ՀՀ քաղաքաշինության նախարարություն..................................................................15

2.4. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն............................................................19

2.5. ՀՀ առողջապահության նախարարություն..................................................................21

2.6. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի մաքսային ծառայություն.....................25

2.7. «Հայաստանի Հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ.........................................25

2.8. ՀՀ Սյունիքի մարզպետարան.............................................................................27

2.9. ՀՀ Սյունիքի մարզի համայնքներ..........................................................................30

2.10. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան......................................................................36

2.11. ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքներ................................................................39

2.12. ՀՀ Արարատի մարզպետարան.............................................................................44

2.13. ՀՀ Արարատի մարզի համայնքներ........................................................................46

2.14. Երևանի քաղաքապետարանի կողմից անշարժ գույքի կառավարման և օգտագործման մասին.....................................................................................................49

2.15. Երևան քաղաքի Կենտրոն համայնք......................................................................54

2.16. Երևան քաղաքի Դավթաշեն համայնք...................................................................57

2.17. Երևան քաղաքի Նոր Նորք համայնք.....................................................................58

2.18. Ընդերքի օգտագործման տրամադրման օրինականության և ընդերքի օգտագործման մասին (ընտրանքային՝ Երևան).............................................................59

2.19. Ընդերքի օգտագործման տրամադրման օրինականության և ընդերքի օգտագործման մասին (ընտրանքային)..........................................................................67

2.20. Պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների լուծարման գործընթացի մասին (ընտրանքային)...............................................................................................................74

2.21. «Սևան» ազգային պարկի հողերի օգտագործման տրամադրման, այդ հողերի օգտագործման, ինչպես նաև վարձավճարների գանձման մասին..................................78

2.22. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագիր....................................................79

2.23. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ծրագիր..............................................................................................................................81

2.24. Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող՝ Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագիր.....83

2.25. Նավթ արդյունահանող երկրների կազմակերպության հիմնադրամի և Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արտադրական ենթակառուցվածքների վերականգնման ծրագիր........85

2.26. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագիր.....86

2.27. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Քաղաքային ջեռուցման ծրագիր.....87

2.28. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Առողջապահական համակարգի արդիականացման I և II ծրագրեր.....88

2.29. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Թռչնագրիպին հակազդման ծրագիր.....89

2.30. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ «Պատվարների անվտանգության երկրորդ ծրագիր.....91

2.31. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Կրթության որակի և համապատասխանության ծրագիր.....92

2.32. ՀՀ համայնքներում գազիֆիկացման աշխատանքների կատարման համար բյուջեներից հատկացված միջոցների օգտագործում (արտածրագրային վերահսկողության թեմա).....94

2.33. «Պետական աջակցություն ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագիր (արտածրագրային վերահսկողության թեմա).....96

2.34. ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն (հույժ գաղտնի).....98

2.35. «ՀՀ պետական բյուջեներով նախատեսված հիմնական խմբին չդասվող այլ ծախսային ծրագրերով ՀՀ պետական այլ մարմիններին հատկացված միջոցների օգտագործման նկատմամբ իրականացրած վերահսկողության արդյունքների մասին» (հույժ գաղտնի).....98

**3. Վերահսկիչ պալատի միջազգային հարաբերությունները.....99**

**4. Հավելված և տեղեկանքներ.....101**

## 1.Վերահսկիչ պալատի հաշվետու տարվա ընդհանուր նկարագիրը

*Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատն անկախ մարմին է, որը վերահսկողություն է իրականացնում բյուջետային միջոցների եւ պետական ու համայնքային սեփականության օգտագործման նկատմամբ: Վերահսկիչ պալատի գործունեության ծրագիրը հաստատում է Ազգային ժողովը: Վերահսկիչ պալատը տարեկան ոչ պակաս, քան մեկ անգամ Ազգային ժողով է ներկայացնում վերահսկիչ պալատի վերահսկողական աշխատանքների արդյունքների հաշվետվությունը: Վերահսկիչ պալատի գործունեության կարգը եւ իրավասությունը սահմանվում են օրենքով: Վերահսկիչ պալատի նախագահը նշանակվում է Հանրապետության Նախագահի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի կողմից՝ վեց տարի ժամկետով: Վերահսկիչ պալատի նախագահ կարող է նշանակվել պատգամավորին ներկայացվող պահանջներին համապատասխանող անձը: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել վերահսկիչ պալատի նախագահ:*

*ՀՀ Սահմանադրություն*

*Հոդված 83.4*

Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի գործունեությունն իրականացվել է՝ ***Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և «Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի մասին»*** Հայաստանի Հանրապետության օրենքին, Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2008 թվականի գործունեության տարեկան ծրագրին (այսուհետ՝ Տարեկան ծրագիր) համապատասխան:

Վերահսկողություն իրականացնելու ընթացքում Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատն (այսուհետ՝ Վերահսկիչ պալատ) առաջնորդվել է ***Գերագույն վերահսկիչ ատյանների միջազգային կազմակերպության (ԳՎԱՄԿ/INTOSAI)*** վերահսկողության սկզբունքներով:

Վերահսկողության արդյունքներն ամփոփվել են Վերահսկիչ պալատի 37 ընթացիկ հաշվետվություններում (որից 3-ը՝ արտածրագրային վերահսկողության արդյունքում): Բոլոր ընթացիկ հաշվետվությունները «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն Վերահսկիչ պալատի խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կողմից հաստատվելուց հետո տասն օրվա ընթացքում ներկայացվել են ՀՀ Նախագահին, ՀՀ Ազգային ժողով և ՀՀ կառավարություն: Ընթացիկ հաշվետվությունները հաստատվելուց հետո 30 օրվա ընթացքում տեղադրվել են Վերահսկիչ պալատի ինտերնետային էջում, բացառությամբ՝ «ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանությունում պետական պատվերի և ծրագրերի կատարման նպատակով պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման և բյուջետային մուտքերի ապահովման, ինչպես նաև պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների մասին», ինչպես նաև «ՀՀ պետական բյուջեներով նախատեսված հիմնական խմբին չդասվող այլ ծախսային ծրագրերով ՀՀ պետական այլ մարմիններին հատկացված միջոցների օգտագործման նկատմամբ իրականացրած վերահսկողության արդյունքների մասին» ընթացիկ հաշվետվությունների, քանի որ դրանք պարունակում են «հույժ գաղտնի» տեղեկատվություն և դրանց կարելի է ծանոթանալ ՀՀ Ազգային ժողովում՝ օրենքով սահմանված կարգով:

«Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով վերահսկվող օբյեկտների ղեկավարները Վերահսկիչ պալատին տրամադրել են

տեղեկատվություն ընթացիկ հաշվետվություններում ամրագրված՝ հայտնաբերված խախտումները վերացնելու ուղղությամբ:

«Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի համաձայն, ՀՀ Նախագահին, ՀՀ Ազգային ժողով և ՀՀ կառավարություն է ներկայացվել երեք եզրակացություն (տեղադրվել է նաև Վերահսկիչ պալատի ինտերնետային էջում)՝

- «Հայաստանի Հանրապետության 2007 թվականի պետական բյուջեի կատարման մասին» ՀՀ կառավարության հաշվետվության վերաբերյալ,
- Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2007 թվականի տարեկան հաշվետվության վերաբերյալ,
- Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի կատարման մասին ՀՀ կառավարության 2007 թվականի տարեկան հաշվետվության վերաբերյալ:

***«Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով ՀՀ գլխավոր դատախազություն ուղարկված նյութերի ընթացքի մասին.***

*Վերահսկիչ պալատի խորհրդի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազություն են ուղարկվել քրեաիրավական բնույթի խախտումների վերաբերյալ կասկածներ պարունակող արձանագրություններ և ընթացիկ հաշվետվություններ, որի արդյունքում հարուցվել է 5 քրեական գործ, մեկ նյութ կցվել է նախապես հարուցված քրեական գործին, երկու նյութով գործի հարուցումներ մերժվել են հանցադեպի բացակայության հիմքով և արձանագրված խախտումները որակվել են որպես քաղաքացիաիրավական բնույթի, իսկ մեկ նյութով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ անձի նկատմամբ նույն մեղադրանքով քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին չվերացված որոշման առկայության պատճառով:*

Հաշվետու տարվա ընթացքում իրականացրած վերահսկողության արդյունքում արձանագրված ընդհանուր ֆինանսական խախտումներն ու թերությունները (անարդյունավետ ծախս) միասին կազմում է 8,083,522.1 հազ. դրամ, որից վերականգնման ենթական գումարը՝ 5,995,172.5 հազ. դրամ, անարդյունավետ ծախսը՝ 1,890,704.3 հազ. դրամ: Ընդ որում, վերականգնման գումարներից աշխատանքով վերականգնված գումարը կազմում է 1,533,777.8 հազ. դրամ, իսկ պետական կամ համայնքային բյուջե վերականգնված գումարը՝ 852,020.5 հազ. դրամ և դեռևս ենթակա է վերականգնման՝ 3,609,374.5 հազ. դրամ (հավելված 1):

# 2. Վերահսկողության արդյունքները

## 2.1. ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

<u>Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակաշրջանը՝</u> 2006-2007թթ.
<u>Վերահսկողության արդյունքներով արձանագրվել է՝</u>

*1. Բնական կերհանդակների (արոտների) բարելավում, ջրարբիացում, գյուղատնտեսական հողատեսքերի պահպանում և ինժեներական կառուցվածքների վերանորոգում*

Իրականացվել է 713,505.0 հազ. դրամի շինարարական աշխատանքներ, ընտրանքային եղանակով ուսումնասիրվել է 283,840.0 հազ. դրամի աշխատանքներ, կամ 39,8 %: Ուսումնասիրությունից պարզվել է, որ աշխատանքները կատարվել են բազմաթիվ խախտումներով, որի արդյունքում թույլ է տրվել ծավալային հավելագրում, գումարով՝ 33,588.9 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման (աղյուսակ 1):

աղյուսակ 1, հազ. դրամ

| | Օբյեկտի անվանումը և պայմանագրի արժեքը | Կապալառուի անվանումը | Հավելագրում | Վերականգնվել է | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Աշխատանքով | Դրամով |
| 1 | Սպիտակասար (Գեղարքունիքի մարզ) 50,000.0 հազ. դրամ | «Ռ.Կ.Դ.» ՍՊԸ | 2,416.2 | | 2,416.2 |
| 2 | Սարալիճ (Շիրակի մարզ) 45,000.0 հազ. դրամ | «Փարվանապրոմ» ՍՊԸ | 12,117.1 | 11,692.3 | 424.8 |
| 3 | Ստեփանավան (Լոռու մարզ) 69,700.0 հազ. դրամ | Հարավարևելյան Շինհիդրոէներգետիկական Ձեռնարկություն ՍՊԸ | 14,298.0 | 14,298.0 | |
| 4 | Ձորագյուղ (Կոտայքի մարզ) 119,013.1 հազ. դրամ | «Գրիար» ՓԲԸ | 4,757.6 | 4,757.6 | |
| **Ընդամենը** | | | **33,588.9** | **30,747.9** | **2,841.0** |

*2. Սահմանային հսկիչ կետերի կառուցում և վերազինում*

Բագրատաշենի, Բավրայի և Գոգավանի սահմանային հսկիչ կետերում բյուջետային միջոցների հաշվին աշխատանքները կատարվել են բազմաթիվ թերություններով և խախտումներով: Թույլ է տրվել ծավալագնային հավելագրում՝ գումարով 30,612.8 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման (աղյուսակ 2):

աղյուսակ 2, հազ. դրամ

| | Օբյեկտի անվանումը և պայմանագրի արժեքը | Կապալառուի անվանումը | Հավելագրում | Վերականգնվել է | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Աշխատանքով | Դրամով |
| 1. | Բագրատաշեն 94,600.0 հազ. դրամ | «ՎԼՀԱՔ» ՍՊԸ | 8,345.1 | 8,345.1 | |
| 2. | Բավրա 94,600.0 հազ. դրամ | «ՎԼՀԱՔ» ՍՊԸ | 14,204.2 | 14,204.2 | |
| 3. | Գոգավան 60,300.0 հազ. դրամ | «Փարվանապրոմ» ՍՊԸ | 8,063.5 | 9,475.0 | 1,790.1 |
| **Ընդամենը** | | | **30,612.8** | **32,024.3** | **1,790.1** |


Գոգավանի սահմանային հսկիչ կետ


Բագարանի սահմանային հսկիչ կետ

### *3. Գյուղատնտեսական նշանակության այլ օբյեկտների հիմնանորոգում*

Մարզերի անասնաբուժական լաբորատորիաների 10 մասնաշենքերի վերանորոգման աշխատանքների (292,630.3 հազ. դրամ) ընտրանքային ուսումնասիրությունների (երկու լաբորատորիա) արդյունքում արձանագրվել է ծավալագնային հավելագրում, գումարով՝ 5,114.9 հազ. դրամ (աղյուսակ 3), որը ենթակա է վերականգնման:

աղյուսակ 3, հազ. դրամ

| | Օբյեկտի անվանումը և պայմանագրի արժեքը | Կապալառուի անվանումը | Հավելագրում | Վերականգնվել է | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Աշխատանքով | Գումարով |
| 1 | Աշոցքի տարածքային անասնաբուժական լաբորատորիա 29,000.0 հազ. դրամ | Ագրոսպասարկում Ա/Մ Աշոցքի ՇՄ ՍՊԸ | 2,371.0 | 2,054.2 | 316.8 |
| 2 | Նոյեմբերյանի տարածքային անասնաբուժական լաբորատորիա 29,000.0 հազ. դրամ | «ՎԱՆԳՈՌ» ՍՊԸ | 3,300.0 | 3,175.0 | 125.0 |
| **Ընդամենը** | | | **5,671.0** | **5,229.2** | **441.8** |

### *4. Գետերի, հեղեղատարների հուների մաքրման և ափերի ամրացման աշխատանքներ*

Ընտրանքային կարգով ուսումնասիրվել է 9-ը օբյեկտ: Շինարարական աշխատանքներում արձանագրվել է 71,029.7 հազ. դրամի ծավալային հավելագրում, որը ենթակա է վերականգնման ( աղյուսակ 4):




Հրազդան գետի հունի մաքրման աշխատանքներ («Էջմիածին-ջրշին» ՍՊԸ)

աղյուսակ 4, հազ. դրամ

| | Օբյեկտի անվանումը և պայմանագրի արժեքը | Կապալառուի անվանումը | Հավելագրում | Վերականգնվել է | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Աշխատանքով | Գումարով |
| 1 | Արաքս գետի ափապաշտպան կառուցվածքների վերականգնում – 105,400.5 | Արփա-Սևան ԲԲԸ | 5,540.2 | 5,540.2 | |
| 2 | Արաքս գետի ափապաշտպան կառուցվածքների վերականգնում– 159,140.5 | Սարդարապատի շինարար ՍՊԸ | 10,936.8 | 12,625.2 | |
| 3 | Արաքս գետի ափապաշտպան կառուցվածքների վերականգնում -159,847.4 | Ասֆալտագործ ՍՊԸ | 4,637.6 | 4,637.6 | |
| 4 | Հրազդան գետի հունի մաքրում և հողաթմբերի ամրացում – 69,008.0 | Էջմիածնի ջրշին ՍՊԸ | 13,733.9 | ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 05.11.08թ. թիվ 23/3 որոշմամբ արձանագրությունները ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն | |
| 5 | Հրազդան գետի հունի մաքրում և հողաթմբերի ամրացում– 50,964.0 | Էջմիածնի ջրշին ՍՊԸ | 6,753.0 | | |
| 6 | Հրազդան գետի հունի մաքրում և հողաթմբերի ամրացում– 70,089.2 | Էջմիածնի ջրշին ՍՊԸ | 11,750.5 | | |
| 7 | Վեդի գետի հունի մաքրում և ափերի ամրացում Ուրցաձոր համայնքի տարածքում – 58,899.6 | Արևշատ-Ա ՍՊԸ | 2,943.1 | 1,878.7 | 1,079.35 |
| 8 | Վեդի գետի հունի մաքրում և ափերի ամրացում Եղեգնավան համայնքի տարածքում – 46,981.2 | Արամ և Արմեն ՍՊԸ | 2,492.1 | 2,774.64 | |
| 9 | Ազատ գետի հունի մաքրում և ափերի ամրացում Ազատավան, Բուրաստան, Արևշատ, Գետազատ, Դեղձուն, Կանաչուտ և Նշավան համայնքների տարածքում – 224,907.0 | Դավիթ և Նորայր ՍՊԸ | 12,242.5 | 12,242.5 | |
| | **Ընդամենը** | | **71,029.7** | **39,698.8** | **1,079.3** |

*5. «Գյուղատնտեսական էկոնոմիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ին ամրակցված մասնաշենքի տանիքի վերանորոգում*

Աշխատանքների համար ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ծախսվել է 95, 985.0 հազ. դրամ:

Արձանագրվել է, որ աշխատանքներն իրականացվել են թերություններով և խախտումներով, թույլ է տրվել ծավալագնային հավելագրում, գումարով՝ 1,770.4 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

*6. Անտառների ցանկապատում*

Անտառի բնական վերաճին նպաստելու համար «Վայոց ձորի անտառտնտեսության» մասնաճյուղի կողմից իրականացվել է անտառի ցանկապատման աշխատանքներ՝ 10,517.3 հազ. դրամ: Հսկիչ չափագրման արդյունքում պարզվել է, որ ցանկապատման աշխատանքները փաստացի կատարվել է պակաս ծավալներով՝ 1190 մետր, գումարով՝ 695.3 հազ. դրամ: Միևնույն ժամանակ, փաստացի կատարված ցանկապատման աշխատանքներում պակաս բետոնե հենասյուն է տեղադրվել՝ գումարով 302.3 հազ. դրամ: Այսպիսով, ցանկապատման աշխատանքներում թույլ է տրվել ծավալային հավելագրում՝ 997.6 հազ. դրամ գումարով, որը ենթակա է վերականգնման:

*7. Հայաստանի Հանրապետությունում ցորենի և գարու սերմնաբուծության զարգացման ծրագիր*

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, խախտելով ՀՀ կառավարության 15.03.07թ. թիվ 451 որոշմամբ սահմանված կարգը, չհավաստագրված արտադրված սերմերի ծավալների համար սերմարտադրողներին լրավճարել է 5,979.5 հազ. դրամ: Լրավճարներն ամբողջությամբ ենթակա է վերականգնման:

*8. Արհեստական սերմնավորման միջոցառումներ*

Նախարարության կողմից իրականացված արհեստական սերմնավորման աշխատանքների արդյունքում մատակարար կազմակերպություններին ավելի է վճարվել 4,774.7 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

*9. Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումներ*

Ծրագրի շրջանակներում (79,106.0 հազ. դրամ) արձանագրվել է, որ «Ագրոքիմիական ծառայություն ՊՈԱԿ-ը պայմանագրով նախատեսված ծավալներից 2006-2007թթ. ընթացքում պակաս աշխատանք է կատարել՝ 9,974.0 հազ. դրամ գումարով, այդ թվում՝ պակաս 637 հողանմուշ՝ 1,040.0 հազ. դրամ գումարով և պակաս 29311 փորձաքննություն՝ 8,934.0 հազ. դրամ գումարով: Արձանագրված 9,974.0 հազ. դրամի ծավալային հավելագրումը ենթակա է վերականգնման:

*10. Անասնաբուժություն և հակահամաճարակային միջոցառումներ*

Վերահսկողության արդյունքների համաձայն, կենդանիների վարակիչ հիվանդությունների հակահամաճարակային վիճակի բարելավման, մարդու և կենդանիների համար հիվանդություններից բնակչության պահպանման ծրագրով «Հանրապետական անասնաբուժական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2006-2007 թթ. փաստացի չկատարված փորձաքննության դիմաց ավելի է ֆինանսավորվել 56,500.0 հազ. դրամ (2006 թ.՝ 41,000.0 հազ. դրամ, 456273 փորձաքննության համար և 2007թ.՝ 15,500.0 հազ. դրամ՝ 127109 փորձաքննության համար), որը ենթակա է վերականգնման:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***ՀՀ կառավարությանը***

*«Բույսերի կարանտինի և երկրագործության» և «Սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական» պետական տեսչությունների կողմից իրականացվող ստուգումների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է դրանք առանձնացնել ՀՀ գյուղատնտեսության նախարարությունից:*

**<u>Ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ</u>**

Վերահսկիչ պալատի արձանագրած խախտումներին ի պատասխան ՀՀ գյուղատնտեսության նախարարի 26.12.08թ. թիվ 04-ԱԳ-06-3963 գրությամբ տեղեկացվել է.

1. *Բնական կերհանդակների (արոտների) բարելավում, ջրարբիացում, գյուղատնտեսական հողատեսքերի պահպանում և ինժեներական կառուցվածքների վերանորոգում* ծրագրերով թույլ տրված 33,588.9 հազ. դրամ ծավալային հավելագրումները վերականգնվել են ամբողջությամբ, այդ թվում՝ 30,747.9 հազ. դրամը՝ շինարարական աշխատանքներով և 2,841.0 հազ. դրամը՝ պետական բյուջե վճարված գումարով:

2. *«Սահմանային հսկիչ կետերի կառուցում»* ծրագրով թույլ տրված 30,612.8 հազ. դրամ ծավալային հավելագրումները վերականգնվել են ամբողջությամբ, ընդ որում՝ 32,024.3

հազ. դրամը՝ շինարարական աշխատանքներով և 1,790.1 հազ. դրամը պետական բյուջե վճարված գումարով:

3. *«Գյուղատնտեսական նշանակության այլ օբյեկտների հիմնանորոգում»* ծրագրով թույլ տրված 5,114.9 հազ. դրամ ծավալային հավելագրումները վերականգնվել են ամբողջությամբ, այդ թվում՝ 4,870.6 հազ. դրամը՝ շինարարական աշխատանքներով և 649.8 հազ. դրամը՝ պետական բյուջե վճարված գումարով:

4. *«Գետերի, հեղեղատարների հուների մաքրման և ափերի ամրացում»* աշխատանքներում թույլ տրված 71,029.7 հազ. դրամ ծավալային հավելագրումներից 39,698.8 հազ. դրամը վերականգնվել է շինարարական աշխատանքներով և 1,079.3 հազ. դրամը՝ պետական բյուջե վճարված գումարով: «Էջմիածին ջրշին» ՍՊ ընկերության կողմից աշխատանքներում արձանագրված 32,237.4 հազ. դրամի ծավալային հավելագրման մասով նյութերն ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն և փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ:

5. *«Գյուղատնտեսական էկոնոմիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ին* ամրակցված մասնաշենքի տանիքի վերանորոգում» ծրագրով թույլ տրված 1,770.4 հազ. դրամ ծավալային հավելագրումները վերականգնվել են ամբողջությամբ, այդ թվում՝ 1,281.6 հազ. դրամը՝ շինարարական աշխատանքներով և 518.4 հազ. դրամը՝ պետական բյուջե վճարված գումարով:

6. *«Անտառների ցանկապատում»* աշխատանքներում թույլ տրված 997.6 հազ. դրամ ծավալային հավելագրումներն ամբողջությամբ վերականգնվել են շինարարական աշխատանքով:

7. *«Հայաստանի Հանրապետությունում ցորենի և գարու սերմնաբուծության զարգացում»* ծրագրով թույլ տրված 5,979.5 հազ. դրամ լրավճարներն ամբողջությամբ վերականգնվել են պետական բյուջե:

8. *«Արհեստական սերմնավորման միջոցառումներ»* ծրագրով մատակարարներին ավելի վճարված 4,774.7 հազ. դրամ գումարն ամբողջությամբ վերականգնվել է՝ անհատույց ծառայությունների մատուցմամբ:

9. *«Ագրոքիմիական ծառայություն» ՊՈԱԿ-ի* կողմից 9,974.0 հազ. դրամի չափով պակաս կատարված հողանմուշների և փորձաքննության մասով 2008 թվականի ընթացքում աշխատանքով վերականգնվել է 2,903.5 հազ. դրամ (1100 հողանմուշառում և 9200 փորձաքննություն): Մնացած չկատարված 20111 փորձաքննությունները՝ ՊՈԱԿ-ի կողմից անհատույց իրականացվելու են 2009 թվականի ընթացքում:

10. *«Հանրապետական անասնաբուժական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն» ՊՈԱԿ-ի* կողմից 56,500.0 հազ. դրամի չափով փաստացի չկատարված փորձաքննության մասով 32,713.0 հազ. դրամը վերականգնվել է աշխատանքով (212495 փորձաքննություն): Մնացած՝ 23,787.0 հազ. դրամի չվերականգնված գումարի վերաբերյալ որևէ պարզաբանում չկա:

## 2.2. ՀՀ բնապահպանության նախարարություն

**Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակաշրջանը՝** 2006-2007թթ.

**Վերահսկողության արդյունքներով արձանագրվել է՝**

*1. Շենքերի, շինությունների և բնակարանային վարձակալության ծախսեր*

Տարածքների վարձակալության համար ֆիզիկական անձանց վճարված վարձավճարներից նախարարությունը 535.7 հազ. դրամ գումարով պակաս եկամտահարկ է գանձել, որը ենթակա է վերականգնման:

*2. Երկրաբանահետախուզական աշխատանքներ*

«Ընդերքաբան» ՊՓԲԸ կողմից 2006 թվականին կատարված աշխատանքներում արժանագրվել է 323.6 հազ. դրամի ծավալային հավելագրում, որը ենթակա է վերականգնման:

*3. Պահուստային հանքավայրերի գույքագրում*

2006 և 2007թթ. «Սահակ» ԱԿ կնքված պայմանագրերով նախատեսված 233 հանքավայրերից չի գույքագրվել 92-ը, մինչդեռ պայմանագրով նախատեսված գումարն ամբողջությամբ ստացել է: Չգույքագրված 92 հայնքավայրերի համար ավելի վճարված 16,930.5 հազ. դրամը ենթակա է վերականգնման:

*4. Բնապահպանության ոլորտի տեխնիկական կանոնակարգի մշակման աշխատանքներ*

Ծրագրով նախատեսված երեք կանոնակարգի մշակման աշխատանքների փոխարեն, կատարվել է միայն մեկ նախագծի մշակում, որը մինչև ստուգման պահը համապատասխան վավերացում չէր ստացել և որպես նորմատիվ փաստաթուղթ չէր գործում: 2,600 հազ. դրամ գումարի ծախսը դիտվում է որպես անարդյունավետ:

*5. Բնության հատուկ պահպանվող տարածքների վերանայման, սահմանների ճշտման և քարտեզագրման աշխատանքներ*

- Ծրագրի շրջանակներում «Ուայդ Գեյթ» ՍՊԸ հարակից համայնքների և այլ հողօգտագործողների հետ չի կատարել տեխնիկական բնութագրով սահմանված վերանայված և փոփոխված սահմանների ոչ մի համաձայնեցում,
- ստուգման պահին դեռևս ոչ մի հատուկ պահպանվող տարածք ՀՀ կառավարության որոշմամբ չի հաստատվել և պետական գրանցում չի ստացել,
- «Ուայդ Գեյթ» ՍՊԸ կողմից ամբողջությամբ չի կատարվել քարտեզագրման աշխատանքները: Տեխնիկական բնութագրով սահմանված յուրաքանչյուր տարածքի համար 1:10000 և 1:5000 մասշտաբի քարտեզների փոխարեն կազմվել է մեկ քարտեզ:

Ծրագրի համար պետական բյուջեից հատկացված 25,000.0 հազ. դրամ ծախսը դիտվում է անարդյունավետ:

*6. Ջրի ազգային ծրագրի մշակման աշխատանքներ*

«Ակադեմիկոս Ի. Վ. Եղիազարովի անվ. ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ չկատարած գույքագրման և կադաստրային գրանցման աշխատանքի դիմաց ավելի է վճարվել 14,611.9 հազ. դրամ գումար, որը ենթակա է վերականգնման:

*7. Արաքս գետի հիդրոլոգիական դիտակետերի վերանորոգման և շինարարական աշխատանքներ*

Շինարարական աշխատանքներում «Գոռ Տիգ» ՍՊԸ և «Նոր Բաղաբերդ» ՍՊԸ կողմից թույլ են տրվել ծավալային հավելագրումներ, համապատասխանաբար՝ 5,520.0 հազ. դրամ և 881.7 հազ. դրամ: Չկատարված աշխատանքների դիմաց վճարված՝ 6,401.7 հազ. դրամը ենթակա է վերականգնման:

*8. «Ծաղկաձորը՝ միջազգային չափանիշներին համապատասխանող զբոսաշրջության կենտրոն» նպատակային խնդիրների լուծման միջոցառումների ցանկով նախատեսված հիդրոօդերևութաբանական միջոցառումներ*

«Պահլավունիք» ՍՊԸ հետ կնքված պայմանագրում նախատեսված աշխատանքները փաստացի կատարվածից ավելի է հաշվարկվել և արդյունքում կազմակերպությանն ավելի է վճարվել 1,152.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

*9. Բնապահպանական պետական տեսչություն*

Ձեռնարկությունների կողմից արտադրության և սպառման թափոնների շրջակա միջավայրում սահմանված կարգով տեղադրելու համար բնապահպանական վճարը

պակաս հաշվարկելու հետևանքով պետական բյուջե պակաս է վճարվել 9,699.7 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

*10. Հիդրոօդերևութաբանական կայանի շենքերի և կառույցների հիմնանորոգում*

Աշխատանքները կատարվել են թերություններով, կապալառու կազմակերպություններին՝ «Հանքավան» ՀԶԳ ԲԲԸ և «Վքարշին» ՍՊԸ ավելի է վճարվել 1,021.5 հազ. դրամ (համապատասխանաբար՝ 671.4 հազ. դրամ և 350.1 հազ. դրամ), որը ենթակա է վերականգնման:

*11. Ծաղկաձորի օդային ավազանի աղտոտվածության մոնիտորինգի կայանի ստեղծում և շահագործում*

Ծրագրի շրջանակներում «Լ.Ս.Տ. Գրուպ», «Կոմպաս» և «Ֆիտոկան» ՍՊ ընկերությունների հետ կնքված պայմանագրերով գնված սարքավորումները գտնվում են պահեստում և առ այսօր չեն տեղադրվել, իսկ կայանը չի գործում՝ շենք չունենալու պատճառով: Ծրագրի համար պետական բյուջեի հաշվին կատարվել է 31,752.0 հազ. դրամի անարդյունավետ ծախս:

*12. Սևանա լճում և ավազանում կատարվող հիդրոօդերևութաբանական մոնիտորինգ*

- Հիդրոլոգիական հատուկ նշանակության նավի մատակարարման համար «Կամար» ՓԲԸ հետ կնքված պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետը խախտելու համար նախարարության կողմից չի գանձվել ժամկետանց օրերի համար նախատեսված տույժը՝ 10,404.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:
- Պետական բյուջեից հիդրոլոգիական նավի գնման համար վճարվել է 153,000.0 հազ. դրամ, մինչդեռ ձեռք բերված ապրանքի արժեքը՝ ըստ հանրապետություն ներմուծված մաքսային փաստաթղթի կազմում է 79,931.6 հազ. դրամ, տարբերությունը կազմում է 73,068.4 հազ. դրամ: Տվյալ ծախսը դիտվում է որպես անարդյունավետ:

*13. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ*

Պետական բյուջեի միջոցների հաշվին «Ծովային շինարարություն և տեխնոլոգիաներ» ՍՊԸ կատարել է Սևանա լճի ափին սպորտային նավերի ակումբի շինարարության նախագծային աշխատանքներ և մտադրության հռչակագրի մշակում, որից հետո պետք է կատարվեին նախագծային և շինարարական աշխատանքները: Առ այսօր այդ ուղղությամբ ոչինչ չի արվել, ծրագրի կատարման համար հատկացված 27,762.0 հազ. դրամի ծախսը դիտվում է որպես անարդյունավետ:

*14. «Գեոէկոնոմիկա» ՊՓԲ ընկերություն*

2006թ. տարեկան գործունեությամբ ստացած զուտ շահույթը պակաս ցույց տալու հետևանքով պետական բյուջե չի վճարվել 674.7 հազ. դրամ շահաբաժին, որը ենթակա է վերականգնման:

<u>**Ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ**</u>

Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2009 թվականի փետրվարի 26-ի թիվ 1-ԱԱ/212 գրության՝

- 2009 թվականի փետրվարի 13-ի թիվ 5-ԱԱ/128 գրությամբ տեղեկացվել է «Ընդերքաբան» ՊՓԲԸ-ին արձանագրված 323.6 հազ. դրամը վերականգնելու մասին, իսկ ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի թիվ 653-Ն որոշմամբ ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորությունը վերապահվել է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարին:
- «Սահակ» ԱԿ-ն պարտավորվել է սահմանված ժամկետում իրականացնել 92 հանքավայրերի գույքագրման աշխատանքները, գումարով՝ 16,930.5 հազ. դրամ:

• Ծրագրով նախատեսված 2,600.0 հազ. դրամի շրջանակներում մշակման ենթակա 3 տեխնիկական կանոնակարգերի փոխարեն մշակվել է մեկը, որը ներառում է բոլոր 3 կանոնակարգերին ներկայացվող պահանջները:

• «Ուայթ Գեյթ» ՍՊԸ-ն խնդրել էր ՀՀ բնապահպանության նախարարությանը երկարաձգել պայմանագրի վերջնաժամկետը մինչև 2008 թվականի մայիսի 31-ը, ինչի վերաբերյալ նախարարությունը տվել է իր համաձայնությունը: Ներկայումս «Սև լիճ» պետական արգելավայրի սահմանների նկարագիրն ու տարածքի չափը հաստատելու և «ՀՀ կառավարության 2002 թ.-ի մայիսի 29-ի թիվ 631 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին», ինչպես նաև «Զրվեժ» անտառապարկի սահմանների նկարագիրն ու տարածքի չափը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերը ներկայացվել են շահագրգիռ մարմիններ և գտնվում են քննարկման փուլում: Մեկամսյա ժամկետում քննարկման փուլում կլինի նաև «Էրեբունի» պետական արգելոցի սահմանների նկարագիրն ու տարածքի չափը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

• Կապալառու «Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ-ն պարտավորվել է արձանագրված 14,611.9 հազ. դրամ գումարը վերականգնել աշխատանքով: Աշխատանքները գտնվում են ավարտական փուլում և սեղմ ժամկետներում կներկայացվի լրացուցիչ աշխատանքների ընդունման-հանձնման արձանագրությունը:

• Կապալառու «Գոռ Տիգ» ՍՊԸ-ն պարտավորվել է վերականգնման ենթակա 5,520.0 հազ. դրամ գումարի մի մասը փակել աշխատանքով, իսկ 750.0 հազ. դրամը 2008 թ.-ի նոյեմբերի 3-ին վերականգնել է պետական բյուջե: Կապալառու «Նոր Բաղաբերդ» ՍՊԸ 2009 թ. փետրվարի 20-ին թիվ 5-ԱԱ/151 գրությամբ տեղեկացվել է 881.7 հազ. դրամ վերականգնման ենթակա գումարի մասին:

• 1,152.0 հազ. դրամ վերականգնման ենթակա գումարից հիմնանորոգման աշխատանքներ իրականացնող կապալառու կազմակերպությունը՝ «Պահլավունիք» ՍՊԸ պարտավորվել է արձանագրված 294.0 հազ. դրամ գումարը վերականգնել աշխատանքով, իսկ 858.0 հազ. դրամի խախտումը՝ գումարով:

• 2009 թ.-ին տեսչական աշխատանքների կազմակերպման գործընթացում հատուկ ուշադրություն կդարձնեն ձեռնարկությունների կողմից արտադրական և սպառման թափոնների՝ շրջակա միջավայրում տեղադրման ծավալներին և թափոնների վտանգավորության դասերին, իսկ նախորդ տարվա ընթացքում կազմված ակտերը սահմանված կարգով կտրամադրվեն հարկային մարմիններին՝ համապատասխան գանձումների ապահովման նպատակով:

• Վերականգնման ենթակա 1,021.5 հազ. դրամի մասին տեղեկացվել է «Հայնախագիծ» ԲԲԸ-ին 2009 թ.-ի փետրվարի 20-ի թիվ 5-ԱԱ/150 գրությամբ:

• Մոնիտորինգի կայանի շինարարական աշխատանքները ներկայումս ավարտված են և տարվում են նախապատրաստական աշխատանքներ՝ սարքավորումները տեղադրելու ուղղությամբ:

• 2009 թվականի փետրվարի 13-ի թիվ 5-ԱԱ/129 գրությամբ տեղեկացվել է «Գեոէկոնոմիկա» ՊՓԲԸ-ին արձանագրված 674.4 հազ. դրամը վերականգնելու մասին, իսկ ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի թիվ 653-Ն որոշմամբ ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորությունը վերապահվել է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարին:

# 2.3. ՀՀ քաղաքաշինության նախարարություն

<u>Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակաշրջանը`</u> շինարարական աշխատանքների մասով` 2007թ., իսկ նախարարության պահպանման ծախսերի և բնակարանների գնման վկայագրերի տրամադրման ծրագրի մասով` 2006-2007թթ.:

<u>Վերահսկողության արդյունքներով արձանագրվել է`</u>

*1. Պահպանման ծախսեր*

Պետական բյուջեի միջոցների հաշվին վերանորոգված ավտոմեքենաները օտարվել են վերանորոգման համար ծախսված միջոցներից պակաս գնով` պետական բյուջեին պատճառելով 2,102.1 հազ. դրամի վնաս, որը ենթակա է վերականգնման:

*2. Շինարարական և վերանորոգման աշխատանքներ*

Պետական բյուջեից տվյալ ուղղությամբ հատկացվել է` 14,838,108.0 հազ. դրամ, որից ուսումնասիրվել է 3,273,318.1 հազ. դրամ, իրականացվել են 930,000.0 հազ. դրամի հսկիչ չափագրման աշխատանքներ: Շինարարական աշխատանքները կատարվել են թվով 213 օբյեկտում, որից ընտրանքային կարգով ստուգվել է 26-ը: Արձանագրվել է վերականգնման ենթակա 171,690.9 հազ. դրամի խախտում (աղյուսակ 1):

աղյուսակ 1, հազ. դրամ

| Հ/Հ | Օբյեկտի անվանումը և պայմանագրի արժեքը | Կապալառու | Հայտնաբերում | Վերականգնվել է | |
|---|---|---|---|---|---|
| | | | | գումարով | Աշխատանքով |
| 1 | Երևանի թիվ 177 դպրոց` 245,821.0 | «Կարալանս» ՍՊԸ | 6,694.9 | 1,449.4 | 5,245.5 |
| 2 | Երևանի թիվ 170 դպրոց` 275,862.1 | «Կարալանս» ՍՊԸ | 2,377.0* | 2,035.3 | |
| 3 | Երևանի թիվ 87 դպրոց` 132,940.6 | «Սեմեռ» ՍՊԸ | 16,867.2 | 3,170.2 | 13,697.0 |
| 4 | Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ` 206,896.6 | «Կարաշին տրանս» ՍՊԸ | 8,805.1* | | 7,000.1 |
| 5 | Երևանի թիվ 196 դպրոց` 186,720.0 | «Սամ Շինուժ» ՍՊԸ | 3,921.1 | 2,239.5 | 1,681.6 |
| 6 | Երևանի թիվ 200 դպրոց` 136,782.5 | «Արտաշատշին» ՍՊԸ | 7,714.0 | 4,550.0 | 3,164.0 |
| 7 | Նորատուսի թիվ 1 դպրոց ` 98,245.2 | «Թիվ 28 ՇՄՇ» ԲԲԸ | 15,753.1 | 7,351.5 | 8,352.5 |
| 8 | Մարտունու մարզադպրոց` 78,272.2 | Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ | 5,120.7 | 5,670.1 | 5,443.6 |
| 9 | Մարտունու թիվ 1 դպրոց` 86,321.0 | | 5,993.0 | | |
| 10 | Հրազդանի թիվ 5 դպրոց` 28,615.6 | «Աշկար» ՍՊԸ | 1,081.0 | 1,081.9 | |
| 11 | Գավառի թիվ 5 դպրոց` 59,113.3 | «Բազալտշին» ԱԿ | 7,471.0 | 558.8 | 6,912.0 |
| 12 | Եղիգի դպրոց` 80,917.0 | «Սերժ Սկրտչյան» ՍՊԸ | 11,163.1 | 2,472.3 | 8,133.2 |
| 13 | Լեռնապարի համայնքային կենտրոն` 48,555.5 | «Արշալույս» ԱԿ | 11,947.1 | 985.0 | 10,087.1 |
| 14 | Եղվարդ քաղաքի մարզադպրոց` 107,330.0 | «Կարաշին տրանս» ՍՊԸ | 3,131.0 | 3,131.0 | |
| 15 | Դիլիջանի քաղաքային գրադարան` 45,179.3 | «Կարեն և Իդա» ՍՊԸ | 2,166.1 | 980.0 | 1,185.4 |
| 16 | Մովսես գյուղի մշակույթի տուն` 57,943.1 | «Հայկ և որդիներ» ԱԿ | 7,125.8 | 386.0 | 6,739.8 |
| 17 | Երևանի թիվ 155 դպրոց` 246,304.5 | «Գոկոշին» ՍՊԸ | 4,827.6* | | 4,045.2 |
| 18 | Դիլիջանի թիվ 4 դպրոց` 50,764.3 | «Դիլիջանշին» ԲԲԸ | 390.6 | 88.0 | 282.8 |

| Հ/Հ | Օբյեկտի անվանումը և պայմանագրի արժեքը | Կապալառու | Հավելագրում | Վերականգնվել է | |
|---|---|---|---|---|---|
| | | | | փաստացի | Աշխատանքով |
| 19 | Իջևանի թիվ 1 դպրոց՝ 58,613.3 | «Վահան և թոռներ» ՍՊԸ | 1,514.8 | | 1,514.8 |
| 20 | Ապարանի մշակույթի տուն՝ 94,579.3 | «Հիդրոշինարար-5» ԲԲԸ | 14,990.1 | 1,551.8 | 13,438.4 |
| 21 | Երևանի արվեստի դպրոց Ավանում՝ 71,698.1 | «Արարատշին» ԲԲԸ | 3,516.7 | 1,701.7 | 1,815.0 |
| 22 | Վարչական շենք՝ 395,026.2 | «Եղվարդշին» ԲԲԸ | 27,539.3* | 956.7 | 24,862.8 |
| 24 | Սյունիքի Խոզնավարի դպրոց՝ 49,100.0 | «Բերրիություն» ԲԲԸ | 1,745.4 | | |
| 25 | Տաշիրի հիվանդանոց՝ 48,700.0 | «Լալվար-2» ԱԿ | 1,689.0 | | |
| 26 | Օձունի հուշահամալիրի թանգարան՝ 2,935.4 | «Գրուրա» ԱԿ | 785.2 | 785.2 | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **177,177.0*** | **42,480.5** | **124,953.2** |

***Ծանոթություն՝*** **-ով նշված խախտումները քննարկումների արդյունքում վերանայվել են և ընդհանուր խախտման չափը քննարկումներից հետո կազմել է՝* ***171,690.9 հազ. դրամ,*** *այդ թվում՝ Երևանի թիվ 32 դպրոցում՝ 2,688.7 հազ. դրամ, Երևանի պետական տեխնիկական քոլեջում՝ 7,000.1, Երևանի թիվ 155 դպրոցում՝ 4,678.5 հազ. դրամ և Վարչական շենքում՝ 26,542.6 հազ.դրամ:*

Արձանագրվել են նաև արհեստական թանկացման և ապրանքների նախահաշիվները գերազանցելու փաստեր՝ 106,491.4 հազ. դրամի չափով անարդյունավետ ծախս (աղյուսակ 2):

աղյուսակ 2, հազ. դրամ

| Հ/Հ | Օբյեկտի անվանումը և պայմանագրի արժեքը | Կապալառու | Անարդյունավետ ծախս* |
|---|---|---|---|
| 1 | Երևանի թիվ 177դպրոց՝ 245,821.0 | «Կարալանս» ՍՊԸ | 16,899.0 ** |
| 2 | Երևանի թիվ 170 դպրոց՝ 275,862.1 | «Կարալանս» ՍՊԸ | 38,872.0 |
| 3 | Երևանի թիվ 87 դպրոց՝ 132,940.6 | «Սեմեո» ՍՊԸ | 2,410.0 |
| 4 | Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ՝ 206,896.6 | «Կարաշինտրանս» ՍՊԸ | 2,668.0 |
| 5 | Երևանի թիվ 196 դպրոց՝ 186,720.0 | «Սամ Շինուժ» ՍՊԸ | 3,397.0 ** |
| 6 | Նորատուսի թիվ 1 դպրոց՝ 98,245.2 | «Թիվ 28 ՇՄՇ» ԲԲԸ | 4,231.2 |
| 7 | Մարտունու մարզադպրոց՝ 78,272.2 | Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ | 9,137.0 |
| 8 | Արարատի ՈԿՖ դպրոց՝ 195,800.0 | «Արարատշին»ԲԲԸ | 4,106.0 |
| 9 | Երևանի թիվ 155 դպրոց՝ 246,304.5 | «Գոկո-շին» ՍՊԸ | 4,912.4 ** |
| 10 | Դիլիջանի քաղաքային հիվանդանոց՝ 49,164.2 | «Դիլիջանշին» ԲԲԸ | 1,566.0 |
| 11 | Իջևանի թիվ 1 դպրոց՝ 58,613.3 | «Վահան և թոռներ» ՍՊԸ | 12,442.3 |
| 12 | Ոսկեվազ գյուղի դպրոց՝ 108,113.9 | «Ազգարակ»ԲԲԸ | 5,035.0 |
| 13 | Եղեգի դպրոց՝ 80,917.0 | «Սերժ Սկրտչյան» ՍՊԸ | 815.6 |
| | **Ընդամենը** | | **106,491.45**** |

### *3. Նախագծահետազոտական աշխատանքների իրականացում:*

Պետական բյուջեից տվյալ ուղղությամբ հատկացվել է՝ 662,970.0 հազ. դրամ, այդ թվում՝ 23,950.0 հազ. դրամ Սևանա լճի առափնյա տարածքների ծրագրային փաստաթղթերի մշակման համար:

***Ծանոթություն՝***

**-Նախահաշիվների սխալ կազմման և ոչ համարժեք աշխատանքների համադրումներ կատարելու արդյունքում տեղի ունեցած թանկացումներ:*

***-ով նշված թանկացումները քննարկումների արդյունքում վերանայվել են և ճշտված թանկացումները կազմում են՝ Երևանի թիվ 177 դպրոցում՝ 14,369.0 հազ. դրամ, Երևանի թիվ 196 դպրոցում՝ 1,001.8 հազ. դրամ և Երևանի թիվ 155 դպրոցում՝ 3,670.0 հազ. դրամ: Ընդհանուր թանկացումը քննարկումներից հետո կազմել է՝* ***100,323.85 հազ. դրամ:***

2007թ. ընթացքում պատվիրվել է 104 նախագիծ՝ 500,000.0 հազ դրամ գումարի չափով: Փաստացի նախագծերից միայն 98-ն են ընդգրկվել 2008թ. բյուջեով նախատեսված և մեկը՝ 2009թ. բյուջեով նախատեսված օբյեկտների շինարարական աշխատանքների կատարման համար: Մնացած 5 նախագծերի մասով կատարվել է 15,300.0 հազ. դրամի անարդյունավետ ծախս: Ընդ որում, նախագծերը կազմվել են թերի:

Սևանա լճի առափնյա տարածքների ծրագրային փաստաթղթերի մշակման համար փաստացի կատարվել է 7.1 մլն դրամի աշխատանք, սակայն վճարվել է 23,950.0 հազ. դրամ, որի արդյունքում 15,825.0 հազ. դրամ ենթակա է վերականգնման:

Բացի այդ, կատարված աշխատանքները հանձնվել են ուշացումով, որի համար չի գանձվել պայմանագրով նախատեսված տույժ՝ 466.8 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

*4. Բնակարանային ապահովում բնակարանների գնման վկայագրերի տրամադրում և սողանքային գոտիներում գտնվող բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրների լուծում:*

Բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով բնակարանային ապահովման ծրագրի իրականացման ընթացքում արձանագրվել է ՀՀ կառավարության 24.02.2005թ. թիվ 300-Ն որոշման պահանջների խախտումը: Բացի այդ.

Կոտայքի մարզի Ողջաբերդ գյուղական համայնքի ղեկավարի կողմից ներկայացված ցուցակում ընդգրկված 11 ընտանիքներից ծրագրին մասնակցելու ցանկություն են հայտնել հինգը, որոնցից աջակցություն են ստացել չորսը՝ 30,303.0 հազ. դրամ գումարով: Ողջաբերդ գյուղի համայնքի ղեկավարի կողմից բնակիչներին տրվել է վթարային տների քանդման փաստի վերաբերյալ *ոչ արժանահավատ տեղեկանք*, որը հիմք է հանդիսացել նախատեսված ամբողջ գումարի վճարմանը: Մինչդեռ, գործող ընթացակարգով գումարն ամբողջությամբ վճարվում է բնակչի տեղահանելու վերաբերյալ տեղեկանքի առկայության դեպքում: Ընդ որում, աջակցություն ստացած չորս ընտանիքներից միայն երկուսի վթարային տներն են քանդվել, մեկ տուն քանդվել է մասնակի, իսկ մեկ ընտանիք շարունակում է բնակվել իրեն պատկանող վթարային տանը: Վերոնշյալով պայմանավորված՝ կատարվել է 17,316.0 հազ. դրամի անարդյունավետ ծախս:

Ծրագրի շրջանակներում Հաղարծին համայնքում պետական բյուջեից հատկացված 59,300.0 մլն դրամի չափով կատարվել է անարդյունավետ ծախս: Ըստ արձանագրված արդյունքների՝ 5 ընտանիք ապրում է վթարային շենքում, 7 տուն կիսաքանդ վիճակում է: Տրվել են ոչ արժանահավատ տեղեկանքներ (մարզպետարանի կողմից), որից հետո գումարները վճարվել են ամբողջությամբ:

Ծրագրի շրջանակներում Քարահունջ համայնքում պետական բյուջեից հատկացված 34,300.0 հազ. դրամ գումարի չափով կատարվել է անարդյունավետ ծախս: Ըստ արձանագրված արդյունքների՝ 4 ընտանիք ապրում է վթարային շենքում, 3 տուն կիսաքանդ վիճակում է և բնակարան է ձեռք բերվել կառավարության որոշմամբ սահմանված ցուցակից դուրս թվով 2 ընտանիքի համար:

*5. Քաղաքաշինական պետական տեսչություն*

Քաղաքաշինության բնագավառում տեսչության գործառույթների նկատմամբ իրականացված վերահսկողությամբ արձանագրվել են հետևյալ խախտումները՝

- Կանաչ գոտիների վնասման վերաբերյալ ոչ մի ակտ չի կազմվել: «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 157-րդ հոդվածը սահմանում է՝ պաշտոնատար անձանց համար՝ 150.000 դրամ, շինարարական կազմակերպության և քաղաքացիների համար՝ 100.000 դրամ վարչական տուգանք:

- Չնայած այն հանգամանքին, որ Երևանում 5.1 մլրդ դրամի շինարարական աշխատանքներ են իրականացվել 57 օբյեկտներում, տեսչությունը ստուգել է դրանցից միայն 2-ը՝ տուգանելով 100 հազ. դրամ: Իսկ 15 խոշոր շինարարական կազմակերպություններից ստուգվել են 4-ը, որի դեպքում տուգանքը կազմել է 200 հազ. դրամ: Երևանի քաղաքապետարանն ընդհանրապես որևէ հարցով չի տուգանվել:
- Հատկանշական է, որ «Հայր և որդի Մուրադյաններ» ՍՊԸ ստուգել են 25 անգամ՝ տուգանելով մեկ դեպքում, իսկ «Ախուրյան կոռպշին» ՍՊԸ ստուգվել է 13 անգամ և որևէ անգամ չի տուգանվել:
- Երևանում պատշաճ հսկողություն չի սահմանվել քաղաքաշինության բնագավառում խախտումների վերացման վերաբերյալ տրված պարտադիր կատարման ցուցումների իրականացման նկատմամբ:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***ՀՀ կառավարությանը՝***

*1. Տեխնիկական հսկողությունը դարձնել լիցենզավորման ենթակա գործունեություն:*

*2. Սահմանել կարգ, ըստ որի կապալի պայմանագրով նախատեսված յուրաքանչյուր կատարողականի դիմաց վճարման գումարը նվազեցվում է կատարման տոկոսի չափով:*

*3. Սահմանել կարգ, համաձայն որի, կապալի պայմանագրով իրեն վերապահված պարտականությունները գործողությամբ կամ անգործությամբ խախտելու դեպքում, կապալառուն երկու տարով զրկվում է պետական գնումների գործընթացում շինարարական մրցույթներին մասնակցելու իրավունքից:*

*4. Սահմանել կարգ, համաձայն որի պետական բյուջեի միջոցներով կառուցվող շինարարական օբյեկտներում հայտնաբերված թերությունները վերացվում են տեխնիկական հսկողություն իրականացնողի սեփական միջոցների հաշվին:*

*5. Յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով օբյեկտների շինարարության ծախսերը նախատեսել ոչ թե այդ օբյեկտների մասնակի շինարարության, այլ այդ օբյեկտների վերջնական շինարարության համար, ինչը հարցականի տակ չի դնի նախորդ փուլում կատարված աշխատանքների համար միջոցների օգտագործման արդյունավետությունը:*

*6. Նախագծային առաջադրանքը կազմել ավելի մանրակրկիտ, պարտադիր նշելով օգտագործվող շինարարական նյութերի տեսակը, որակը, ծագումը և այլն:*

*7. Մշակել նախագծահաշվային փաստաթղթերի փորձաքննություն իրականացնելու կարգ, ըստ որի փորձաքննություն իրականացնող կազմակերպությունը կրում է ֆինանսական պատասխանատվություն ավելի հաշվարկված ծավալների և գումարների համար:*

*8. Անհրաժեշտ է տարանջատել քաղաքաշինության բնագավառում կառավարման և հսկողական գործառույթներն ու պատասխանատվությունը: Քանի որ, նախարարությունը հանդիսանում է պետական բյուջեի միջոցներով իրականացվող մեծ ծավալի շինարարության պատվիրատու, իսկ տեսչությունը՝ քաղաքաշինության բնագավառում պետական վերահսկողություն իրականացնող միակ մարմինն է, ապա առաջարկում ենք քաղաքաշինական պետական տեսչությունն առանձնացնել ՀՀ քաղաքաշինության նախարարությունից:*

<u>**Ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ**</u>

ՀՀ վերահսկիչ պալատի արձանագրած խախտումներին ի պատասխան ՀՀ ՎՊ հասցեագրված ՀՀ քաղաքաշինության նախարարի 23.12.2008թ. N-15/5962 և 19.01.2009թ. N-15/102 նամակների համաձայն՝

*1. Անուրղով օտարված ավտոմեքենաների* հիմնանորոգման համար ձևակերպված 2,114.6 հազ. դրամ ծախսը վերականգնվել է պետական բյուջե:

*2. Շինարարական և վերանորոգման աշխատանքներում* թույլ տրված 171,690.9 հազ. դրամ ծավալային հավելագրումներից շինարարական աշխատանքներով վերականգնվել է 124,953.2 հազ. դրամ և 42,480.5 հազ. դրամը՝ պետական բյուջե վճարված գումարով: Դեռևս չվերականգնված 4,257.3 հազ. դրամի մասով նախարարությունը դիմել է «Գնումների պետական գործակալություն» ՊՈԱԿ-ին, որպեսզի վերջինս, իբրև պատվիրատու նշված գումարը գանձի կապալառուներից:

Բացի այդ, արձանագրված խախտումների համար ՀՀ քաղաքաշինության նախարարության շինարարության քաղաքականության վարչության պետին տրվել է խիստ նկատողություն:

*3. Նախագծահետազոտական աշխատանքների իրականացման* շրջանակներում 466.8 հազ. դրամի տույժ-տուգանք է վերականգնվել պետական բյուջե նախագծային աշխատանքների հանձնման պայմանագրային ժամկետի ուշացման համար և 15,825.0 հազ. դրամի գումար վերականգնվել է աշխատանքով («Սևանա լճի առափնյա տարածքների ծրագրային փաստաթղթերի մշակում»):

*4. Քաղաքաշինական պետական տեսչության* մասով արձանագրված խախտումների և թերությունների վերացման ուղղությամբ համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների տրվել են խիստ հանձնարարականներ: Տեսչության մի շարք պատասխանատուներին տրվել է նկատողություն, իսկ Կենտրոն Նորք-Մարաշ տարածքային բաժնի պետն ազատվել է աշխատանքից:

## 2.4. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն

<u>**Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակաշրջանը՝**</u> 2006-2007թթ.:

<u>**Վերահսկողության արդյունքներով արձանագրվել է՝**</u>

*1. Պահպանման ծախսեր*

ա) Համաշխարհային բանկի վարկային միջոցների հաշվին ձեռք բերված 13.1տ ճանապարհային ներկերը չօգտագործվելու պատճառով դարձել են ժամկետանց և օգտագործման համար ոչ պիտանի: Պատճառված վնասը կազմում է՝ 11,918.3 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

բ) 4908 հատ ճանապարհային նշանները և 10024 գծ/մետր երկաթյա ցինկապատ ձողերը նույնպես չեն օգտագործվել այն դեպքում, երբ դրանց անվճար տրամադրումը կապալառուներին կհանգեցներ 62,548.3 հազ. դրամի չափով բյուջետային միջոցների տնտեսման (անարդյունավետ ծախս):

*2. «Մետրոպոլիտենի նորոգման մեխանիկական» ՓԲԸ*

Ճանապարհային շինարարության բնագավառում նախագծով և պայմանագրով նախատեսված 4մմ փոխարեն փաստացի տեղադրվել են 3մմ հաստությամբ մետաղական արգելափակոցներ, որոնց գների տարբերությունը չհաշվարկելու հետևանքով պետական բյուջեից ավելի է վճարվել 6,205.2 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

*3. Պետական սեփականության կառավարում և օգտագործում*

ա) «Վարչատնտեսական» ՓԲ ընկերությունը 2006-2007թթ. ընթացքում նախարարության համար իրականացրել է լրացուցիչ գործառնական ծախսեր: Արդյունքում ընկերության ծախսերը մեծացել են, իսկ շահույթը՝ նվազել, որն էլ անդրադարձել է պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի չափին: Ճշգրտված հաշվարկի արդյունքում առաջացել է 6,686.0 հազ. դրամի չափով լրացուցիչ շահաբաժին, որը ենթակա է վերականգնման:

Նալբանդյան 28 հասցեում ընկերության կողմից վարձակալության հանձնված տարածքների վարձավճարի գծով 01.05.08թ.-ի դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ առաջացել է 16,671.9 հազ. դրամի պարտավորություն, որը ենթակա է վերականգնման:

բ) «Տրանսնախագիծ» ՓԲԸ – մինչ մասնավորեցումը (01.09.07թ.) 2007 թվականի տնտեսական գործունեության արդյունքում ընկերությունն ունեցել է զուտ շահույթ, սակայն ՀՀ պետական բյուջե 2,246.6 հազ. դրամի շահաբաժին չի վճարել, որը ենթակա է վերականգնման:

գ) «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ – 2006-2007թթ. ընթացքում նախարարության համար իրականացվել են լրացուցիչ գործառնական ծախսեր: Արդյունքում՝ ընկերության ծախսերը մեծացել են, իսկ շահույթը՝ նվազել, որն էլ անդրադարձել է պետական բյուջե վճարման ենթակա շահաբաժնի չափին: Ճշգրտված հաշվարկի արդյունքում առաջացել է 1,961.9 հազ. դրամի չափով լրացուցիչ շահաբաժին, որը ենթակա է վերականգնման:

դ) «Նամականիշ» ՓԲԸ – մինչև 2006թ.-ի սեպտեմբերի 20-ը ընկերությունը զուտ շահույթից պետական բյուջե (30.06.08թ.-ի դրությամբ) չի վճարել 80,829.4 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը՝***

- *Ձեռնարկել միջոցներ Համաշխարհային բանկի վարկի հաշվին 2004թ. ձեռք բերված 11,918.3 հազ. դրամի 13.1 տ ներկերն օգտագործման համար ոչ պիտանի դառնալու հետևանքով պետությանը հասցված վնասը վերականգնելու ուղղությամբ:*
- *Պարբերաբար իրականացնել բյուջեի եկամուտների հավաքման մասով նախարարությունում առկա տեղեկատվության և համապատասխան գանձապետական հաշիվներին մուտքագրված եկամուտների համեմատություն, անհամապատասխանությունների դեպքում, միջոցներ ձեռնարկել դրանց պատճառների բացահայտման և վերացման ուղղությամբ:*
- *Ձեռնարկել միջոցներ վերահսկողության ընթացքում շահաբաժնի գծով հաշվարկված և լրացուցիչ վճարման ենթակա գումարների՝ պետական բյուջե փոխանցելու ուղղությամբ:*

***ՀՀ ֆինանսների նախարարությանը՝***

*2009թ. պետական բյուջեում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության ֆինանսավորումը պակաս նախատեսել և ֆինանսավորել ՀՀ կառավարության 13.01.05թ. թիվ 8-Ա որոշմամբ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանն ամրացված 4908 հատ ճանապարհային նշանների և դրանց 10024 գծ/մետր երկաթյա ցինկապատ ձողերի ընդհանուր արժեքի՝ 62,548.3 հազ. դրամի չափով: «Պետական նշանակության ավտոճանապարհների պահպանում և շահագործում» ծրագրի իրականացման նպատակով «Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ում անցկացվող մրցույթների արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպությունների հետ կնքվող պայմանագրերում նախատեսել վերոգրյալ ճանապարհային նշանների անվճար տրամադրման պայմանը:*

<u>**Ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ**</u>

ՀՀ վերահսկիչ պալատի արձանագրած խախտումներին ի պատասխան ՀՀ ՎՊ հասցեագրված ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 17.12.2008թ. N-01-09/6406 և 05.02.2009թ. N-01-09/585 գրությունների համաձայն`

*1. Պահպանման ծախսերի մասով.*

- նախարարության համապատասխան ստորաբաժանմանը հանձնարարվել է 2009թ. անցկացվող մրցույթների արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպությունների հետ կնքվող պայմանագրերում նախատեսել 62,548.3 հազ. դրամ արժողությամբ ճանապարհային նշանների և ցինկապատ ձողերի անվճար տրամադրման պայմանը:
- 13.1 տ ճանապարհային ներկերն օգտագործման համար ոչ պիտանի դառնալու հետևանքով պետությանը հասցված վնասը 11,918.3 հազ. դրամի չափով վերականգնվել է ՀՀ պետական բյուջե:

*2. «Մետրոպոլիտենի նորոգման մեխանիկական» ՓԲԸ կողմից* Պատվիրված և փաստացի տեղադրված մետաղական արգելափակոցների չհաշվարկված 6,207.2 հազ. դրամի գնային տարբերությունը ամբողջությամբ վերականգնվել է պետական բյուջե:

*3. Պետական սեփականության կառավարման և օգտագործման մասով* պետական բյուջե լրացուցիչ վճարման ենթակա շահաբաժնից 10.02.09թ. դրությամբ վերականգնվել է`

- «Վարչատնտեսական» ՓԲԸ` 3,000.0 հազ. դրամ, (մնացած` 3,686.0 հազ. դրամը ըստ ժամանակացույցի կվերականգնվի մինչև 2009 թվականի մայիս ամիսը),
- «Տրանսնախագիծ» ՓԲԸ` 2,246.6 հազ. դրամ,
- «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ` 1,961.9 հազ. դրամ,
- 2009 թվականի հունվարի 15-ին ՀՀ կառավարությունն ընդունել է թիվ 55-Ա որոշումը` «Նամականիշ» ՓԲԸ լուծարելու մասին: Ընկերության գծով արձանագրված 80.8 մլն դրամ շահաբաժինը կվերականգնվի «Նամականիշ» ՓԲԸ լուծարման գործընթացում:

«Վարչատնտեսական» ՓԲԸ-ն տարածքի վարձավճարի գծով արձանագրված 16,671.9 հազ. դրամից արդեն պետական բյուջե է վերականգնել 10,432.8 հազ. դրամ:

## 2.5. ՀՀ առողջապահության նախարարություն

<u>**Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակաշրջանը`**</u> 2006-2007թթ. և 2008թ. 9 ամիս:
<u>**Վերահսկողության արդյունքներով արձանագրվել է`**</u>

*1. Պահպանման ծախսեր*

Կապիտալ շինարարություն իրականացնելու համար բյուջետային միջոցների հաշվին «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի սանիտարական կարանտինային կետի տեղակայման և վերակառուցման աշխատանքները կատարվել են թերություններով և խախտումներով, թույլ է տրվել ծավալային հավելագրում, գումարով` 310.6 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

*2. Կենտրոնացված կարգով դեղորայքի ձեռք բերում*

- Տեխնիկական բնութագրի պիտանիության ժամկետների պահանջներին չհամապատասխանող 126411 սրվակ ինսուլինի գնման դիմաց վճարվել է 632,055.0 հազ. դրամ, այնինչ պիտանիության ժամկետին չհամապատասխանելու պարագայում պետք է վճարվեր 556,849.5 հազ. դրամ: Ավելի վճարված 75,205.5 հազ. դրամը դիտարկվում է որպես անարդյունավետ ծախս:

• Կենտրոնացված կարգով դեղորայքի ձեռք բերման պայմանագրերի կողմ հանդիսացող ընկերությունների ներկայացրած դեղորայքի ձեռք բերման փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվել է, որ մեծածախ շուկայական գների որոշման համար շուկան ուսումնասիրող աշխատանքային խմբի կողմից պայմանագրերի պահանջները պատշաճ մակարդակով չկատարելու, շուկան չուսումնասիրելու հետևանքով 2007թ. երկրորդ կիսամյակում և 2008թ. 9 ամիսների ընթացքում կնքված համաձայնագրերի շրջանակներում ձեռք բերված 17 անվանում դեղորայքի համար շուկայում առկա նվազագույն գներից ավելի է վճարվել 200,008.0 հազ. դրամ, որը դիտարկվում է որպես անարդյունավետ ծախս:

• Դեղերի գների ԱՄՆ դոլարով համադրումից պարզվել է, որ 2006թ.-ի գների համեմատ 2007թ.-ին տեղի է ունեցել 211,830.3 հազ. դրամի չափով գների թանկացում, իսկ 2008թ.-ի 9 ամիսներին՝ 241,907.8 հազ. դրամի չափով: Միայն մարդկային ինսուլինի մասով կատարվել է 167,420.35 հազ. դրամի թանկացում, 2006թ. այն ձեռք է բերվել մեկ սրվակը 9.9 ԱՄՆ դոլարով, իսկ 2008թ. մեկ սրվակը՝ 16.3 ԱՄՆ դոլարով: Ընդ որում, հարկ է նշել, որ ինսուլինը 2006թ.-ին հանրապետություն է ներմուծվել մեկ սրվակը 7.54 ԱՄՆ դոլարով, իսկ 2008թ.-ին մեկ սրվակը՝ 7.08 ԱՄՆ դոլարով: Արդյունքում՝ կատարվել է 453,738.1 հազ. դրամի չափով անարդյունավետ ծախս:

• 2006թ. «Նատալի ֆարմ» ՍՊ ընկերության հետ կնքված պայմանագրով գրիպի դեմ նախատեսված պատվաստանյութը ժամանակին չմատակարարելու հետևանքով, նախարարության կողմից վաճառողից չի հաշվարկվել և գանձվել ուշացած յուրաքանչյուր օրվա համար տույժ, մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0.01 %-ի չափով, գումարով՝ 369.9 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

• 2006-2007թթ. և 2008թ. 9 ամիսների ընթացքում մարդասիրական օգնությամբ ստացված դեղորայքից 21 անվանում, գումարով՝ 60,761.4 հազ. դրամ նախարարության կողմից ժամանակին չի բաշխվել և օգտագործվել: Արդյունքում, ստացված դեղորայքը մնալով պահեստում կորցրել է պիտանիության ժամկետը և դարձել օգտագործման համար ոչ պիտանի: Ծախսը դիտարկվում է որպես անարդյունավետ:

*3. Կենտրանացված կարգով նորագույն բժշկական սարքավորումների և գործիքների ձեռք բերում*

• 2006 - 2007թթ. ընթացքում «Նաիրի» ԲԿ ՓԲԸ հանձնված սարքավորումների ամսական վարձավճարը՝ գումարով 1,137.2 հազ. դրամ, 2008 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ համաձայն պայմանագրի պետք է վճարվեր 18,477.1 հազ. դրամ, սակայն վճարվել է 11,084.9 հազ. դրամ, կամ 60%-ը: Լրացուցիչ վճարման ենթակա 7,392.2 հազ. դրամը ենթակա է վերականգնման պետական բյուջե:

• 2006-2007թթ. ընթացքում «Պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի կենտրոն» ՓԲԸ հանձնված սարքավորումների ամսական վարձավճարը՝ 128.6 հազ. դրամ, 2008 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ, համաձայն պայմանագրի պետք է վճարվեր 4,202.1 հազ. դրամ, սակայն վճարվել է 4,027.0 հազ. դրամ, կամ 95.8 %: Լրացուցիչ վճարման ենթակա 175.1 հազ. դրամը ենթակա է վերականգնման պետական բյուջե:

*4. Առողջապահական հեռուստահաղորդումների պատրաստում և հեռուստատեսությամբ հեռարձակում*

Պայմանագրով նախատեսված հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման ծառայությունները կատարվել են պակաս ծավալով, սակայն հավելագրման արդյունքում 2006, 2007թթ. և 2008թ. 9 ամիսների ընթացքում «ԱՎՏ ստուդիա» ՍՊ ընկերությանը վճարվել է 13,781.2 հազ. դրամ ավելի գումար, որը ենթակա է վերականգնման:

*5. Պետական բաժնեմաս ունեցող ընկերություններ*

Տարեկան զուտ շահույթը սխալ հաշվարկելու հետևանքով պետական բյուջե չի վճարվել 7,701.3 հազ. դրամի շահաբաժին, որը ենթակա է վերականգնման:

*6. Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ*

05.12.2008թ. Վերահսկիչ պալատի նախագահի թիվ 54 հրամանի հիման վրա «Արմամաքս» ՍՊ ընկերությունում իրականացված հանդիպակաց ստուգման ընթացքում պարզվել է, որ ընկերության կողմից 2007թ. 4-րդ եռամսյակում պետական պատվերի շրջանակներում կատարված կոմպյուտերային տոմոգրաֆով ոչ ինվազիվ անգիոգրաֆիա 336 հետազոտություններից թվով 76-ը, կամ 22.6%-ն է համապատասխանել ներկայացվող պահանջներին: Պետական բյուջեից հատկացված միջոցների ծախսը չի ապահովել ծրագրով ակնկալվող արդյունավետությունը:

*7. Հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական միջոցառումներ*

- Խոլերայի հայտնաբերման նպատակով մանրէաբանական հետազոտության համար ձեռք բերված և օգտագործված նյութերը, ըստ գործող նորմատիվների, չեն բավարարում կատարողականներով ցույց տրված հետազոտությունների քանակին, որի արդյունքում ավելի է հաշվարկվել և վճարվել 76,460.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:
- ՀՀ ԱՆ ՊՀՀ տեսչության տարածքային չորս փորձագիտական կենտրոնների ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է չկատարված հետազոտությունների դիմաց ավելի հաշվարկված և վճարված 44,652.2 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***ՀՀ կառավարությանը՝***

*Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2005-2008թթ. բժշկական կազմակերպությունների տեխնիկապես վերազինման հետ շուկայում հայտնվել են բազմաթիվ ընկերություններ, որոնք ունեն բոլոր հնարավորությունները, և կարող են մատուցել դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների գծով ծառայություններ, անհրաժեշտ է վերանայել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասով լիազոր մարմնին վերապահված իրավասության շրջանակներում հաստատված մեկ անձից կատարվող գնումների անվանացանկը և անվանացանկից պակասեցնել դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունները: Այնուհետ՝ ապահովել մրցակցային, արդյունավետ, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով գնման գործընթաց:*

***ՀՀ առողջապահության նախարարությանը՝***

*Ձեռնարկել միջոցառումներ արձանագրված թերությունները վերացնելու ուղղությամբ, մասնավորապես՝*

- *բացառել պայմանագրերի տեխնիկական բնութագրերով սահմանված պիտանիության ժամկետներին չհամապատասխանող դեղորայքի ձեռք բերումը,*
- *տարեկան ծախսերը պլանավորելիս հաշվի առնել պահեստում առկա ապրանքային մնացորդը,*
- *մշակել և կիրառել դեղորայքի մեծածախ շուկայական գների որոշման այնպիսի մեխանիզմներ, որոնք կբացառեն շուկայում առկա նվազագույնը գերազանցող գներով դեղորայքի ձեռք բերման դեպքերը,*
- *կանոնակարգել դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններն ըստ տեխնիկական բնութագրերի, ինչպես նաև պատշաճ վերահսկողություն իրականացնել նման հետազոտությունների գծով իրականացվող աշխատանքների նկատմամբ:*

**<u>Ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ</u>**

ՀՀ վերահսկիչ պալատի արձանագրած խախտումներին ի պատասխան ՀՀ առողջապահության նախարարի 25.03.20098թ. թիվ  գրությամբ տեղեկացվել է.

*1. Պահպանման ծախսեր*

«Զվարթնոց» օդանավակայանի սանիտարական կարանտինային կետի տեղակայման և վերակառուցման ժամանակ 310.6 հազ. դրամի հավելագրումը կվերականգնվի կապալառու կազմակերպության կողմից:

*2. Կենտրոնացված կարգով դեղորայքի ձեռք բերում*

• Արձանագրված 789,713.0 հազ. դրամի անարդյունավետ ծախսի կապակցությամբ ՀՀ առողջապահության նախարարության ձեռնարկած միջոցառումների արդյունքում մատակարարները անհատույց նախարարությանը տրամադրել են 922,000.0 հազ. դրամի ինսուլին, ինսուլինային փամփուշտ, ինսուլինային գրիչ և ասեղ:

• Գրիպի դեմ նախատեսված պատվաստանյութը ժամանակին չմատակարարելու համար «Նատալի Ֆարմ» ՍՊ ընկերությունից չգանձված 369.9 հազ. դրամի տույժը կվերականգնվի պետական բյուջե:

*3. Կենտրանացված կարգով նորագույն բժշկական սարքավորումների և գործիքների ձեռք բերում*

Չվճարված 7,392.2 հազ. դրամ և 175.1 հազ. դրամ վարձավճարները, ինչպես նաև 1,367.7 հազ. դրամ տույժը «Նաիրի» ԲԿ ՓԲԸ և «Պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի կենտրոն» ՓԲԸ կողմից համապատասխանաբար վերականգնվել են պետական բյուջե:

*4. Առողջապահական հեռուստահաղորդումների պատրաստում և հեռուստատեսությամբ հեռարձակում*

ՀՀ առողջապահության նախարարությունը կձեռնարկի միջոցներ՝ հեռուստահաղորդումների պատրաստման և հերառձակման համար ավելի վճարված 13,781.0 հազ. դրամը «ԱՎՏ ստուդիա» ՍՊ ընկերությունից վերականգնելու ուղղությամբ:

*5. Պետական բաժնեմաս ունեցող ընկերություններ*

ՀՀ առողջապահության նախարարությունը կձեռնարկի միջոցներ՝ բաժնետիրական ընկերությունների կողմից չվճարված 7,701.3 հազ. դրամի շահաբաժինը պետական բյուջե վերականգնելու ուղղությամբ:

*6. Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ*

Ծրագրի անարդյունավետությունը վերացնելու նպատակով ձեռնարկվում են համապատասխան միջոցներկոմպյուտերային տոմոգրաֆով ոչ ինվազիվ անգիոգրաֆիա հետազոտության գները դիֆերենցելու ճանապարհով, ընդ որում, հաշվի առնելով գների փոփոխությունը, ՀՀ առողջապահությունը պատրաստվում է նվազեցնել հետազոտությունների արժեքը:

*7. Հիգիենիկ  և հակահամաճարակային փորձագիտական միջոցառումներ*

• Խոլերայի հայտնաբերման նպատակով մանրէաբանական հետազոտության համար ավելի է հաշվարկված և վճարված 76,460.0 հազ. դրամն ամբողջությամբ լրացվել են Փորձագիտական կենտրոնների կողմից:

• Չկատարված հետազոտությունների դիմաց ավելի վճարված 44,652.2 հազ. դրամը 2009 թվականին անհատույց կարգով կվերականգնվի 17 «Փործագիտական կենտրոն» ՊՈԱԿ կողմից:

## 2.6. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի մաքսային ծառայություն

**Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակաշրջանը՝** 2007թ. և 2008 թ.-ի 7 ամիսներ:
**Վերահսկողության իրականացման ձևը՝** դիտարկում և վերլուծություն:

Հաշվի առնելով ՀՀ կառավարության կառուցվածքում կատարված փոփոխությունները, վերահսկվող օբյեկտում դեռևս ընթացող վերակազմավորման ու գործառույթների վերաբաշխման գործընթացը, Վերահսկիչ պալատի խորհուրդը համաձայնություն է տվել վերահսկողությունն իրականացնել դիտարկման և վերլուծության ձևով, որով ընդգրկվել են մաքսային կոմիտեի կենտրոնական ապարատի առանձին ստորաբաժանումների գործառույթները և գործընթացները:

Վերահսկողության արդյունքներով բացահայտվել են ռիսկեր՝ ներմուծված ապրանքների նկատմամբ արտոնությունների կիրառման, մաքսային ձևակերպումների ժամանակ մաքսային ռեժիմի սահմանման՝ հատկապես ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածով գործարքի գնի մեթոդի կիրառման օրինականության, «Ժամանակավոր ներմուծում վերամշակման համար» և «Ժամանակավոր արտահանում վերամշակման համար» ռեժիմով, մաքսային պահեստներում առգրավված ապրանքների ձևակերպման և այլ բնագավառներում:

Դիտարկման և վերլուծության արդյունքներով, Վերահսկիչ պալատի 2009 թվականի տարեկան ծրագրով նախատեսվել է վերահսկել Արարատյան մաքսատունը, որը հանրապետության արտաքին առևտրի ապրանքաշրջանառության գերակշիռ ծավալների և մաքսային վճարների հավաքագրման տեսանկյունից համարվել է առավել ռիսկային:

## 2.7. «Հայաստանի Հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

**Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակաշրջանը՝** 2006-2007թթ. և 2008թ. I կիսամյակ:
**Վերահսկողության արդյունքներով արձանագրվել է՝**

1. Հանրային հեռուստառադիոընկերության կանոնակարգը որպես իրավական ակտ բացակայում է, այսինքն՝ չի հաստատվել ՀՀ Ազգային ժողովի կողմից:
2. Չի մշակվել և չի սահմանվել Հանրային հեռուստառադիոընկերության ֆինանսական միջոցների օգտագործման կարգը:
3. ՀՀ 2006-2008 թթ. պետական բյուջեում որպես Բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչ նախատեսվել և հանդես է եկել Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը, սակայն այդ անվամբ պետական հիմնարկ չկա, և գանձապետարանը չպետք է գործարքները կատարեր «Հանրային հեռուստառադիոընկերություն» պետական հիմնարկի կնիքով:
4. Ներկայացված ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի կատարման մասին ՀՀ կառավարության հաշվետվության թվերի և փաստացի ծախսերի միջև արձանագրվել է անհամապատասխանություն, այսինքն՝ կա թվերի անարժանահավատություն: 2007թ.-ին ճշտված ծրագրով կապիտալ ծախսերի կատարման նպատակով նախատեսվել և հատկացվել է 158,983.7 հազ. դրամ, որը Հեռուստաընկերության կողմից չի ծախսվել, բայց 2007թվականին Ծախսերի հաշվետվությունում ցույց է տրվել 100% կատարողական:
5. Հեռուստաընկերությունը չի առաջնորդվել «Գնումների մասին» ՀՀ օրենքով:

**6.** 2006-2007թթ. և 2008 թ. առաջին կիսամյակում՝ Հեռուստահաղորդումների հեռարձակումը հանրապետության շրջաններ նախատեսված 19.5 ժամի (դրանից՝ 18 ժամը հեռարձակվում է ՀՀ պետական բյուջեի հատկացումների հաշվին) փոխարեն իրականացվել է միջին հաշվով օրական 18.3 ժամ, այսինքն՝ պլանավորվածից 1.2 ժամով պակաս:

**7.** Բյուջետային հայտերը որոշ դեպքերում կազմվել են ոչ հիմնավոր: Մասնավորապես՝ ավելի է հաշվարկվել 2006 թվականին «Հեռուստահաղորդումների հեռարձակում» հոդվածով 83,979.3 հազ. դրամ և 2007թվականին՝ «Հեռուստահաղորդումների և ֆիլմերի ձեռքբերում» հոդվածով՝ 27,000.0 հազ. դրամ:

**8.** Կապիտալ նորոգման աշխատանքները կազմակերպվել են առանց քաղաքաշինական փաստաթղթերի ձևակերպման, կառուցվող օբյեկտների համար պահանջվող նախագծի կամ ընթացիկ նորոգման համար՝ նախագծի մշակման: Կապիտալ նորոգման աշխատանքների ընդունման նորմերի մասով բացակայում են աշխատանքների ավարտի փաստագրման ակտերը:

**9.** «Հայաստանի Հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ սեփական միջոցներով տանիքի վերակառուցման աշխատանքները կազմակերպվել են ինքնակամ, առանց համապատասխան լիցենզիայի առկայության:

**10.** Հեռուստաընկերությունը 2006-2008 թթ. ընթացքում վարկային և պարտքի տարաժամկետ մարման պայմանագրեր է կնքել, գրավ դնելով դրամական հոսքեր և ձեռք բերվող գույք: Պետք է նշել, որ նմանատիպ գործարքներ իրականացնելու դեպքում Հեռուստաընկերությունը որևէ սահմանափակում չունի, որը նպատակահարմար է վերացնել, հաշվի առնելով, որ Հեռուստաընկերությունը ստրատեգիական նշանակության կարևոր կազմակերպություն է:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***ՀՀ կառավարությանը՝***

- ՀՀ տվյալ տարվա պետական բյուջեում բաժնետիրական ընկերություններին ՀՀ պետական բյուջեից հատկացվող դրամաշնորհի գումարերն արտացոլել ոչ թե մեկ տողով, այլ՝ տալ «բացված», այսինքն՝ ծախսերը տրվեն ըստ տնտեսագիտական հոդվածների, ինչպես բոլոր պետական հիմնարկներում, և հաշվետվությունը պահանջել նույն ձևով:
- ՀՀ կառավարության 18.06.2002թ. թիվ 48 որոշման մեջ կատարել փոփոխություններ, պահանջելով բաժնետիրական ընկերություններից, որոնց տրամադրվում են պետական դրամաշնորհներ, որպեսզի կատարվի՝ ա) պետական բյուջեից հատկացվող միջոցների մուտքի և ելքի առանձին հաշվառում, (այդ թվում՝ ըստ եկամուտների և ծախսերի նախահաշվի հոդվածների): բ) Ոչ նպատակային ծախս հայտնաբերելու դեպքում վերականգնել գումարը համապատասխան հաշվին, միաժամանակ այդ գումարի չափով կրճատելով ընթացիկ տարվա ֆինանսավորումը: գ) Ընթացիկ բյուջետային տարում չօգտագործված գումարներ հայտնաբերելու դեպքում՝ այդ գումարի չափով կրճատել ընթացիկ տարվա ֆինանսավորումը: դ) Բյուջետային դրամաշնորհային գումարները չծախսելու դեպքում տարվա վերջում վերադարձնել բյուջե:
- Քանի որ առկա է հակասություն «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ կետի և ՀՀ տվյալ տարվա բյուջեի մասին ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 12-րդ կետի միջև (Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը ) առաջարկվում է հանել «ՀՀ 2009թվականի բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 12 կետը և հետագայում բացառել նման կետի ընդունումը:
- «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում կատարել լրացումներ: Մասնավորապես՝ ավելացնել՝ 1. Սահմանափակել Հեռուստաընկերության կողմից ներգրավվող փոխառու միջոցների ծավալները: 2. Հեռուստաընկերությունը առանց Խորհրդի որոշման կարող է կնքել վարկային, պարտքի մարման տարաժամկետ, ֆակտորինգային և այլ պարտավորություններ առաջացնող պայմանագրեր՝ 10.0 մլն դրամի սահմաններում:

## 2.8. ՀՀ Սյունիքի մարզպետարան

<u>**Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակաշրջանը՝**</u> **2006-2007թթ.**

<u>**Վերահսկողության արդյունքներով արձանագրվել է՝**</u>

*1. Քաղաքաշինության և բնակարանային կոմունալ տնտեսության բնագավառ*

Քաղաքաշինության բնագավառում իրականացրած ծրագրերը կազմել են 1,830,640.0 հազ. դրամ /ներառյալ՝ պահուստային ֆոնդը/: Իրականացվել են 852,584.9 հազ. դրամի հսկիչ չափագրման աշխատանքներ, որի արդյունքում պարզվել է.

- Շինարարական աշխատաքներում թույլ է տրվել 94,535.5 հազ. դրամ ծավալային հավելագրում, որը ենթակա է վերականգնման (աղյուսակ 1):

աղյուսակ1 հազ.դրամ

- Շինմոնտաժային աշխատանքների նախահաշվային թանկացում՝ 39,462.0 հազ. դրամ[1]: Ծախսը դիտարկվում է որպես անարդյունավետ:
- Կատարվել են անորակ աշխատանքներ՝ 11,777.1 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:
- 2008թ. պայմանագրերով նախատեսված, սակայն 2007 թվականին որպես լրացուցիչ կատարված կատարողականով ցույց տրված և վճարված աշխատանքների գումարները չեն պակասեցվել 2008թ. պայմանագրերից՝ 1,707.9 հազ. դրամ: Ծախսը դիտարկվում է

| Հ/Հ | Օբյեկտի անվանումը | Կապալառու | Հավելագրում | Վերականգնվել է | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Պետ. բյուջե | Աշխատողով |
| 1 | Կապանի N13 դպրոց՝ 104,288.5 | Կապանի «Նորոգշին» ԲԲԸ | 11,412.5 | 515.6 | 10,896.9 |
| 2 | Կապանի N11դպրոց՝ 61,130.3 | Կապանի «Նորոգշին» ԲԲԸ | 5,690.1 | 1,462.0 | 5,688.6 |
| 3 | Կապանի սպորտ դպրոց՝ 130,893.4 | Կապանի «Նորոգշին» ԲԲԸ | 16,560.12 | 2,616.2 | 15,330.4 |
| 4 | Սեղրու կոյուղագծի կոլեկտոր՝ 67,999.6 | Կապանի «Նորոգշին» ԲԲԸ | 8,177.6 | 1,125.7 | 7,051.9 |
| 5 | Սեղրու ներքին կոյուղու ցանց՝102,809.0 | Կապանի «Նորոգշին» ԲԲԸ | 6,685.6 | 987.8 | 5,697.8 |
| 6 | Կապանի N 3 կրթահամալիր՝23,855.8 | «Արշ-Արա» ՍՊԸ | 2,172.2 | 147.8 | 2,024.4 |
| 7 | Կապանի բնակելի շենքերի լանջավոր տանիքներ՝46,500.0 | «Արշ-Արա» ՍՊԸ | 7,468.6 | 1,66.5 | 6,402.05 |
| 8 | Խոտ գյուղի դպրոց՝32,312.1 | «Սերժ մկրչյան» ՍՊԸ | 2,235.2 | 756.7 | 1,478.5 |
| 9 | Քարահունջի դպրոց՝123,299.4 | «Գորոս» ՍՊԸ | 2,326.9 | 157.7 | 2,169.3 |
| 10 | Որոտան գյուղի դպրոց՝22,635.9 | «Ն.Ռ.Վ.Ա.Դ.» ՍՊԸ | 8,306.2 | 1,562.4 | 6,743.4 |
| 11 | Սիսիանի N 2 դպրոց՝18,550.6 | «Ն.Ռ.Վ.Ա.Դ.» ՍՊԸ | 803.1 | 27.7 | 775.4 |
| 12 | Շաքեի դպրոց՝98,705.9 | «Հայր և որդի Դադաշյաններ» ՍՊԸ | 1,808.9 | 1,445.9 | 363.0 |
| 13 | Ախլաթյան գյուղի դպրոց՝71,475.7 | Սիսիանի «Նորոգշին» ԲԲԸ | 1,200.0 | 41.1 | 1,158.9 |
| 14 | Սառնակունք գյուղի դպրոց՝49,157.9 | Սիսիանի /Նոր Բակ/ «Նորոգշին» ԲԲԸ | 806.6 | 0.5 | 806.1 |
| 17 | Շվանիձորի դպրոց՝21,771.7 | «Մեղրու ՃՇՇՁ» | 1,056.5 | 384.2 | 672.3 |
| 18 | ք. Ագարակի մշակույթի պալատ՝48,505.0 | «Մեղրու ՃՇՇՁ» | 160.6 | 160.6 | |
| 19 | Սիսիանի Գետափ թաղամասի բարեկարգում՝76,612.0 | «Սիսիանի Ճանշին» ՍՊԸ | 6,214.7 | 100.2 | 6,114.5 |
| 20 | Գորիսի N 5թաղամասի գազիֆիկացում՝11,198.4 | «Ադունցներ» ՍՊԸ | 2,152.2 | | 2,152.2 |
| 21 | Արավուս, Խնածախ համայնքների գազիֆիկացում՝89,018.3 | «Ադունցներ» ՍՊԸ | 8,981.8 | 13.3 | 8,968.5 |
| 22 | Ներքին Հանդ գյուղի դպրոց՝5,621.2 | «Կապավոր» ԱԿ | 316.1 | 37.6 | 278.5 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | 94,535.5 | 11,709.5 | 84,772.6 |

որպես անարդյունավետ:

- Սիսիանի Որոտան գյուղի դպրոցին հիմնանորոգման աշխատանքների պայմանագրով (ընդհանուր գումարը՝ 105,487.1 հազ. դրամ) նախատեսվել էր տանիքի վերակառուցման աշխատանքներ՝ գումարով 7,171.5 հազ. դրամ այն դեպքում, երբ այդ աշխատանքներն արդեն իսկ կատարվել էին 2000թ. «Փրկեցեք երեխաներին» կազմակերպության կողմից: Ծախսը դիտարկվում է որպես անարդյունավետ:
- Սառնակունք գյուղի դպրոցի հատակը 2008թ. ծրագրով նախատեսվել էր փոխել 100%, սակայն փոխելու ենթակա էր 10%-ը, արդյունքում կատարվել է 2,100.0 հազ. դրամի անարդյունավետ ծախս:
- Շաքի գյուղի դպրոցում նախագծով և պայմանագրով նախատեսված աշխատանքների անհիմն կատարված փոփոխության հետևանքով չի կատարվել նախագծով և պայմանագրով նախատեսված ցինկապատ թիթեղով պատուհանների հարթակների կառուցումը: Դրա պատճառով ներթափանցած անձրևաջրերի հետևանքով քանդվել է պատերի սվաղը, թափվել է ներկը, դասասենյակներում մանրահատակի մի մասը, և ամբողջովին փչացել են նոր տեղադրված փայտե պատուհանագոգերը: Արդյունքում 2,040.0 հազ. դրամի չափով պատճառվել է վնաս: Ծախսը դիտարկվում է որպես անարդյունավետ:
- ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորված թվով 32 օբյեկտներում համապատասխան ընկերությունների կողմից շինարարական աշխատանքների նկատմամբ իրականացրած տեխնիկական հսկողությունը կրել է ձևական բնույթ:
- Նույն օբյեկտներում չի իրականացվել հեղինակային հսկողություն համապատասխան ընկերությունների կողմից:
- Մարզային քաղաքաշինական պետական տեսչության կողմից չեն արձանագրվել ինչպես նախագծանախահաշվային փաստաթղթերից շեղման, այնպես էլ՝ ծավալային հավելագրման դեպքեր:

*2. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից Սյունիքի մարզպետարանին 2006-2007 թվականներին հատկացված միջոցների վերաբերյալ*

- Մեղրու տարածաշրջանի 18 պոմպակայանների հիմնանորոգման աշխատանքներում (հատկացված գումարը՝ 26,700.0 հազ. դրամ) թույլ է տրվել 2,611.4 հազ. դրամի ծավալային հավելագրում, որը ենթակա է վերականգնման:
- Լեռնաձոր գյուղի փայտյա տնակներում ժամանակավորապես բնակեցված ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման ծրագիրն իրականացվել է անարդյունավետ: Այսպես.

2004թ. նոյեմբերի 11-ի ՀՀ կառավարության թիվ 1607-Ն որոշմամբ նախատեսվել էր լուծել 66 ընտանիքների բնակարանային խնդիրը՝ հատկացնելով 240,700.0 հազ. դրամ:

Հաշվարկների հիմքում դրվել էր.

| | |
|---|---|
| մեկ սենյականոց բնակարան՝ | 5.800 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ |
| երկու սենյականոց բնակարան՝ | 6.600 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ |
| երեք սենյականոց բնակարան՝ | 8.800 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: |

2008թ. ապրիլի 1-ի դրությամբ ավարտված էր 10 բնակելի շենք, իսկ 21-ը՝ անավարտ: 240,700.0 հազ. դրամից հատկացվել էր 108,000.0 հազ. դրամ, որից 66,631.0 հազ. դրամը

[1] նախագծային կազմակերպությունների կողմից նախատեսված էր տեղադրել եվրոպական արտադրությանը և որակին համարժեք առավել քանի պրոֆիլներով մետալոպլաստե դռներ և պատուհաններ, սակայն դպրոցներում փաստացի տեղադրվել են թուրքական արտադրության առավել էժան պրոֆիլներով պատրաստվածները:

ծախսվել էր այլ նպատակներով: Կառավարության կողմից ծրագրի ժամկետը սահմանվել է մեկ տարի: Կատարված ծախսը դիտվում է որպես անարդյունավետ:




գյուղ Լեռնածոր

- Սյունիքի մարզի սահմանամերձ գյուղերում (Սրաշեն, Շամբ, Լծեն, Վերին Շիշկերտ) բնակելի շենքեր ձեռք բերելու և դրանք հետագայում որպես դպրոց վերակառուցելու նպատակով ՀՀ կառավարության 2006թ. մարտի 9-ի N 418-Ն որոշմամբ պահուստային ֆոնդից մարզպետարանին հատկացվել է 22,900.0 հազ. դրամ:

Ստուգման պահին արձանագրվել է, որ Սրաշենում որևէ բնակարան չի գնվել, Շամբում գնել են գործարանի շենք, միայն Վերին Շիշկերտում և Լծենում են գնել բնակարան: Միայն Լծեն համայնքում է դպրոցը վերակառուցվել: 2006 թվականից մինչ օրս մյուս երեք գյուղերում ծրագրի նպատակները չեն իրագործվել: Ծրագիրն իրականացվել է անարդյունավետ:

<u>**Ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ**</u>

ՀՀ վերահսկիչ պալատի արձանագրած խախտումներին ի պատասխան ՀՀ Սյունիքի մարզպետի 05.08.08թ. թիվ 05-2142, 03.12.08թ. թիվ 04-3193 և 10.01.09թ. թիվ 01/15/22-09 գրությունների համաձայն՝

*Քաղաքաշինության և բնակարանային կոմունալ տնտեսության բնագավառ.*

- Շինարարական աշխատանքներում թույլ տրված 94,535.5 հազ. դրամի ծավալային հավելագրումներն ամբողջությամբ վերականգնվել են, այդ թվում՝ 84,772.6 հազ. դրամը աշխատանքներով, իսկ 11,709.5 հազ. դրամը՝ պետական բյուջե վճարված գումարով:
- 11,777.1 հազ. դրամի կատարված անորակ աշխատանքներն ամբողջությամբ վերականգնվել է աշխատանքով:
- Սիսիանի Որոտան և Սառնակունք գյուղերի դպրոցների շինարարական աշխատանքների գծով կատարված համապատասխանաբար՝ 7,171.5 հազ. դրամ և 2,100.0 հազ. դրամ անարդյունավետ ծախսերի հետ կապված խնդրի լուծումն ընթացքի մեջ է:
- 2008թ. պայմանագրերով նախատեսված, սակայն 2007 թվականին որպես լրացուցիչ կատարված կատարողականով ցույց տրված և վճարված 1,707.9 հազ. դրամը նվազեցվել է 2008թ. ֆինանսավորումից:

## 2.9. ՀՀ Սյունիքի մարզի համայնքներ

<u>**Վերահսկողությունը ընդգրկվող ժամանակաշրջանը**</u>՝ 2006 - 2007 թվականներ:

<u>**Վերահսկողության արդյունքներով արձանագրվել է.**</u>

*1. ք. Կապան*

- Չի գանձվել 6,749.5 հազ. դրամ տեղական տուրք, որը ենթակա է վերականգնման:

- Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության գործարքներով չի վճարվել 19,926.0 հազ. դրամ վարձավճար, որը ենթակա է վերականգնման:
- Հողամասերի վարձակալությունից գոյացել է 3,885.0 հազ. դրամի տույժ, որը ենթակա է վերականգնման:
- Մինչև պետության կողմից հողամասերը համայնքին փոխանցելը, համայնքի կողմից հողամասերի օտարման արդյունքում 4,206.5 հազ. դրամ վճարվել է համայնքային բյուջե, որը ենթակա է վերականգնման պետական բյուջե:
- Կատարվել է 9,970.5 հազ. դրամի չհիմնավորված ծախս, որը ենթակա է վերականգնման:
- Կոմունալ ծառայությունների մատուցման համար «Մանսիր» ՍՊԸ ավելի է վճարվել 5,100.6 հազ. դրամ գումար, որը ենթակա է վերականգնման:
- Շինարարության բնագավառում արձանագրվել է 8,026.5 հազ. դրամի ծավալագնային հավելագրում, որը ենթակա է վերականգնման:
- Տարածքները վաճառվել են կադաստրային արժեքից և շուկայական գներից անհամեմատ ցածր գներով, ինչի հետևանքով արձանագրվել է 75,700.0 հազ. դրամի պակաս վճարված գումար:

*2. գ. Խալաջ*

- Հողամասերի՝ սահմանված մեկնարկային գնից ցածր գնով օտարման գործընթացում արձանագրվել է 644.4 հազ. դրամի խախտում, որը ենթակա է վերականգնման:
- Կատարվել է 1,433.0 հազ. դրամի չհիմնավորված ծախս, որը ենթակա է վերականգնման:
- Գազիֆիկացման աշխատանքների կատարման մասով արձանագրվել է 1,656.1 հազ. դրամի ծավալային հավելագրում, որը ենթակա է վերականգնման:
- «Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի» ընկերության կողմից 62.3 հա տարածք վարձակալվել է 1 քմ տարեկան ընդամենը 3.4 դրամ վարձավճարով, իսկ 10 հա՝ օգտագործվում է անօրինական:
- Արձանագրվել է 11.403.0 հազ. դրամի խախտում՝ երկաթյա խողովակները ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից պաշտոնապես հրապարակվածից անհամեմատ ցածր գներով վաճառելու պատճառով (530 մմ, 630 գ/մ, 1գ/մ՝ 5.5 հազ. դրամ): Վաճառքից գոյացած գումարից 965.0 հազ. դրամ չի մուտքագրվել համայնքային բյուջե, որը ենթակա է վերականգնման:
- 330.0 գ/մ խողովակների փաստացի բացակայության արդյունքում՝ համայնքային բյուջեին հասցվել է 7,788.0 հազ. դրամի վնաս, որը ենթակա է վերականգնման:

*3. գ. Սյունիք*

- «Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ և Քաջարանի պղձամոլիբդենային կոմբինատի կողմից 51.45 հա հողամասի անօրինական օգտագործման հետևանքով համայնքային բյուջեին հասցվել է 1,357.0 հազ. դրամի վնաս, որը ենթակա է վերականգնման:
- Չի գանձվել 432.5 հազ. դրամ տեղական տուրք, որը ենթակա է վերականգնման:
- Արձանագրվել է 120.0 հազ. դրամ գործուղման գումարների ավելի վճարման փաստ, որը ենթակա է վերականգնման:
- «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրով դրամարկղից հանվել, սակայն բնակչությանը չի վճարվել 1,035.0 հազ. դրամ գումար, որը ենթակա է վերականգնման:
- «Արմեն Սարմեն» ընկերությանը ֆոնդային բյուջեից որպես ֆինանսական օգնություն տրամադրվել է 4,000.0 հազ. դրամ, ինչպես նաև սանմաքրման և կոմունալ աշխատանքների կատարման համար նույն ընկերությանն առանց կատարողական ակտերի և փաստաթղթերի գումար վճարելու մասով արձանագրվել է 2,400.0 հազ. դրամի խախտում, որոնք ենթակա են վերականգնման:

*4. գ. Ագարակ*

- Մշակույթի տան տանիքի վերանորոգման համար ծախսվել է 4,780.0 հազ. դրամ, սակայն ստուգման պահին տանիք չի եղել, որը ենթակա է վերականգնման:
- Արձանագրվել է 160.1 հազ դրամ շինարարության հավելագրված գումար, որը ենթակա է վերականգնման:

*5. ք. Սիսիան*

- Մինչև պետության կողմից հողամասերը համայնքին փոխանցելը, համայնքի կողմից հողամասերի օտարման արդյունքում 1,677.9 հազ. դրամ վճարվել է համայնքային բյուջե, որը ենթակա է վերականգնման պետական բյուջե:
- Մշակույթի տան օտարման գործընթացում պակաս է վճարվել 5,000.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:
- ՀՀ տնտեսական դատարանի վճռով «Որոտանի կիրճ» ՓԲԸ կազմած միակողմ տեղեկանքների հիման վրա (տեղեկանքներում գումարային հաշվարկներ կան ծմռան ամիսներին կանաչապատման աշխատանքներ կատարելու վերաբերյալ) քաղաքապետարանից բռնագանձվել է 7,203.0 հազ. դրամ:
- Չի գանձվել 1,321.0 հազ. դրամ տեղական տուրք, որը ենթակա է վերականգնման համայնքային բյուջե:
- Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության գործարքներով չի վճարվել 8,374.6 հազ. դրամ վարձավճար, որը ենթակա է վերականգնման:
- Արձանագրվել է «Սիսիանի սանմաքրում» ընկերության կողմից վառելիքի նորմատիվների 2,975.9 հազ. դրամի չափով խախտման փաստ, որը ենթակա է վերականգնման:
- Շինարարության բնագավառում արձանագրվել է 7,700.0 դրամի ծավալային հավելագրում որը ենթակա է վերականգնման:
- Մանկապատանեկան սպորտդպրոցում աշխատավարձը 1,025.3 հազ. դրամով ավելի է վճարվել, որը ենթակա է վերականգնման:
- Արձանագրվել է 1,200.0 հազ. դրամի չափով աղբամանների և 1,433.0 հազ. դրամի չափով ցինկապատ թիթեղների պակասորդ, որը ենթակա է վերականգնման::
- Տարածքները վաճառվել են կադաստրային արժեքից և շուկայական գներից անհամեմատ ցածր գներով, ինչի հետևանքով արձանագրվել է 5,598.7 հազ. դրամի վնաս:
- Ալպօրինի շինությունների համար հաշվարկվել, սակայն չի գանձվել 1,800.0 հազ. դրամ տուգանք, որը ենթակա է գանձման:

*6. գ. Աղիտու*

- Հողամասերի վարձակալությունից գոյացած 534.7 հազ. դրամի տույժը չի վճարվել, որը ենթակա է վերականգնման:
- Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալությունից չի վճարվել 3,263.2 հազ. դրամ վարձավճար, որը ենթակա է վերականգնման:
- «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրով դրամարկղից հանվել, սակայն բնակչությանը չի վճարվել 1,581.9 հազ. դրամ գումար, որը ենթակա է վերականգնման պետական բյուջե:
- Արձանագրվել է 16,905.0 հազ. դրամի խախտում՝ երկաթյա խողովակները ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից պաշտոնապես հրապարակվածից անհամեմատ ցածր գներով վաճառելու հետևանքով (100 մմ, 5150 գ/մ, 1 գ/մ՝ 200 դրամ): Միջոցների օգտագործումը դիտարկվում է անարդյունավետ:

*7. գ. Ախլաթյան*

- Կատարվել է 861.0 հազ. դրամի չհիմնավորված ծախս, որը ենթակա է վերականգնման:
- Երկաթյա խողովակները ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից պաշտոնապես հրապարակվածից անհամեմատ ցածր գներով վաճառելու հետևանքով՝ արձա-

նագրվել է 43,627.5 հազ. դրամի վնաս (2006թ.՝ 155 մմ, 1200 գ/մ, 1 գ/մ՝ 300 դրամ և 250 մմ, 1365 գ/մ, 1 գ/մ՝ 200 դրամ, իսկ 2007թ.՝ 250 մմ, 1400 գ/մ, 1 գ/մ՝ 1000 դրամ և 155 մմ, 2725 գ/մ, 1 գ/մ՝ 800 դրամ): Միջոցների օգտագործումը դիտարկվում է անարդյունավետ:

- Արձանագրվել է 221.5 հազ. դրամ հողի հարկի չհիմնավորված արտոնության փաստ:

*8. գ. Բալաք*

- Արձանագրվել է 35,350.0 հազ. դրամի խախտում՝ երկաթյա խողովակները ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից պաշտոնապես հրապարակվածից անհամեմատ ցածր գներով վաճառելու հետևանքով (155 մմ, 7000 գ/մ, 1 գ/մ՝ 200 դրամ): Միջոցների օգտագործումը դիտարկվում է անարդյունավետ:
- Ավտոմեքենայի գնման արդյունքում պետական բյուջե չի վճարվել 450.0 հազ. դրամ եկամտահարկ, որը ենթակա է վերականգնման:
- 156 հա հողամաս օգտագործվում է առանց պայմանագրերի, որը ենթակա է օրինականացման:
- Ավելի է վճարվել 51.0 հազ. դրամ աշխատավարձ, որը ենթակա է վերականգնման:

*9. գ. Որոտան*

- Արձանագրվել է 16,989.2 հազ. դրամ «Որոտան ՀԷԿ» ՓԲԸ գույքահարկի գծով համայնքային բյուջե չվճարված գումար, որը ենթակա է վերականգնման:
- «Տաք Ջուր» տարածքում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի պահանջների խախտմամբ օտարվել է 0,2 հա հողամաս:
- Մրցութային հանձնաժողովի անդամն ընդամենը 130.0 հազ. դրամով գնել է 0.5 հա հողամաս:
- Արձանագրվել է 2,800.0 հազ. դրամի խախտում՝ երկաթյա խողովակները ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից պաշտոնապես հրապարակվածից անհամեմատ ցածր գներով վաճառելու հետևանքով (89 մմ, 1000 գ/մ, 1 գ/մ՝ 300 դրամ): Միջոցների օգտագործումը դիտարկվում է անարդյունավետ:
- Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալությունից չի վճարվել 784.8 հազ. դրամ վարձավճար, որը ենթակա է վերականգնման:
- Կատարվել է 216.9 հազ. դրամի չհիմնավորված ծախս, որը ենթակա է վերականգնման:

*10. գ. Շաղատ*

- «Որոտան ՀԷԿ» ՓԲԸ-ի գծով համայնքային բյուջե չի վճարվել 14,668.0 հազ. դրամ գույքահարկ, որը ենթակա է վերականգնման:
- Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալությունից չի վճարվել 1,298.0 հազ. դրամ վարձավճար, որը ենթակա է վերականգնման:
- Կատարվել է 971.4 հազ. դրամի չհիմնավորված ծախս, որը ենթակա է վերականգնման:

*11. գ. Վաղատին*

- Շինարարության բնագավառում արձանագրվել է 1,355.5 հազ. դրամի հավելագրում, որը ենթակա է վերականգնման:
- Կատարվել է 256.0 հազ. դրամի չհիմնավորված ծախս, որը ենթակա է վերականգնման:

*12. գ. Շաքի*

- Ավազանու անդամներին տրվել է 220.0 հազ. դրամի հողի հարկի արտոնություն, որը ենթակա է վերականգնման:

- «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրով դրամարկղից հանվել, սակայն բնակչությանը չի վճարվել 506.2 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման պետական բյուջե:
- Հողամասերի վարձակալությունից գոյացել է 4,921.0 հազ. դրամի տույժ, որը ենթակա է վերականգնման:
- «Սյունիք» ընկերությանը 6 հա հողամաս է հատկացվել 1 քմ տարեկան 2 դրամ, իսկ «Շիկ» ընկերությանը 15.8 հա հողամաս՝ 1 քմ՝ տարեկան 1.7 դրամ վարձավճարով: Երկու դեպքում էլ պայմանագրերը նոտարական վավերացում չեն ստացել: Գործարքները ենթակա են օրինականացման:
- Շինարարության բնագավառում արձանագրվել է 5,848.7 հազ. դրամի ծավալային հավելագրում, որը ենթակա է վերականգնման:

*13. ք. Գորիս*

- Շինարարական աշխատանքներում թույլ են տրվել ծավալային հավելագրումներ՝ 5,848.7 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:
- Չի գանձվել 438.0 հազ. դրամ տեղական տուրք, որը ենթակա է վերականգնման:
- Համայնքի փողոցների լուսավորության համար կատարվել է էլեկտրաէներգիայի 1,814.2 հազ. դրամի չհիմնավորված ծախս, որը ենթակա է վերականգնման:
- Արձանագրվել է «Գորիստուն» ՓԲԸ 1,926.0 հազ. դրամ չբաշխված զուտ շահույթ:

*14. գ. Վերիշեն*

- Հողամասերի վարձակալությունից գոյացել է 582.7 հազ. դրամի տույժ, որը ենթակա է վերականգնման:
- Արձանագրվել է 433.2 հազ. դրամի ավելի վճարված աշխատավարձ, որը ենթակա է վերականգնման:
- Կատարվել է գործուղման 246.4 հազ. դրամի ավելի վճարում, որը ենթակա է վերականգնման:

*15. գ. Շինուհայր*

- Կատարվել է 3,430.0 հազ. դրամ չհիմնավորված ծախս, որը ենթակա է վերականգնման:

*գ. Բռնակոթ*

- Հողամասերի վարձակալությունից գոյացել է 3,104.7 հազ. դրամի տույժ, որը ենթակա է վերականգնման:
- Չի վճարվել 4731.6 հազ դրամ տեղական պարտադիր վճար, որը ենթակա է վերականգնման:
- «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրով ստացված 192.2 հազ. դրամ գումարը բնակչությանը չի վճարվել, որը ենթակա է վերականգնման պետական բյուջե:

**<u>Ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ</u>**

*1. ք. Կապան*

- 3,595.7 հազ. դրամ տեղական տուրք վճարվել է համայնքային բյուջե:
- Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության գործարքներով գանձվել է 550.0 հազ. դրամ վարձավճար:
- 2,885.0 հազ. դրամ հողամասերի վարձակալությունից գոյացած տույժ վճարվել է համայնքային բյուջե:
- 9,970.5 հազ. դրամի չհիմնավորված ծախսն ամբողջությամբ վերականգնվել է տեղական բյուջե:
- «Մանսիր» ՍՊԸ ավելի վճարված 5,100.6 հազ. դրամը վերականգնվել է աշխատանքով:
- Շինարարության բնագավառի խախտումներից լրացուցիչ կատարողական ակտերով վերականգնվել է 8,026.5 հազ. դրամ:

- Տարածքների՝ կադաստրային արժեքից և շուկայական գներից անհամեմատ ցածր գներով վաճառքի դիմաց 6, 300.0 հազ. դրամ վերականգնվել է համայնքային բյուջե:

2. *գ. Խալաջ*

- Հողամասերի օտարման գործընթացում թույլ տրված խախտումներից 644.4 հազ. դրամ վերականգնվել է համայնքային բյուջե:
- 1,433.0 հազ. դրամի չհիմնավորված ծախսն ամբողջությամբ վերականգնվել է:
- Երկաթյա խողովակների վաճառքից գոյացած 965.0 հազ. դրամ չմուտքագրված գումարից 665.0 հազ. դրամը վերականգնվել է համայնքային բյուջե:
- Գազիֆիկացման աշխատանքների կատարման մասով արձանագրված 1,656.1 հազ. դրամի ծավալային հավելագրումն ամբողջությամբ վերականգնվել է լրացուցիչ կատարողական ակտերով:
- «Դինո-Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ-ի հետ կնքվել է կառուցապատման իրավունքի նոր պայմանագիր 95.48 հա հողատարածքի վրա՝ լուծելով նախկին պայմանագիրը:

3. *գ. Սյունիք*

- «Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ-ի զբաղեցրած 1,2 հա հողատարածքի համար կնքվել է վարձակալության պայմանագիր, որը հաստատվել է «Կապան» նոտարական տարածքում:
- 432.5 հազ. դրամ տեղական տուրք վերականգնվել է տեղական բյուջե:
- 120.0 հազ. դրամ ավելի վճարված գործուղման ծախսը վերականգնվել է:
- «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրով դրամարկղից ելքագրված սակայն չվճարված 1,035.0 հազ. դրամը վերականգնվել է պետական բյուջե:
- «Արմեն Սարմեն» ընկերությանը ֆոնդային բյուջեից որպես ֆինանսական օգնություն տրամադրված 4,000.0 հազ. դրամն ամբողջությամբ վերականգնվել է: Լրացուցիչ փաստաթղթերով վերականգնվել է 2,400.0 հազ. դրամի խախտումը:

4. *գ. Ագարակ*

- 160.1 հազ. դրամ շինարարության հավելագրված գումարն ամբողջությամբ վերականգնվել է:
- Մշակույթի տան տանիքի վերանորգման գումարից 274.4 հազ. դրամ վերականգնվել է համայնքի բյուջե, իսկ 4,505.6 հազ. դրամ՝ աշխատանքով:

5. *ք. Սիսիան*

- Մշակույթի տան օտարման գործընթացում արձանագրված 5,000.0 հազ. դրամն ամբողջությամբ վերականգնվել է համայնքային բյուջե:
- 300.0 հազ. դրամ տեղական տուրք վճարվել է համայնքային բյուջե:
- Արձանագրված 1,200.0 հազ. դրամի չափով աղբամանների և 1,433.0 հազ. դրամի չափով ցինկապատ թիթեղների պակասորդից աղբամանների մասով լրացուցիչ կատարողական ակտերով վերականգնվել է 857.1 հազ. դրամ:

6. *գ. Աղիտու*

- Հողամասերի վարձակալությունից գոյացած 534.7 հազ. դրամի տույժը վերականգնվել է համայնքային բյուջե:
- Համայնքային սեփականության հողամասերի չգանձված վարձավճարը՝ 3,821.3 հազ. դրամ, վերականգնվել է համայնքային բյուջե:

7. *գ. Ախլաթյան*

- Համայնքի ավագանու որոշմամբ անվավեր են ճանաչվել հողի հարկի արտոնություններ սահմանող համապատասխան որոշումները և 221.5 հազ. դրամը վերահաշվարկվել է համայնքի բյուջեում որպես հողի հարկի գծով ապառք:

8. *Գ. Բալաք*

- Ավտոմեքենայի գնման արդյունքում ՀՀ պետական բյուջե չվճարված 450.0 հազ. դրամ եկամտահարկն ամբողջությամբ վերականգնվել է:

- 156 հա հողամասի մասով ստեղծվել է մրցութային հանձնաժողով և իրականացվում է նոտարական վավերացում, ինչպես նաև իրավունքների պետական գրանցում:
- 51.0 հազ. դրամ աշխատավարձի ավելի վճարումն ամբողջությամբ վերականգնվել է:

*9. Գ. Որոտան*

- Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալության գործարքներով չվճարված վարձավճարից 442.0 հազ. դրամ վերականգնվել է համայնքային բյուջե:

*10. գ. Շաղատ*

- Հողի վարձակալությունից չվճարված 1,298.0 հազ. դրամ գումարից համայնքի բյուջե է վերականգնվել 584.5 հազ. դրամ:
- Լրացուցիչ փաստաթղթերով վերականգնվել է 971.4 հազ. դրամի չհիմնավորված ծախսը:

*11. Գ. Վաղատին*

- Շինարարության բնագավառում արձանագրված 1,355.5 հազ. դրամի հավելագրումը վերականգնվել է լրացուցիչ կատարողական ակտերով:

*12. Գ. Շաքի*

- Ավագանու անդամներին տրված 220.0 հազ. դրամի հողի հարկի արտոնությունը ավագանու համապատասխան որոշումները ուժը կորցրած ճանաչելու միջոցով վերաձևակերպվել է որպես հողի հարկի գծով ապառք, որը կվերականգնվի որպես հողի հարկ:
- Ավելի հաշվարկված 95.0 հազ. դրամ աշխատավարձի գումարը վերականգնվել է համայնքի բյուջե:
- «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրով չվճարված 506.2 հազ. դրամն ամբողջությամբ վերականգնվել է համայնքային բյուջե:
- Հաշվարկված հողի վարձավարների նախորդ տարիների ապառքն ու տույժը բյուջեի կատարման ընթացքում կգանձվեն համայնքի բյուջե:
- «Սյունիք» և «Շիկ» ընկերությունների՝ նոտարական վավերացում չստացած հողօգտագործման պայմանագրերը ստուգումից հետո սահմանված կարգով վերակնքվել են:

*13. ք. Գորիս*

- Շինարարության բնագավառում արձանագրված 5,848.7 հազ. դրամի ծավալային հավելագրումից 2,637.9 հազ. դրամ վերականգնվել է համայնքային բյուջե և 2,816.5 հազ. դրամ վերականգնվել է աշխատանքով: Մնացած 394.3 հազ. դրամի մասով տեղեկատվություն չկա:

*14. Գ. Վերիշեն*

- 582.7 հազ. դրամի տույժը հաշվառվել որպես հողի վարձավճարի ապառք, որը կգանձվի համայնքի բյուջե:
- 433.2 հազ. դրամի ավելի վճարված աշխատավարձն ամբողջությամբ վերականգնվել է:
- Գործուղման 246.4 հազ. դրամի ավելի վճարումն ամբողջությամբ վերականգնվել է:

*15. Գ. Շինուհայր*

- 3,430.0 հազ. դրամ չհիմնավորված ծախսից 308.6 հազ. դրամը վերականգնվել է:

*16. Գ. Բռնակոթ*

- «Վարձատրվող հասարակական աշխատանք» ծրագրով ստացված, սակայն բնակչությանը չվճարված 192.2 հազ. դրամ գումարն ամբողջությամբ վերականգնվել է:

## 2.10. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան

<u>Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակաշրջանը՝</u> 2006-2007թթ. և 2008թ. I կիսամյակ:

**<u>Վերահսկողության արդյունքներով արձանագրվել է՝</u>**

*1.Քաղաքաշինության և բնակարանային կոմունալ տնտեսության բնագավառ*

Վերահսկողության ժամանակահատվածում ստուգվել են թվով 34 օբյեկտներ: Հսկիչ չափագրումներով ընդգրկված աշխատանքների գումարը կազմել է 739,090.0 հազ. դրամ: Հսկիչ չափագրումների արդյունքում ծավալային հավելագրումները կազմել են 41,550.5 հազ. դրամ, իսկ կատարած անորակ աշխատանքները՝ 22,314.0 հազ. դրամ, որոնք ենթակա են վերականգնման (աղյուսակ 1, 2):

աղյուսակ 1, հազ. դրամ

| Հ/Հ | Օբյեկտի անվանումը | Կապալառու | Հավելագրում | Վերականգնվել է | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Գումարով | Աշխատանքով |
| 1 | Ճամբարակի և կենտրոն քաղամասի գազիֆիկացում՝47,923.75 | «Է. Աբգարյան» ՍՊԸ | 771.9 | | 771.9 |
| 2 | Գավառագետի հունի մաքրում Արծվաքար թաղամաս և Նորատուսի հատված՝192,700.0 | «Արտաշես և Տաքնիկ»ՍՊԸ | 3,003.3 | | 3,003.3 |
| 3 | Մարտունի գետի Գեղահովից մինչև Մարտունի հատվածի գետի հունի ամրացում և մաքրում՝146,548.3 | «Երևանշին» ԲԲԸ | 2,996.2 | | 2,996.2 |
| 4 | Վահան գյուղի գազիֆիկացում՝ 37,050.0 | «Է.Աբգարյան» ՍՊԸ | 846.7 | | |
| 5 | Դրախտիկի գազատար՝19,438.8 | «Շուշան Շահնուր» ՍՊԸ | 3,339.2 | 1,443.1 | 1,896.1 |
| 6 | Ավազանի խմելու ջրագիծ՝14,520.0 | «Էղիտա» ԱԿ | 694.4 | 694.4 | |
| 7 | Արեգունու խմելու ջրագծի կառուցում՝ 15,579.1 | «Բերրիություն» ԲԲԸ | 979.9 | 979.9 | |
| 8 | Վարդենիսի հիվանդանոց տանող ճանապարհի հիմնանորոգում՝ 57,643.1 | «Շանթ-Սեյրան» ՍՊԸ | 567.7 | | 567.7 |
| 9 | Զորագյուղի կամուրջ՝17,000.0 | «Շանթ-Սեյրան» ՍՊԸ | 1,471.6 | | 1,471.6 |
| 10 | Կամուրջ Վարդաձոր-Զորագյուղ՝ 15,170 | «Շանթ-Սեյրան» ՍՊԸ | 2,030.5 | 264.6 | 1,765.9 |
| 11 | Մարտունու զորամասից թիվ 3 դպրոց տանող ճանապարհի նորոգում՝28,732 | «Շանթ-Սեյրան» ՍՊԸ | 1,077.0 | 82.3 | 994.7 |
| 12 | Մարտունու հիվանդանոցի ճանապարհի նորոգում՝43,009.2 | «Շանթ-Սեյրան» ՍՊԸ | 1,181.0 | | 1,181.0 |
| 13 | Մաքենասի ջրագիծ՝ 9,780.0 | «Վարդենիսշին-5» ԲԲԸ | 2,049.9 | | |
| 14 | Գավառի թիվ 4 միջն. դպրոց՝ 86,944.10 | «Սեմեռ» ՍՊԸ | 752.8 | 752.8 | |
| 15 | Վահանի միջնակարգ դպրոց՝ 58,680.00 | «Շինարար համակարգիչ» ՍՊԸ | 402.4 | 402.4 | |
| 16 | Ն.Գետաշենի 2-րդ դպրոց՝35,890.40 | «Շանթ-Սեյրան» ՍՊԸ | 377.9 | 377.9 | |
| 17 | Վարդենիսի թիվ 1 դպրոց՝ 7,300.10 | «Յուրինե-Նարեկ» ՍՊԸ | 320.5 | | 320.5 |
| 18 | Լանջաղբյուրի միջն. դպրոց՝ 26,944.00 | «Թիվ 28 ՇՄՇ» ԲԲԸ | 225.7 | 225.7 | |

| Հ/Հ | Օբյեկտի անվանումը | Կապալառու | Հավելագրում | Վերականգնվել է | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Պետ. բյուջե | Աշխատանքով |
| 19 | Դրախտիկի գազատար՝ 2,922.00 | «Շուշան Շահնուր»ՍՊԸ | 110.1 | 110.1 | |
| 20 | Մարզպետարանի շենք՝ 105,602.60 | «Հանքավան» ԲԲԸ | 285.0 | 285.0 | |
| 21 | Մաղինա ոռոգում՝ 21,057.00 | «Շանթ Սեյրան»ՍՊԸ | 18,066.8 | | 18,066.8 |
| **Ընդամենը** | | | **41,550.5** | **5,618.2** | **33,035.7** |

աղյուսակ 2, հազ. դրամ

| Հ/Հ | Օբյեկտի անվանումը | Կապալառու | Անորակ աշխատանքներ | Վերականգնվել է | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Պետ. բյուջե | Աշխատանքով |
| 1 | Գավառի թիվ 4 միջն. դպրոց՝86,944.10 | «Սեմեռ» ՍՊԸ | 516.7 | | 516.7 |
| 2 | Վարդենիսի թիվ 1 դպրոց՝7,300.10 | «Յուրինե-Նարեկ» ՍՊԸ | 53.0 | | 53.0 |
| 3 | Մարզպետարանի շենք՝ 105,602.60 | «Հանքավան» ԲԲԸ | 235.1 | 235.1 | |
| 4 | Ճամբարակի համայնք. ճանապարհ՝14,200.40 | «Ճամբարակի» ՃՇՇ | 73.9 | 73.9 | |
| 5 | Ծաղկաշենի կամուրջ /2հատ/՝՝35,583.5 | «Արման Երեմ»ՍՊԸ | 285.9 | 285.9 | |
| 6 | Վարդենիսի հիվանդանոց տանող ճանապարհի հիմնանորոգում՝57,643.1 | «Շանթ-Սեյրան» ՍՊԸ | 13,331.6 | | 13,331.6 |
| 7 | Ճամբարակի հիվանդանոցի ճանապարհի հիմնանորոգում՝38,336.7 | «Ճամբարակի ՃՇՇՁ»ԲԲԸ | 7,494.7 | | 7,568.6 |
| 8 | Մարտունու զորամասից թիվ 3 դպրոց տանող ճանապարհի նորոգում՝28,732.0 | «Շանթ-Սեյրան» ՍՊԸ | 232.0 | | 232.0 |
| 9 | Մարտունու հիվանդանոցի ճանապարհի նորոգում՝ 28,757.5 | «Շանթ-Սեյրան» ՍՊԸ | 91.1 | | 91.1 |
| **Ընդամենը** | | | **22,314.0** | **594.9** | **21,793.0** |

*Արձանագրվել է նաև ոչ նպատակային աշխատանքներ*՝ 7,309.6 հազ. դրամ: Գեղամասար գյուղում նախատեսվել և կառուցվել է խմելու ջրագծի երեք ճյուղ, որոնք պետք է միացվեին և սնվեին գյուղի հիմնական ջրագծից, սակայն աշխատանքների ավարտին հիմնական ջրագիծը գյուղապետարանի պարտքի դիմաց ապամոնտաժվել է, իսկ նոր կառուցված ջրագծի ճյուղերը չեն միացվել հիմնական ջրատարին, և կատարված աշխատանքները դարձել են աննպատակ: Ծախսը դիտվում է որպես անարդյունավետ: Վերահսկիչ պալատի խորհրդի 10.10.08թ. թիվ 28/1 որոշմամբ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամասար համայնքի խմելու ջրագծի կառուցման աշխատանքների կատարման նկատմամբ իրականացված վերահսկողության ընթացքում կազմված արձանագրությունը ուղարկվել է ՀՀ գլխավոր դատախազություն:

*2. Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ թագավորության կողմից ՀՀ ֆինանսական օգնության կարգով Գեղարքունիքի մարզին հատկացված կարտոֆիլի սերմաքարմացման ծրագիր*

Մարզին վաճառված “Մոնոլիզա’’ տեսակի, առաջին “Ա’’ խմբի վերարտադրության 114300 կգ կարտոֆիլի տնկանյութը բաշխվել է հաղթող ճանաչված 12 ֆերմերներին:

«Հաղթող ճանաչված» 12 ֆերմերները մինչև 31.12.07թ. պարտավոր էին պետական բյուջե վերադարձնել 44,030.0 հազ. դրամ (աղյուսակ 3): Սահմանված ժամկետում որևէ գումար չի վճարվել: Գումարն ամբողջությամբ ենթակա է վերականգնման:

աղյուսակ 3, հազ. դրամ

| Հ/Հ | Անուն, ազգանուն | Տնկանյութի ընդամեն արժեք | Մուծվել է | Պարտք |
|---|---|---|---|---|
| 1 | Գրիգորյան Լևիկ | 2,694.5 | 569.5 | 2,125.0 |
| 2 | Նահապետյան Ռամելա | 6,160.5 | 1,650 | 4,510.5 |
| 3 | Խոջաբեկյան Արմեն | 2,310.5 | 566 | 1,744.5 |
| 4 | Սիրականյան Արմենակ | 1,746.0 | 175 | 1,571.0 |
| 5 | Սիրականյան Գրիշա | 2,694.5 | 569.5 | 2,125.0 |
| 6 | Շահբազյան Վելյա | 1,848.0 | 287 | 1,561.0 |
| 7 | Խեքոյան Ավետիք | 13,859.0 | 2,350 | 11,509.0 |
| 8 | Բադոյան Սերուժան | 1,165.0 | 115.5 | 1,049.5 |
| 9 | Հայրապետյան Շամխալ | 4,042.5 | 703.8 | 3,338.7 |
| 10 | Միոյան Վարսենիկ | 1,540.5 | 154 | 1,386.5 |
| 11 | Բաղդասարյան Յուրիկ | 2,311.0 | 663 | 1,648.0 |
| 12 | Սիրականյան Գնել | 3,658.0 | 716 | 2,942.0 |
|  | **Ընդամենը Ա-դաս** | **44,030,000** | **8,519.3** | **35,510.7** |

*3. Համայնքների վարչական սահմաններից դուրս, մարզպետարանի ենթակայության պետական սեփականություն հանդիսացող հողերի վարձակալություն*

Արձանագրվել է, որ հողերի վարձավճարների գանձման գործընթացը մարզպետարանն իրականացրել է ոչ պատշաճ մակարդակով, որի հետևանքով պետական բյուջե չի մուտքագրվել 33,790.8 հազ. դրամ վարձավճարի գումար, որը ենթակա է վերականգնման:

*4. Ինքնակամ շինություններ*

Անտեսելով «Վարչական իրախախտումների մասին» ՀՀ օրենքի պահանջները՝ մարզպետարանը հաշվետու ժամանակաշրջանում հայտնաբերված թվով 34 ինքնակամ շինություններից 24-ի դեպքում չի սահմանել վարչական տույժ՝ 4,800.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

*5. Սոցիալական ծառայության տարածքային գրասենյակներ*

Մարզի սոցիալական ծառայության տարածքային գործակալությունների ընտրանքային ստուգումների արդյունքում արձանագրվել է ավելի վճարված նպաստ՝ 1,428.5 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

<u>**Ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ**</u>

Վերահսկիչ պալատի արձանագրած խախտումներին ի պատասխան ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 24.12.08թ. թիվ Մ-1-970, 04.02.09թ. թիվ Մ-1-93 գրություններով տեղեկացվել է.

*1.Քաղաքաշինության և բնակարանային կոմունալ տնտեսության բնագավառ*

Թույլ տրված 63,864.5 հազ. դրամի ծավալային հավելագրումներից և անորակ աշխատանքներից վերականգնվել է պետական բյուջե՝ 6,213.1 հազ. դրամ գումար և աշխատանքների տեսքով՝ 54,312.0 հազ. դրամ: Չվերականգնված՝ 3,339.4 հազ. դրամի մասով տարվում են աշխատանքներ:

*2. Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ թագավորության կողմից Հայաստանի Հանրապետությանը ֆինանսական օգնության կարգով Գեղարքունիքի մարզին հատկացված կարտոֆիլի սերմաբարմացման ծրագիր*

Սահմանված ժամկետում ֆերմերների կողմից չվճարված 44,030.0 հազ. դրամից տվյալ փաստը Վերահսկիչ պալատի կողմից արձանագրվելուց անմիջապես հետո ֆերմերների

կողմից պետական բյուջե վերականգնվել է 8,513.9 հազ. դրամ: Մնացած մասի՝ 35,510.7 հազ. դրամի վերականգնման աշխատանքներն ընթացքում են:

*3. Համայնքների վարչական սահմաններից դուրս, մարզպետարանի ենթակայության պետական սեփականության հողերի վարձակալություն*

Համայնքների վարչական սահմաններից դուրս, մարզպետարանի ենթակայության պետական սեփականության հողերի վարձակալության ապառքների գծով արձանագրված 33,790.8 հազ. դրամից 31.01.09թ. դրությամբ գանձվել է 24,994.0 հազ. դրամ: Դատական կարգով ապառքների գանձման գործընթացի տարբեր փուլերում են գտնվում 41 վարձակալների գործեր, նրանց ունեցած 8,796.8 հազ. դրամի պարտքը գանձելու համար:

*4. Ինքնակամ շինություններ*

Ինքնակամ շինությունների համար չգանձված վարչական տույժից՝ 4,800.0 հազ. դրամ, վերականգնվել է 1,700.0 հազ. դրամը, իսկ չմուծողների մասով (3,100.0 հազ. դրամ) դատարան դիմելու համար նյութեր են նախապատրաստվում:

*5. Սոցիալական ծառայության տարածքային գրասենյակներ*

Մարզի սոցիալական ծառայության տարածքային գործակալությունների կողմից ավելի վճարված նպաստը՝ 1,428.5 հազ. դրամ գումարով, ամբողջությամբ վերականգնվել է:

## 2.11. ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքներ

**Վերահսկողությունմբ ընդգրկվող ժամանակաշրջանը՝** 2006 - 2007 թվականներ:

**Վերահսկողության արդյունքներով արձանագրվել է.**

*1. ք. Սևան*

• Տեղական տուրքերի մասով չվճարված գումարը կազմել է 2,317.8 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

• Նախատեսվել և փաստացի պահվել են օրինակելի հաստիքացուցակով չնախատեսված հաստիքներ, որոնց համար վճարվել է աշխատավարձ՝4,487.8 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

• Հողերի վարձակալությունից չի վճարվել տույժ՝ 10,350.3 հազ. դրամի չափով, որը ենթակա է վերականգնման:

• Հողի վաճառքից պակաս է գանձվել 8,183.5 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

• Շինարարության բնագավառում արձանագրվել է նախահաշվով ավելի հաշվարկված գումար և ծավալային հավելագրում՝ 17,378.0 հազ. դրամի չափով, որը ենթակա է վերականգնման:

• Ոչ բնակելի տարածքները (այդ թվում՝ մանկապարտեզ և դպրոց) վաճառվել են կադաստրային արժեքից ցածր գներով, որի արդյունքում բյուջեի վնասը կազմել է 51,034.3 հազ. դրամ:

• Գույքահարկի հասանելիք 10%-ից ավելի տված արտոնության արդյունքում համայնքի բյուջեն կրել է 4,352.4 հազ. դրամի վնաս, որը ենթակա է վերականգնման:

• Կոմունալ ծառայությունների դիմաց ավելի վճարված գումարը կազմել է 2,619.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

• Սևան Ազգային պարկի տարածքում «Լավանդա Սիթի-Շին» ՍՊԸ-ին տրվել է 47 հա տարածք՝ 1 ք/մ տարեկան 14 դրամով:

*2. ք. Վարդենիս*

• 2006-2008թթ. պակաս է նախատեսվել և գանձվել տեղական տուրք՝ 6,537.9 հազ. դրամի չափով, որը ենթակա է վերականգնման:

• Նախատեսվել և փաստացի պահվել են օրինակելի հաստիքացուցակով չնախատեսված հաստիքներ, որոնց համար հաշվարկվել և վճարվել է աշխատավարձ՝ 4,595.5 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:
• Հողի հարկի ապառքի նկատմամբ չի հաշվարկվել 4,125.0 հազ. դրամ տույժ, իսկ վարձակալությունից՝ 878.0 հազ. դրամ տույժ, որը ենթակա է վերականգնման:
• Օտարվել է 180 տոննա. 720մմ երկաթյա խողովակ՝ 1գ/մ 7470դրամով, վաճառված գնից պակաս է վճարվել համայնքի բյուջե 2,776.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման: Խողովակների վաճառքի գնի և ՀՀ քաղաքաշինության նախարարության հաստատած գների տարբերությունը կազմել է 18,695.0 հազ. դրամ: Միջոցների օգտագործումը դիտարկվում է անարդյունավետ:
• Կոմունալ ծառայությունների դիմաց ավելի վճարված գումարը կազմել է 2,752.6 հազ. դրամ, ավտոպահեստամասերի չհիմնավորված ծախսը՝ 1,599.5 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:
• Գույքի վարձակալությունից առաջացած չհաշվարկված տույժ-տուգանքները կազմել են 1,837.9 հազ. դրամ, իսկ գույքահարկի բազայից դուրս է մնացել 4,902.3 հազ. դրամ, որոնք ենթակա են վերականգնման:
• Հողի վաճառքից պակաս գանձված գումարը կազմում է 968.9 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:
• Հաշվառումից դուրս են մնացել տեղական տուրք վճարող սուբյեկտներ, որի արդյունքում համայնքի բյուջե չի վճարվել 444.3 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:
• Հաշվարկվել և վճարվել է 216.0 հազ. դրամ ավելի աշխատավարձ, որը ենթակա է վերականգնման:

*3. ք. Մարտունի*

• Շինարարության հավելագրումները և նախահաշվային արժեքի խախտումները կազմել են 3,578. 9 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:
• Համայնքի բյուջե պակաս է գանձվել տեղական տուրք՝ 3,638.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:
• Նախատեսվել և փաստացի պահվել են օրինակելի հաստիքացուցակով չնախատեսված հաստիքներ, որոնց համար հաշվարկվել և վճարվել է աշխատավարձ՝1,319.5 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:
• ՀՀ քաղաքաշինության նախարարության գնագոյացման տեղեկագրի գներից բարձր գներով լուսարձակների ձեռք բերմամբ բյուջեի վնասը կազմում է 1,462.0 հազ. դրամ:
• Կատարվել են պայմանագրով չնախատեսված փողոցների սանիտարական մաքրման, աղբահեռացման աշխատանքներ՝ 1,000.0 հազ. դրամի չափով, որը ենթակա է վերականգնման:

*4. գ. Արտանիշ*

• Շինվերանորոգման աշխատանքներում պայմանագրով նախատեսված չվճարված ժամկետային տույժը կազմում է 4,900.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:
• Պետական բյուջե չհաշվարկված և չվճարված եկամտահարկի գումարը կազմում է 1,308.5 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

*5. ք. Գավառ*

• Չհաշվառված և չգանձված տեղական տուրքի գումարը կազմում է 5,168.4 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:
• Ոչ բնակելի տարածքների՝ կադաստրային արժեքից ցածր գներով վաճառքի արդյունքում համայնքային բյուջեի վնասը կազմել է 47,755.0 հազ. դրամ:
• Կոմունալ ծառայությունների չկատարված աշխատանքների դիմաց վճարվել է 6,678.1 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:
• Նախատեսվել և փաստացի պահվել են օրինակելի հաստիքացուցակով չնախատեսված հաստիքներ, որոնց համար հաշվարկվել և վճարվել է աշխատավարձ՝ 3,550.1 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

• Արձանագրվել են շինարարության ծավալային հավելագրումներ՝ 3,181.0 հազ. դրամի չափով, որը ենթակա է վերականգնման:

• Հողի վարձակալությունից պակաս է հաշվարկվել 2,266.8 հազ. դրամ տույժ, որը ենթակա է վերականգնման:

*6. գ.Սարուխան*

• Սարուխան համայնքի ճանապարհների վերանորոգման գումարից արձանագրվել է ծավալային հավելագրում՝ 1,680.7 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

• Հողամասերի օգտագործման դիմաց չի վճարվել 2,324.3 հազ. դրամ վարձավճար, որը ենթակա է վերականգնման:

• Համայնքի ենթակայության նախադպրոցական հիմնարկներում նախատեսվել և փաստացի պահվել են օրինակելի հաստիքացուցակով չնախատեսված հաստիքներ, որոնց համար հաշվարկվել և վճարվել է աշխատավարձ՝ 1,531.1 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

• Գործուղման չհիմնավորված ծախսը կազմել է 814.5 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

• Լուսավորության համար ձեռք բերված լուսատուների՝ քաղաքաշինության նախարարության հաստատած գներից բարձր գնով ձեռք բերման արդյունքում բյուջեի վնասը կազմել է 850.0 հազ. դրամ:

• Տեղական տուրքերի մասով 2006-2008 թվականի 1-ին կիսամյակի համար չի գանձվել 650.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

• Օգնություն ցույց տրված, սակայն չվճարված գումարը կազմում է 181.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

• «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրով վճարված աշխատավարձի վերաբերյալ արձանագրվել է 108.2 հազ. դրամի խախտում, որը ենթակա է վերականգնման պետական բյուջե:

*7. գ.Ծովակ*

• 2006-2007թթ. հողի հարկի գծով չի վճարվել ուշացած օրերի համար տույժ՝ 1,066.4 հազ. դրամի չափով, որը ենթակա է վերականգնման:

• «Վարդենիսի քարհանք վարչություն» ՓԲԸ-ի կողմից ավազի հանքավայրի շահագործման նպատակով հողամասի վարձակալության գործարքով համայնքային բյուջե ենթակա է վերականգնման 1,407.1 հազ. դրամ:

• Համայնքի բյուջե գանձման ենթակա տեղական տուրքի գումարը կազմում է 1,020.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

• 2008 թ. գույքահարկի գծով ճշտված պլանով նախատեսված եկամուտը պակաս է ցույց տրվել և գանձվել 187.3 հազ. դրամի չափով, որը ենթակա է վերականգնման:

*8. գ. Սոթք*

• Առանց կատարողական ակտի և առանց հաշիվ-ապրանքագրի գույքի ձեռք բերման արդյունքում արձանագրվել է 9,500.0 հազ. դրամ չհիմնավորված ծախս, որը ենթակա է վերականգնման:

• Չհաշվարկված և չգանձված հողի վարձավճարների գումարը կազմում է 4124.6 հազ. դրամ, տեղական տուրքը՝ 360.0 հազ. դրամ, որոնք ենթակա են վերականգնման:

• Չհիմնավորված գործուղման ծախսը հաշվարկվել է 790.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

• 172.5 հա հողատարածքը առանց վարձակալական պայմանագրի օգտագործվում է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից: Հաշվարկով տարեկան վարձավճարը կկազմի 318.0 0 հազ. դրամ: 28.9 հա հողատարածքը առանց վարձակալական պայմանագրի օգտագործվում է «Արարատ ոսկի» ՍՊԸ կողմից, տարեկան վճարման ենթակա վարձավճարը կազմում է 138.7 հազ. դրամ:

• Խախտելով «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը՝ գյուղապետը մասնակցել է մրցույթին և ճանաչվել հաղթող՝ վարձակալելով 12.1 հա վա-

րելահող, 2,5 հա խոտհարք և արոտ՝ 15,1 հա, գյուղապետի տեղակալը՝ 1,8 հա վարելահող, ֆինանսիստը՝ 3 հա վարելահող և 3,7 հա արոտ:

*9. գ. Նորատուս*

• Գույքահարկի գումարից պակաս է հաշվարկվել և գանձվել 9,385.7 հազ. դրամ, հողի վարձակալությունից՝ 3,748.8 հազ. դրամ, որոնք ենթակա են վերականգնման:

• Նախատեսվել և փաստացի պահվել են օրինակելի հաստիքացուցակով չնախատեսված հաստիքներ, որոնց համար հաշվարկվել և վճարվել է աշխատավարձ՝1,087.4 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

• Չհաշվարկված և չգանձված տեղական տուրքի գումարը կազմում է 318.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

*10. գ. Լճաշեն*

• Հողամասերի օտարման բնագավառում աճուրդի մեկնարկային գնից ցածր գնով վաճառքի արդյունքում համայնքի բյուջեի կրած վնասը կազմում է 3,408.0 հազ. դրամ:

• Նախատեսվել և փաստացի պահվել են օրինակելի հաստիքացուցակով չնախատեսված հաստիքներ, որոնց համար վճարվել է աշխատավարձ՝435.3 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

• «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրից ավելի մնացած 398.8 հազ. դրամը ենթակա է վերականգնման պետական բյուջե:

• Չհաշվառված և չգանձված տեղական տուրքի գումարը կազմում է 114.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

*11. գ. Ներքին Գետաշեն*

• Հողի վարձավճարների նկատմամբ չհաշվարկված տույժի գումարը կազմում է 2,177.8 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

• Չհաշվարկված գույքահարկի տույժի գումարը կազմում է 1,547.1 հազ. դրամ, տեղական տուրքը՝ 429.4 հազ. դրամ, որոնք ենթակա են վերականգնման:

• Տոնավաճառի համար 3.2 հա ապօրինի զբաղեցված տարածքի համար չհաշվարկված վարձավճարը կազմում է 423.5 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

• Շինարարության ծավալային հավելագրումները կազմում են 1,727.5 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

*12. գ. Զոլաքար*

• Չհաշվառված և չգանձված տեղական տուրքի գումարը կազմում է 1,276.5 հազ. դրամ, հողի վարձավճարների նկատմամբ տույժի գումարը՝ 217.3 հազ. դրամ, որոնք ենթակա են վերականգնման:

• Նախատեսվել և փաստացի պահվել են օրինակելի հաստիքացուցակով չնախատեսված հաստիքներ, որոնց համար հաշվարկվել և վճարվել է աշխատավարձ՝ 986.4 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

• «Վարձատրվող հասարակական աշխատանք» ծրագրով ցույց տրված, սակայն չվճարված գումարը կազմում է 580.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման պետական բյուջե:

<u>Ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ</u>

*1. ք. Սևան*

- Տեղական տուրքերի մասով չվճարված 2,317.8 հազ. դրամն ամբողջությամբ վերականգնվել է:
- Հողերի վարձակալությունից առաջացած և չվճարված 10,350.3 հազ. դրամի տույժերի և տուգանքների մասով քաղաքապետարանը դիմել է դատարան: 2,166.8 հազ. դրամը արդեն վերականգնվել է: Վերականգնման ենթակա է դեռ 8,183.5 հազ. դրամ:
- 17,378.0 հազ. դրամի շինարարական հավելագրումից վերականգնվել է 7,000.0 հազ. դրամը, մնացած մասով քաղաքապետարանը դիմել է դատարան:

- Կադաստրային արժեքից ցածր գներով ոչ բնակելի տարածքների վաճառքի՝ 51,034.3 հազ. դրամ, հարցը գտնվում է դատախազության վարույթում:
- Գույքահարկի հասանելիք 10%-ից ավելի տրված արտոնությունների՝ 4,352.4 հազ. դրամի մասով քաղաքապետարանը այդ գումարները վերականգնելու նպատակով պարտավորվում է դիմել դատարան:
- Կոմունալ ծառայությունների համար ավելի վճարված գումարը՝ 2,619.0 հազ. դրամն ամբողջությամբ վերականգնվել է:

*2. ք. Մարտունի*

- 3,578.9 հազ. դրամի շինարարական հավելագրումներն ամբողջությամբ վերականգնվել է աշխատանքով:
- 3,638.0 հազ. դրամի չվճարված տեղական տուրքից միայն 3,338.0 հազ. դրամն է վերականգնվել:
- Գնագոյացման գներից բարձր գնով ձեռք բերված լուսարձակները՝ 1,462.0 հազ. դրամի չափով վերականգնվել են (դրա դիմաց նույն արժեքով ձեռք են բերվել տրանսֆորմատորներ):
- Պայմանագրով չնախատեսված փողոցների սանիտարական մաքրման և աղբահեռացման աշխատանքները՝ 1,000.0 հազ. դրամ վերականգնվել են ամբողջությամբ:

*3. ք. Գավառ*

- 5,168.4 հազ. դրամի չվճարված տեղական տուրքից միայն 2,782.6 հազ. դրամն է վերականգնվել:
- Չկատարված կոմունալ ծառայությունների դիմաց վճարված 6,678.1 հազ. դրամից միայն 200.0 հազ. դրամն է վերականգնվել:
- 3,181.0 հազ. դրամի շինարարական հավելագրումներից միայն 500.0 հազ. դրամն է վերականգնվել համայնքի բյուջե, մնացած մասը կապալառուն կվերականգնի աշխատանքով՝ ըստ կողմերի միջև կնքված ժամանակացույցի:
- 2,266.8 հազ. դրամի հողի վարձակալության պակաս հաշվարկված տույժերից միայն 2.115.5 հազ. դրամն է վերականգնվել:

*4. ք. Վարդենիս*

- Ստուգումների արդյունքում հայտնաբերված գումարների վերականգնման հարցերով զբաղվում է մարզային դատախազությունը (գումարը կազմում է 43,918.0 հազ. դրամ):

*5. գ.Արտանիշ*

- Ստուգումների արդյունքում հայտնաբերված վերականգնման ենթակա ընդհանուր 6,230.4 հազ. դրամ գումարից վերականգնվել է 5,906.4 հազ. դրամը:

*6. գ.Սարուխան*

- Սարուխան համայնքի ճանապարհների վերանորոգման մասով 1680.7 հազ. դրամ հավելագրումն ամբողջությամբ վերականգնվել է աշխատանքով:
- Վարձավճարների գծով 2,324.3 հազ. դրամից միայն վերականգնվել է 1,050.0 հազ. դրամը:
- Լուսատուների՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության հաստատած գներից բարձր գնով ձեռք բերման արդյունքում առաջացած բյուջեի վնասը՝ 854.8 հազ. դրամն, ամբողջությամբ վերականգնվել է աշխատանքով:
- 650.0 հազ. դրամի չափով չվճարված տեղական տուրքից վերականգնվել է 150.0 հազ. դրամը:
- «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրով վճարված աշխատավարձի վերաբերյալ արձանագրված 108.2 հազ. դրամի խախտումը ամբողջությամբ վերականգնվել է պետական բյուջե:

*7. գ.Ծովակ*

- 1,066.4 հազ. դրամի չափով չհաշվարկված և չվճարված հողի հարկի գումարից վերականգնվել է միայն 328.5 հազ. դրամը:

- «Վարդենիսի քարհանք վարչություն» ՓԲԸ կողմից ավազի հանքավայրի շահագործման նպատակով հողամասի վարձակալության պակաս վճարված 1,407.1 հազ. դրամից միայն վերականգնվել է 888.0 հազ. դրամը: Մնացած մասով գյուղապետարանը դիմել է դատարան:
- Չվճարված 1,020.0 հազ. դրամ տեղական տուրքից վերականգնվել է միայն 365.0 հազ. դրամը:

*8. գ.Սոթք*

- Հայտնաբերված 15,231.2 հազ. դրամի իրավախախտումների մասով մարզպետը համապատասխան փաստաթղթեր է ներկայացրել դատախազություն:

*9. գ.Նորատուս*

- «Ռաֆիո» ՓԲԸ-ի կողմից պակաս վճարված 3,748.8 հազ. դրամ հողի վարձավճարից ս/թ հունվարի 31-ի դրությամբ միայն վերականգնվել է 2,790.8 հազ. դրամը: Վերականգնման գործընթացը շարունակվում է:
- Չվճարված 318,0 հազ. դրամ տեղական տուրքն ամբողջությամբ վերականգնվել է:

*10. գ.Լճաշեն*

- Վարձատրվող հասարակական աշխատանքների համար հատկացված գումարների ավելի մնացած 398.0 հազ. դրամն ամբողջությամբ վերականգնվել է պետական բյուջե:
- 114.0 հազ. դրամի չափով չվճարված տեղական տուրքն ամբողջությամբ վերականգնվել է:

*11. գ. Ն.Գետաշեն*

- 2,177.8 հազ. դրամ չվճարված հողի հարկի տույժն ամբողջությամբ վերականգնվել է:
- Չվճարված 429.4 հազ. դրամի տեղական տուրքը լիովին վերականգնվել է:
- Տոնավաճառի տարածքի համար չվճարված 423.5 հազ. դրամ վարձավճարն ամբողջությամբ վերականգնվել է:
- 1,727.5 հազ. դրամի շինարարական հավելագրումն ամբողջությամբ վերականգնվել է աշխատանքով:

*12. գ.Ջիլաքար*

- 1,276.5 հազ. դրամ չվճարված տեղական տուրքից վերականգնվել է 570.0 հազ. դրամը:
- Վարձատրվող հասրակական աշխատանքների ծրագրով ցույց տրված, սակայն չվճարված 580.0 հազ. դրամից դեռևս վերականգնվել է միայն 180.0 հազ. դրամը:

## 2.12. ՀՀ Արարատի մարզպետարան

**Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակաշրջանը՝ 2006-2007թթ. և 2008թ. I կիսամյակ:**
**Վերահսկողության արդյունքներով արձանագրվել է՝**

*1. Քաղաքաշինության և բնակարանային կոմունալ տնտեսության բնագավառ*

Հսկիչ չափագրումներով ընդգրկված աշխատանքների գումարը կազմել է 280,792.9 հազ. դրամ: Հսկիչ չափագրումների արդյունքում ծավալային հավելագրումները կազմել են 10,255.1 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման (աղյուսակ 1):

*2. Համայնքների վարչական սահմաններից դուրս, մարզպետարանի ենթակայության պետական սեփականության հողերի վարձակալություն*

Հողերի վարձավճարների գանձման գործընթացը մարզպետարանն իրականացրել է ոչ պատշաճ մակարդակով, ինչի հետևանքով, օրինակ՝ չի մուտքագրվել 14,300.0 հազ. դրամ վարձավճար, որը ենթակա է վերականգնման: Պետական սեփականության հողերում տրամադրվել են հանքարդյունահանման լիցենզիաներ՝ առանց հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու:

| Հ/Հ | Օբյեկտի անվանումը | Կապալառու | Հավելագրում | Վերականգնվել է | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Պետ. բյուջե | Աշխատանքով |
| 1 | Արտաշատի թիվ 1 դպրոց՝ 82,647.1 | «Արտաշատշին» ՍՊԸ | 1,064.2 | 208.9 | 855.3 |
| 2 | Մրգավետի դպրոց՝ 95,381.7 | «Շինարար Վահագն» ՍՊԸ | 508.5 | | 508.5 |
| 3 | Արևշատի դպրոց՝ 69,333.3 | «Արևշատ -Ա» ՍՊԸ | 2,177.0 | 1020.1 | 1,156.9 |
| 4 | Վանաշենի դպրոց՝ 89,648.6 | «Մանուելա» ՍՊԸ | 428.6 | | 428.6 |
| 5 | Նոյակերտի դպրոց՝ 29,230.2 | «ՆՆԱ» ՍՊԸ | 503.8 | | 503.8 |
| 6 | Վեդի քաղաքի բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում՝14,512.4 | «Արարատշին» ԲԲԸ | 693.2 | | |
| 7 | Նոր Կյանքի մանկապարտեզի հիմնանորոգում՝ 9,630.0 | «Հզոր բռունցք» ՍՊԸ | 627.9 | | |
| 8 | Ջանգակատուն համայնքի մշակույթի տան տանիքի հիմնանորոգում՝ 29,198.6 | «Մանուելա» ՍՊԸ | 515.8 | | |
| 9 | Արտաշատ քաղաքի թատրոնի ջեռուցում՝ 23,696.4 | «Արտաշատշին» ՍՊԸ | 955.6 | | |
| 10 | Բերդիկ համայնքի մշակույթի տան հիմնանորոգում՝ 19,415.9 | «Ա. Խաչատրյան և գործընկերներ» ՍՊԸ | 523.7 | | |
| 11 | Վերին Դվինի մշակույթի տան հիմնանորոգում՝ 19,410.7 | «Սերպանտին» ԱԿ | 400.0 | | |
| 12 | Քաղցրաշենի մշակույթի տան հիմնանորոգում՝ 24,300.0 | «Հերմես»ՍՊԸ | 607.6 | | |
| 13 | Այգեզարդի մանկապարտեզի շենքի հիմնանորոգում՝ 42,003.9 | « Շինարար Վահագն»ՍՊԸ | 873.2 | | |
| 14 | Այգեստանի մշակույթի տան հիմնանորոգում՝ 19,459.7 | «Փարվանամոնտաժ» ՍՊԸ | 376.0 | | |
| **Ընդամենը** | | | **10,255.1** | **1,229,0** | **3,453.1** |

աղյուսակ 1, հազ. դրամ

*3. 50 և ավելի տոկոս պետական մասնակցությամբ ընկերություններ*

Խախտվել են «Բաժնետիրական ընկերությունների մասին», «Դրամարկղային գործառնությունների մասին», «Գնումների մասին», ՀՀ օրենքների պահանջները: Ընկերությունները գործունեության ֆինանսական արդյունքներից չեն վճարել 601.5 հազ. դրամ շահաբաժին, որը ենթակա է վերականգնման:

***4. Սոցիալական ծառայության տարածքային գործակալություններ***

Ավելի է վճարվել ընտանեկան նպաստ՝ 1,638.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

**Ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ**

Վերահսկիչ պալատի արձանագրած խախտումներին ի պատասխան ՀՀ Արարատի մարզպետի 10.02.09թ. թիվ 030/188 գրությամբ տեղեկացվել է.

*4. Քաղաքաշինության և բնակարանային կոմունալ տնտեսության բնագավառ*

Թույլ տրված 10,255.1 հազ. դրամի ծավալային հավելագրումից 10.02.09թ. դրությամբ վերականգնվել են՝ 1,229.0 հազ. դրամը բյուջե վճարված գումարով, իսկ 3,453.1 հազ. դրամը շինարարական աշխատանքով:

## 2.13. Արարատի մարզի համայնքներ

<u>**Վերահսկողությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝**</u> 2006-2007թթ. և 2008թ.-ի I կիսամյակ:
<u>**Վերահսկողության արդյունքում արձանագրվել է.**</u>

*1. ք. Արարատ*

- Չի հաշվարկվել և չի վճարվել 1,195.1 հազ. դրամ տեղական տուրք, որը ենթակա է վերականգնման համայնքի բյուջե:
- Նախկին քաղաքապետը, որպես սանիտարական մաքրվող տարածք հաշվարկել է 47 հա, այդ թվում՝ 14 հա որպես կանաչապատ տարածք, մինչդեռ նոր քաղաքապետը հաշվարկել է 20 հա սանիտարական մաքրվող տարածք և 6 հա կանաչապատ տարածք, արդյունքում առաջացել է 38,401.0 հազ. դրամի տարբերություն:
- Արձանագրվել է չկատարված աշխատանքների դիմաց կոմունալ ծառայությանը ավելի վճարված գումար՝ 730.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:
- Շինարարության բնագավառում նախահաշվային փաստաթղթերով և հսկիչ չափագրումներով արձանագրվել է 1644.6 հազ. դրամի ծավալային հավելագրում, որը ենթակա է վերականգնման:

*2. ք. Մասիս*

- Մասիս քաղաքի գլխավոր հատակագծի մշակման համար «Ուրբան-Պրո» ՍՊԸ-ի հետ պայմանագրով աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2005թ. հոկտեմբերի 1-ը, սակայն 01.10.2008թ. դրությամբ աշխատանքներն ավարտված չէին, իսկ կապալառուի կողմից «մայր» գումարը հետ չէր վերադարձվել: Ուստի ստուգմամբ հաշվարկվել է պայմանագրով նախատեսված տույժ՝ 7,150.0 հազ. դրամի չափով, որը «մայր» գումարի հետ կազմում է 11,150.0 հազ. դրամ և ենթակա է վերականգնման:
- Չի հաշվառվել և չի գանձվել 5,860.7 հազ. դրամ տեղական տուրք, որը ենթակա է վերականգնման:
- Հողի օտարումից պակաս է գանձվել 281.6 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:
- Կապիտալ շինարարության և վերանորոգման աշխատանքներում թույլ տրված ծավալային հավելագրումները և նախահաշվային խախտումները կազմել են 2,118.6 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

*3. գ. Փոքր Վեդի*

- Արձանագրվել է տեղական տուրքի չհաշվառված և չվճարված գումար՝ 143.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:
- Հաշվառմամբ վերականգնված հողի վարձակալության ժամկետանց պարտքի գումարը կազմել է 825.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

*4. գ. Արևշատ*

- Արձանագրվել է համայնքի բյուջե տեղական տուրքի չհաշվառված և չվճարված գումար՝ 135.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:
- Շինարարության բնագավառում նախահաշվային գների տարբերությամբ արձանագրվել է 353.0 հազ. դրամի խախտում, որը ենթակա է վերականգնման:

*5. գ. Արգավանդ*

- Արձանագրվել է չհաշվառված և չգանձված տեղական տուրք ՝ 752.0 հազ. դրամի չափով, որը ենթակա է վերականգնման:
- Հողի վարձակալությունից պակաս հաշվարկված տույժի գումարը կազմում է 155.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:
- Շինարարական աշխատանքների ծավալային հավելագրումները և նախահաշվային արժեքի խախտումները կազմել են 2,942.1 հազ դրամ, որը ենթակա է վերականգնման:

*6. գ. Ոսկետափ*

- Տեղական տուրքերի գծով արձանագրվել է չվճարված գումար՝ 297.5 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

• 2006-2007թթ. ընթացքում հողի վարձավճարների գծով հաշվարկվել է 600.2 հազ. դրամ տույժ, որը ենթակա է վերականգնման:

• Կապիտալ շինարարության և վերանորոգման աշխատանքներում թույլ տրված ծավալային հավելագրումները և նախահաշվային աշխատանքների խախտումները կազմել են 553.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

*7. գ.Եղեգնավան*

• 2006-2007թթ. պայմանագրերով հաշվարկված հողի վարձավճարների գծով տույժը կազմել է 544.3 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

• Շինարարական աշխատանքների ծավալային հավելագրումները կազմել են 542.4 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

*8. գ. Մարմարաշեն*

• Չհիմնավորված գույքահարկի արտոնությունը կազմել է 138.1 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

• Չվճարված տեղական տուրքի գումարը կազմել է 177.5 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

• Հողի պակաս սահմանված վարձավճարը կազմել է 177.8 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

• Հողի վարձավճարների գծով տույժը կազմել է 275.3 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

*9. գ. Գոռավան*

• 104 հա գյուղատնտեսական նշանակության հողամասն օգտագործվում է հանքավայրի շահագործման նպատակով:

• Հողի վարձակալությունից պակաս հաշվարկված տույժը կազմել է 337.5 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

• Շինարարական աշխատանքների նախահաշվային փաստաթղթերով և հսկիչ չափագրումներով արձանագրվել է 244.8 հազ. դրամի ծավալային հավելագրում, որը ենթակա է վերականգնման:

*10. գ. Դարակերտ*

• Համայնքի տարածքում գործող կազմակերպությունների կողմից հողի հարկի գծով չհաշվարկված և համայնքի բյուջե չվճարված գումարը կազմել է 898.9 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

• Հողի վարձակալությունից չհաշվարկված տույժը կազմել է 200.1 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

• Շինարարական նախահաշվային փաստաթղթերով և հսկիչ չափագրումներով արձանագրվել է 337.8 հազ. դրամի ծավալային հավելագրում, որը ենթակա է վերականգնման:

*11. գ. Նոր Խարբերդ*

• Չհաշվառված և չգանձված տեղական տուրքը կազմել է 1,532.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

• Նախահաշվային փաստաթղթերով և հսկիչ չափագրումներով արձանագրվել է ծավալային հավելագրում՝ 308.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

**<u>Ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ</u>**

*1. ք. Արարատ*

• 501.7 հազ. դրամ չհաշվարկված և չվճարված տեղական տուրքն ամբողջությամբ վերականգնվել է:

• 730.0 հազ. դրամ չկատարված աշխատանքների դիմաց կոմունալ ծառայությանը ավել վճարված գումարը վերականգնվել է:

• 1644.6 հազ.դրամի հսկիչ չափագրումներով արձանագրված խախտումն ամբողջությամբ վերականգնվել է աշխատանքով:

*2. գ. Փոքր Վեդի*

• 143.0 հազ. դրամ չհաշվառված և չվճարված գումարը լրիվությամբ վերականգնվել է:

• 825.0 հազ. դրամ հողի վարձակալության ժամկետանց պարտքը լրիվությամբ վերականգնվել է:

*3. գ. Արգավանդ*

• 212.0 հազ. դրամ չհաշվառված և չգանձված տեղական տուրք վերականգնվել է:

*4. գ. Ոսկետափ*

• Տեղական տուրքերի գծով չվճարված 297.5 հազ. դրամից համայնքի բյուջե է վերականգնվել 220,0 հազ. դրամ:

• Հողի վարձավճարների գծով չվճարված 600.2 հազ դրամ տույժից 600.0 հազ. դրամը վերականգնվել է:

• Շինարարական աշխատանքներում 553.0 հազ. դրամի թույլ տրված խախտումները Կապալառուն պարտավորվել է մինչև սույն թվականի հունիսի 30-ը ամբողջությամբ աշխատանքով վերացնել, հակառակ դեպքում գումարը կգանձվի անկանխիկ եղանակով:

*5. գ.Մարմարաշեն*

• Անհիմն կարգով տրված գույքահարկի արտոնության գումարը՝ 138.1 հազ. դրամն ամբողջությամբ վերականգնվել է;

• Չվճարված 177.5 հազ. դրամ տեղական տուրքն ամբողջությամբ վերականգնվել է:

• 275.3 հազ. դրամ չվճարված հողի վարձակալության տույժն ամբողջութամբ վերականգնվել է:

*6. գ. Դարակերտ*

• 250.0 հազ. դրամ հողի հարկի գծով չհաշվարկված գումարը վերականգնվել է:

• 200.1 հազ. դրամ հողի վարձակալությունից չհաշվարկված տույժը վերականգնվել է:

• Հսկիչ չափագրումներով արձանագրված 337.8 հազ. դրամի խախտումն ամբողջությամբ վերականգնվել է աշխատանքով:

*7. գ. Նոր Խարբերդ*

• 183.0 հազ. դրամ չհաշվառված և չգանձված տեղական տուրքը վերականգնվել է:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***ՀՀ կառավարությանը՝***
***Միջոցներ ձեռնարկել.***

• *«Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված գնման ընթացակարգի խախտումների համար պատասխանատվության իրավական մեխանիզմ մշակելու ուղղությամբ:*

• *Ուժեղացնել մարզպետների միջամտող գործունեությունը տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77.5-րդ հոդվածով սահմանված վարչական հսկողություն և «Հողային օրենսգրքի» 42-րդ հոդվածով նախատեսված վերահսկողություն իրականացնելիս:*

• *Սյունիքի, Գեղարքունիքի և Արարատի մարզպետարանների թույլ տված խախտումները և բաց թողումները վերացնելու, իրենց լիազորությունների շրջանակներում իրականացվող ծրագրերը արդյունավետ և նպատակային դարձնելու ուղղությամբ:*

• *արձանագրված խախտումների և բաց թողումների հետևանքով ՀՀ պետական և համայնքային բյուջեներին հասցված վնասը վերականգնելու ուղղությամբ:*

***Սյունիքի, Գեղարքունիքի և Արարատի մարզպետներին և այդ մարզերի տեղական ինքնակառավարման մարմիններին.***
***Միջոցներ ձեռնարկել.***

*• Համայնքների նորմատիվ ակտ հանդիսացող որոշումները պետական իրավագիտական փորձաքննություն անցկացնելու և հրապարակելու ուղղությամբ:*

*• Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը գործող օրենքին համապատասխանեցնելու և բյուջեում տեղական տուրքերից և վճարներից մուտքեր նախատեսելու ուղղությամբ:*

*• Բյուջեով նախատեսված սեփական եկամուտները հաշվարկելու և գանձելու ուղղությամբ:*

*• Համայնքի սեփականության հիմնական միջոցների օտարումը, վարձակալությամբ տրամադրելը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ հողային օրենսգրքի և ՀՀ կառավարության 31.07.2001թ. թիվ 695 որոշմամբ սահմանված՝ «Մասնավորեցվող պետական գույքի հաշվեկշռային և շուկայական մեթոդով գնահատման կարգի» պահանջներով իրականացնելու ուղղությամբ:*

*• Հարկային եկամուտների հավաքումը ապահովելու և ստանձնած պարտավորությունների գծով կուտակված պարտքերը մարելու ուղղությամբ:*

*• Գույքի վարձակալության վարձավճարների գծով պակաս գանձված գումարները համայնքի բյուջե վերականգնելու ողղությամբ:*

*• Հողերի վարձակալության և օտարման պայմանագրերը վավերացնելու, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի պահանջներին համապատասխանեցնելու, պակաս հաշվարկված և չգանձված գումարները գանձելու ուղղությամբ:*

*• Համայնքի բյուջեից կատարվող ծախսերը, ըստ հոդվածների, համապատասխանեցնելու «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի պահանջներին, ինչպես նաև ծախսերը համապատասխան փաստաթղթերով հիմնավորելու ուղղությամբ:*

*• Համայնքային սեփականության գույքը, համաձայն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 02.06.2000թ N102 հրամանի գույքագրելու ուղղությամբ:*

*• Նախագծանախահաշվային փաստաթղթերը ՀՀ քաղաքաշինության նախարարի 28.04.98թ. թիվ 46 հրամանի, իսկ շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության՝ 28.04.98թ. թիվ 44 հրամանի պահանջների կատարման նկատմամբ:*

*• Շինարարական աշխատանքների կատարման վերահսկողության արդյունքում արձանագրված հավելագրված գումարները վերականգնելու ուղղությամբ:*

*• Գյուղական համայնքներում ներքին աուդիտի համակարգ ներդնելու ուղղությամբ:*

*• Գնումների գործընթացը «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին, իսկ հաշվապահական հաշվառման գործընթացը՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու ուղղությամբ:*

## 2.14. Երևանի քաղաքապետարանի կողմից անշարժ գույքի կառավարման և օգտագործման մասին

**<u>Վերահսկողությունը ընդգրկվող ժամանակաշրջանը</u>**՝ 2006 - 2007 թվականներ:
**<u>Վերահսկողության արդյունքներով արձանագրվել է.</u>**

Երևանի քաղաքապետարանը 27.01.2005-01.07.2008թթ. ընկած ժամանակահատվածում հողատարածքների օտարման գործընթացն իրականացրել է՝ հղում կատարելով իրավական ակտերի ուժը կորցրած դրույթներին: Այսպես, համաձայն «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի, ուժը կորցրած են ճանաչվել Երևան քաղաքի տարածքում գտնվող բնակավայրերի և թաղամասերի սահմանների նկարագրերը: Մինչդեռ քաղաքապետարանը, օտարված և

օտարվող հողամասերի կադաստրային արժեքները հաշվարկելիս, հիմք է ընդունել ՀՀ կառավարության 24.12.2003թ. թիվ 1746-Ն որոշումը, որտեղ կան բազմաթիվ հղումներ քաղային համայնքների վարչական սահմանների նկարագրերին:

ՀՀ կառավարության 27.03.2003թ. N 1941-Ա որոշմամբ հաստատվել են Դալմայի այգիների պահպանման ենթակա հողերի սահմանները, որտեղ ընդգրկված 256,0 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողերը տեղափոխվել են անտառային նշանակության: Նույն որոշմամբ Երևանի քաղաքապետին տրվել է հանձնարարական՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել որոշման 1-ին կետում նշված հողերի սահմանների նկարագրի կազմման և դրանց նկատմամբ՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում գույքային իրավունքների պետական գրանցման վերաբերյալ, որը սակայն, չի կատարվել:

Սեփականության իրավունքով փոխանցվել են հողամասեր, որոնք բնակավայրերում ընդհանուր օգտագործման հողեր են (ճանապարհներ, գետափեր, էլեկտրահաղորդիչ գծերի, մայրուղային ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի, գազատարների, ջրանցքների, ինչպես նաև դրանց զարգացման համար առանձնացված հողեր) և գտնվում են ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում: Օրինակ՝ Րաֆֆու փող. թիվ 99/3 հասցեում «Վ-Սանկ» ՍՊԸ վարձակալությամբ տրամադրված 2550.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ գնման նախապատվության իրավունք է սահմանվել և հողամասն ուղղակի վաճառքով օտարվել է: Սակայն օտարված 2550.0քմ հողամասը գտնվում է ՀՀ կառավարության 15.12.2005 N 2330-Ն որոշմամբ հաստատված գլխավոր հատակագծով նախատեսված մայրուղու վրա և ենթակա չէր օտարման: Իսկ Երևանի քաղաքապետի 22.04.06.2008թ. որոշմամբ Տիչինայի փողոցի h. 300/4 հասցեում՝ 3203.19 քմ մակերեսով հողամասին կից 3202.0քմ տարածքն ուղղակի վաճառքով օտարվել է, սակայն ենթակա չէր օտարման, քանի որ հողատարածքով անցնում է հոսանքի գիծ և այն գտնվում է բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի գոտիում:

Երևանի քաղաքապետի 2004թ. օգոստոսի 28-ի թիվ 3318-Ա և 2005թ. հունիսի 14-ի թիվ 1283-Ա որոշումներով «Հայրենիք–Սփյուռք կամուրջ» հասարակական կազմակերպությանը Ազատության պողոտայի և Բաբայան փողոցի հատման մասում օտարվել է 6000 քմ մակերեսով հողամաս: 2005թ. սեպտեմբերի 30-ին քաղաքապետին ուղղված գրությամբ ՀԿ, միջոցների սղության պատճառով, հրաժարվել է իրեն պատկանող 12000.0 քմ հողատարածքի 6000.0քմ մակերեսով հողամասից՝ հօգուտ «Սուրբ լազար» հասարակական կազմակերպության: Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 03.11.05թ. եզրակացության համաձայն, հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում, սակայն այն ուղղակի գտնվում է այգու տարածքում (Մոնումենտում՝ Golden Palace-ի դիմացի այգիում): Քաղաքապետի 17.11.05թ. թիվ.2436-Ա որոշման հիման վրա ՀԿ հետ կնքվել է հողի անհատույց (մշտական) օգտագործման պայմանագիր: Երևանի քաղաքապետի 2007թ. մարտի 30-ի թիվ 617Ա որոշումով հողամասն օգտագործողին տրամադրվել է գնման նախապատվության իրավունք, և 6000քմ մակերեսով հողամասը 98.856,0 հազ. դրամ կադաստրային արժեքով օտարվել է ՀԿ: 2007թ. հունիսի 1-ին կնքվել է առքուվաճառքի պայմանագիր, որից ծագող իրավունքը պետական գրանցում է ստացել հունիսի 19-ին: Ներկայումս ՀԿ լուծարված է, իսկ հողամասի սեփականատերը պարզ չէ:

Երևանի քաղաքապետի 13.03.2008թ. 1032-Ա որոշմամբ Մարգարյան փողոցի թիվ 23 հասցեում գտնվող, վարձակալության իրավունքով «ՏՅԱ-ՏՅԱ» ՍՊԸ տրամադրված 2680.0 քմ մակերեսով հողամասն օտարվել է, դրանով խախտվել է ՀՀ հողային օրեսգրքի 62-րդ հոդվածի 11-րդ կետի պահանջները, քանի որ վարձակալության պայմանագրով նախատեսված է առևտրի և սպասարկման սրահների տեղադրում, հանգստի գոտու և մանկական ատրակցիոնի կազմակերպում, սակայն տեղում կառուցված է բենզալիցքավորման կայան՝ ավտոտեխսպասարկման շինություններով:

Ուղղակի վաճառքով օտարվել են հողամասեր, որոնք դիտարկվելով որպես առանձին գույքային միավոր, կարող էին հրապարակային սակարկությամբ օտարվել աճուրդով և պետությանը բերել ավելի մեծ ֆինանսական օգուտ: Օրինակ՝ տարածագնահատման 7-րդ գոտիում, Դավիթաշեն 3-րդ թաղամասի հ.25/5 հասցեում շինության զբաղեցրած 2572.0քմ մակերեսով հողամասին կից 2572.0 քմ մակերեսով հողամասը, առանց հրապարակային սակարկությունների, ուղղակի վաճառքով օտարվել է ներկա պահին գործող կադաստրային 4524.0 հազ. դրամ արժեքով այն դեպքում, երբ հողատարածքի 1500.0 քմ կազմող մասը ուղղակի հարում է մի կողմից Տ. Պետրոսյան փողոցին /մոտ 25 մ/, մյուս կողմից վերջինիս հատող փողոցին /մոտ 57 մ/: Մոտ 1400քմ կազմող հողատարածքը կարող էր լիովին դիտարկվել որպես առանձին գույքային միավոր, լիներ հրապարակային սակարկությունների առարկա և օտարվեր աճուրդով: Հարկ է նշել, որ տվյալ պահին Դավիթաշեն 3-րդ թաղամասում օտարվող հողամասերի աճուրդային գները կադաստրային գնից ավելի բարձր էին և տատանվում էին 7000.0 – 15000.0 հազ. դրամի սահմաններում, այսինքն՝ 2-3 անգամ թանկ:

Վաճառված ավելի քան 370 հազ. քմ մակերեսով հողամասերը երեք ամսվա ընթացքում երկրորդ անգամ վաճառվել են՝ բերելով շուրջ 22% շահույթ:

Հողամասերի կառուցապատման իրավունքով տրամադրման գործընթացում խախտումներ չեն արձանագրվել:

Երևանի քաղաքապետարան են մուտքագրվել բազմաթիվ դիմումներ՝ մինչև 2005թ. նոյեմբերի 26-ը օրենքով սահմանված կարգով հատկացված, նոտարական կարգով վավերացված պայմանագրով և պետական գրանցում ստացած հողամասերի ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահանված սահմանափակումների ցանկում լինելու մասին տեղեկանք ստանալու խնդրանքով: Սակայն մեծ թվով դիմումներ մերժում են ստացել, վկայակոչելով ՀՀ հողային օրենսգրքի 62-րդ հոդվածի 11-րդ մասը, չնայած այն հանգամանքին, որ օրենսգիրքը սահմանում է միայն մեկ սահմանափակում, այն է՝ եթե հողամասն ընդգրկված է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ապա ենթակա չէ օտարման:

Ինքնակամ կառույցների և հողերի օրինականացման բնագավառում բազմիցս խախտվել է ՀՀ կառավարության 15.05.2003թ. N 1748-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետը. Երևանի քաղաքապետի կողմից օրինականացվել են «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ինքնակամ կառուցված շինությունները:

Մի շարք դեպքերում օրինականացվել են քաղաքաշինական ու հողային նորմերին չհամապատասխանող ինքնակամ կառույցներ, և համապատասխան հողամասերը տրամադրվել վարձակալության՝ խախտելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Պետական կամ համայնքային սեփականության հողամասում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման՝ օրենքով նախատեսված հիմքերի խախտումներով տրամադրվել են ինքնակամ կառույցներ և հողամասեր:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ վարչության 14.10.2008թ. գրության համաձայն, թիվ 4 կլինիկական հիվանդանոցի, թիվ 158 մանկապարտեզի և Տիգրան Մեծի 65ա հասցեի կաթսայատներն օտարվել են, սակայն վերջիններիս օտարման փաստաթղթերը քաղաքապետարանում բացակայում էին: Թիվ 4 կլինիկական հիվանդանոցի կաթսայատունն օտարվել է հիվանդանոցի հետ միասին՝ չդիտարկվելով որպես առանձին գույքային միավոր:

Երևանի քաղաքապետի որոշումներով, Երևան քաղաքի «Կենտրոն», «Աջափնյակ», «Դավիթաշեն», «Արաբկիր» «Նորք-Մարաշ» համայնքների և «Մարս» գործարանին ու Տիչինայի փողոցին հարող տարածքների համար կատարվել և հաստատվել են գոտիավորման նախագծեր: Սակայն մի շարք դեպքերում Երևան քաղաքի գոտիավորման նախագծերը կատարվել են գոտիավորմանն առնչվող օրենսդրական պահանջների խախտումով, և չնայած դրան, դրական եզրակացություն են ստացել լիազոր մարմինների կողմից: Քաղաքապետարանի թույլտվությամբ, գլխավոր հատակագծի պահանջների խախտմամբ իրականացվել են կառուցապատման աշխատանքներ:

Պետական ցուցակում ընդգրկված պատմության ու մշակույթի հուշարձան հանդիսացող մի շարք շենքերի տարածքներն ինչ-ինչ նկատառումներով իրացվել են, իսկ հուշարձանները կամայականորեն քանդվել են ու ոչնչացվել՝ առանց լիազոր մարմնի թույլտվության: Օրինակ, Հյուսիսային պողոտայի գոտու և դրան հարակից մեծ թվով պատմամշակութային շենք-շինություններ (քաղաքաշինական, արտադրական, բնակելի, քաղաքաշինական համակառույցներ) ևս կառուցապատողների կողմից քանդվել են՝ սահմանված կարգի խախտումով, առանց լիազորված մարմնի համապատասխան մասնագիտական եզրակացության:

Քաղաքապետարանի և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ծառայություններն իրենց տոպոգրաֆիական քարտեզներում կիրառում են տարբեր կոորդինատային համակարգ, ստեղծելով արհեստական խոչընդոտներ և անհամապատասխանություններ՝ գործառույթների նույն դաշտում գտնվող պետական կառույցների բնականոն աշխատանքում: Պարզվել է նաև, որ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից մշակված Երևան քաղաքի հողերի նպատակային նշանակության կադաստրային քարտեզի դրույթները էապես տարբերվում են Երևանի գլխավոր հատակագծով առաջադրված դրույթներից:

Մի շարք ընդերքօգտագործողներ, ընդերքօգտագործման՝ օրենսդրությամբ պահանջվող բոլոր փաստաթղթերը ձեռք բերելու արդյունքում, դիմել են Երևանի քաղաքապետարան՝ հողօգտագործման իրավունքի ձևակերպման նպատակով, սակայն մերժվել են՝ համապատասխան հողամասերը «բնակավայրերի հողեր» կատեգորիայում ընդգրկված լինելու պատճառաբանությամբ: Փաստորեն, դրանք որպես բնակավայրերի հողեր, կարող են տրամադրվել այլ սուբյեկտների: Մինչդեռ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն արգելվում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցել պետական և համայնքային սեփականության այն հողամասերը, որոնք պետության կողմից հաշվառված և գրանցված օգտակար հանածոների տեղադրվածություններ են: Առանց հողօգտագործման իրավունքի ընդերքի

շահագործման մասով խախտվել է ՀՀ հողային օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, համաձայն որի՝ պետական լիազորված մարմինը վերահսկողություն է իրականացնում հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***Հայաստանի Հանրապետության կառավարությանը***

*• Հողօգտագործման և կառուցապատման գործընթացները կանոնակարգելու անհրաժեշտությունից ելնելով և կարևորելով ծավալատարածական գոտիավորման խնդիրները, ի թիվս կառուցապատման այլ չափորոշիչների, անհրաժեշտ է մշակել կառուցապատման խտության նորմերն ապահովող կարգ:*

*• Սահմանել ինքնակամ օբյեկտների օրինականացման կարգ, որտեղ կհստակեցվի սեփականության իրավունքով տրամադրվելիք հողամասերի առավելագույն չափը՝ ըստ շինության կառուցապատման մակերեսի և հողամասի նպատակային և գործառնական նշանակության:*

*• Մշակել վաճառքի հանվող տարածքները սպասարկող ինժեներատրանսպորտային և սոցիալական ենթակառուցվածքների ստեղծումը կարգավորող նորմատիվային ակտեր, որը կհանգեցնի քաղաքաշինական միջավայրի ճիշտ ձևավորմանը և հողակտորների արժևորմանը:*

*• Քաղաքաշինական միջավայրի անկանոն ձևավորման և աղավաղման փաստերի բացառման նպատակով, հողերի սեփականատերերի կողմից իրենց հողատարածքները բաժանելու և այլ անձանց վաճառելու գործընթացը կանոնակարգելու համար, անհրաժեշտ է մշակել համապատասխան կարգ, սահմանելով բաժանելի գույքի նվազագույն չափերը, այդ թվում չբաժանվող գույքը՝ ըստ գոտիների:*

*• Ստեղծել տոպոգրաֆիական քարտեզների միասնական կոորդինատային համակարգ:*

*• Կազմել պատմամշակութային արժեք ներկայացնող հուշարձանների և դրանց սպասարկման տարածքների իրատեսական ցանկ՝ գոտիների առանձնացմամբ և պահպանման միջոցառումների մշակմամբ:*

*• Մշակել քաղաքաշինական բնագավառի ներկայիս պահանջներին համապատասխանող նորմատիվատեխնիկական փաստաթղթեր, քանի որ քաղաքաշինության վերաբերյալ այժմ գործող ՍՆԻՊ 2.07.01-89-ը չի կարող ապահովել նախագծերի լիարժեք մշակումը և քաղաքաշինական բնագավառի հսկողությունը:*

*• Շուկայական գների բարձրացման հետ կապված՝ վերանայել ՀՀ կառավարության 22.02.2001թ. N 125 որոշմամբ ՀՀ պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված /ամրացված/ գույքի /տարածքի/ վարձավճարի նվազագույն մեծության որոշման կարգը:*

***Երևանի քաղաքապետարանին***

*• Ուղղակի վաճառքով լրացուցիչ հողամասեր տրամադրելու դեպքում՝ մանրակրկիտ հիմնավորել հողակտորի առանձին գույքային միավոր և հրապարակային սակարկությունների առարկա չդիտարկվելու հանգամանքը:*

*• Քաղաքապետի որոշումների նախագծերում հստակ նշել այն իրավական ակտերը, որոնցով առաջնորդվում և հիմնավորվում է որոշումների կայացումը, ինչպես նաև հիմնավորել քաղաքաշինական նորմերի խախտումներով կառուցված շինությունների նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման եզրակացությունները և դրանց անհրաժեշտությունը:*

## 2.15. Երևան քաղաքի Կենտրոն համայնք

**Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակաշրջանը՝** 2006 թվականի հունվարի 1-ից մինչև 2008 թվականի հուլիսի 1-ը:

**Վերահսկողության արդյունքներով արձանագրվել է՝**

*1. Հարկային եկամուտներ*

***Գույքահարկ***

- 13513 տրանսպորտային միջոցների համար 2005 թվականից չի վճարվել գույքահարկ՝ 1,303,472.3 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:
- Համայնքից բացակայող մոտ 2800 ֆիզիկական անձանց գտնվելու հասցեի վերաբերյալ տեղեկատվություն հարկման բազայում չկա: Ընդ որում, դրանցից ընտրանքային կարգով ստուգված 13-ի գծով գույքահարկի ապառքը կազմում է 2,563.9 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:
- 500.0 հազ. դրամից ավելի ապառք ունեցող 46 իրավաբանական անձանց գույքահարկի ապառքը 293,258.1 հազ. դրամ է, որը ենթակա է վերականգնման (աղյուսակ 1):

աղյուսակ 1, հազ. դրամ

| N | Հարկ վճարողի անվանումը | Վճարման ենթակա գումար |
|---|---|---|
| 1. | Ավիահամալիր | 2,343.37 |
| 2. | Արմենիա տելեֆոն կոմպանի | 60,749.8 |
| 3. | Արմենմոտոր | 3,659.8 |
| 4. | «Դավիթ» երթուղային տաքսի | 1,480.8 |
| 5. | Դոմ Մոսկվի | 1,502.4 |
| 6. | Եվրոմոթորս | 1,455.2 |
| 7. | Երևանի ալրաղաց գործարան | 34,993.9 |
| 8. | Երևանի թիվ 1 շուկա | 14,461.9 |
| 9. | Երևանի ոսկերչական գործարան | 4,475.5 |
| 10. | Երևանյան կրկես | 11,344.2 |
| 11. | Զավմիկ | 12,002.0 |
| 12. | Ընդերքաբան | 1,730.7 |
| 13. | Ինժնախագիծ | 1,808.0 |
| 14. | Կարեն Դեմիրճյանի անվան ՄՀՀ | 11,342.7 |
| 15. | Կլիֆֆ առևտրի և ներդր. ընկերություն | 3,173.5 |
| 16. | Կույրերի միավորման կենտր. վարչություն | 10,524.1 |
| 17. | թիվ 17 պոլիկլինիկա | 1,242.6 |
| 18. | Հայ ճարտարապետների միություն | 4,399.7 |
| 19. | Հայագրոբանկ | 11,431.3 |
| 20. | Հայաստան մարզական միություն | 2,814.8 |
| 21. | Հայաստանի գրողների միություն | 4,492.5 |
| 22. | Հայաստանի ժուռնալիստների միություն | 2,230.3 |
| 23. | Հայաստանի խուլերի միավորում | 1,783.2 |
| 24. | Հայէներգո | 42,311.8 |
| 25. | Հայկապ/Արարատ բանկ | 6,387.2 |
| 26. | Հայռուսգազարդ | 3,637.2 |
| 27. | Հիդրոտեխնիկական կառույց.շինարար.Դ. | 1,668.6 |
| 28. | Հիսուս Քրիստոս վերջ.օրերի սրբ. եկ.ՀԿ | 7,615.3 |
| 29. | Հրաչյա Աճառյանի անվան համալսարան | 1,074.5 |
| 30. | Մ.Գ.-Հաուզինգ | 5,657.5 |
| 31. | Շուշ-Մէդա | 1,490.6 |
| 32. | Նարեկ | 3,042.4 |
| 33. | Շտապբուժօգնություն | 3,002.2 |
| 34. | Սիր Կապ Արմենիա | 1,171.0 |
| 35. | Վերածնունդ - Հայրապետյան | 1,762.6 |
| 36. | Տաշիր ինվեստ Գրուպ | 2,187.4 |
| 37. | «Այրարատ» կինոթատրոն | 563.7 |

| N | Հարկ վճարողի անվանումը | Վճարման ենթակա գումար |
|---|---|---|
| 38. | Անի Փրինթ | 540.0 |
| 39. | «Արարատ» ռեստորան | 644.4 |
| 40. | Դիդաս ինտերնեյշնլ | 537.6 |
| 41. | Արառսպասարկում | 903.7 |
| 42. | թիվ 2 բուժմիավորում | 846.9 |
| 43. | Հայկական կարմիր խաչի ընկերություն | 941.3 |
| 44. | Հայջրմուղկոյուղի | 595.7 |
| 45. | Հիդրոէներգաշին | 517.5 |
| 46. | Հին Զորագյուղ | 716.7 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 293,258.1 |

### *Հողի հարկ*

- Ստուգման պահի դրությամբ չի վճարվել հողի հարկ՝ 749,331.2 հազ. դրամ, («մայր» գումար՝ 139,800.5 հազ. դրամ) որը ենթակա է վերականգնման:

### *Տեղական տուրք*

- 2007 և 2008 թթ. թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առքու-վաճառքով զբաղվող առնվազն 600 սուբյեկտներից համայնքի բյուջե չի գանձվել 82,500.0 հազ. դրամ տեղական տուրք, որը ենթակա է վերականգնման (Ե. Քոչարի և Խորենացու փողոցներում գտնվող ոսկու շուկա և այլ առևտրի կենտրոններ):
- Համայնքի տարածքում 6 բենզալցակայան չունեն հողհատկացման թույլտվություն, չեն համապատասխանում քաղաքաշինական, ճարտարապետական և բնապահպանական նորմերի պահանջներին, գործում են որպես ապօրինի կառույցներ, որի պատճառով այդ կետերից միայն 2008 թվականին չի նախատեսվել և չի գանձվել 2,100.0 հազ. դրամ տեղական տուրք, որը ենթակա է վերականգնման:

*2. Ոչ հարկային եկամուտներ*

- Թաղապետարանի «Կենտրոն Կանաչապատում» ՓԲԸ կողմից 2006 և 2007 թվականներին չի վճարվել 38,047.0 հազ. դրամ շահաբաժին, որը ենթակա է վերականգնման:
- Գովազդային վահանակներով զբաղեցրած հողամասերից միայն 2007 և 2008 թթ. 1-ին կիսամյակում վարձակալական պայմանագրերի բացակայության պատճառով բյուջե մուտք չի եղել 339,750.0 հազ. դրամ վարձավճար, որը ենթակա է վերականգնման (աղյուսակ 2):

**աղյուսակ 2**

**Գովազդային վահանակներ տեղադրող ընկերությունների ցանկ**

| |
|---|
| «Յունիքորն Գրուպ» ՍՊԸ |
| «Նուշիկյան ասոցիացիա» ՍՊԸ |
| «Սիլ կոնցեռն» ՍՊԸ |
| «Արաբելլա» ՍՊԸ |
| «ԷԳԱ» ՍՊԸ |
| «Գարանտ մեդիա» ՓԲԸ |
| «Իմեքս գրուպ» ՍՊԸ |

- 4590 քմ տարածքում առանց որևէ իրավական հիմքի և տարածքի վարձակալության պայմանագիր կնքելու որպես կայանատեղ շահագործվում է երթևեկելի մասի 29 հատված, որի տարեկան հաշվարկային վարձավճարը կազմում է 27,540.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

**Ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ**

Վերահսկիչ պալատի արձանագրած խախտումներին ի պատասխան Երևանի Կենտրոն թաղային համայնքի ղեկավարի 17.03.2009թ. 23/11-353 գրությամբ տեղեկացվել է.

*1. Հարկային եկամուտներ*

• Հարկային եկամուտների հավաքագրման և իրատեսական պլանավորման ապահովման նպատակով ՀՀ ոստիկանության ճանապարհային ծառայությունից տրամադրվել է հին նմուշի պետհամարանիշները նորերով չփոխարինած փոխադրամիջոցների ցանկը, որով կկիրառվի նախատեսված հարկի հաշվարկման ժամանակավոր ղաղարեցում:

• 2008 թ.-ի հոկտեմբերից առ այսօր շուրջ 20 դատական գործ է հարուցվել հարկ վճարումից խուսափող անձանց նկատմամբ՝ 110,3 մլն դրամ գումարով: Հարկերի հավաքագրումն ապահովելու նպատակով ճշգրտվում են համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի սեփականատերերի անհայտ հաշվառման հասցեները, ինչպես նաև ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Կենտրոն և Նորք-Մարաշ ստորաբաժանումներից հարցումների միջոցով ճշտվում են բազայում մինչ այդ հաշվառված, սակայն իրացման գոտիում հայտնված շինությունները:

• Հողի վարձակալության վարձավճարներից առաջացած ապառքների հավաքագրման նպատակով ապառքների վճարման շուրջ 1500 ծանուցագիր է ուղարկվել վարձակալներին: 30 վարձակալների վերաբերյալ հարցում է արվել ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Կենտրոն և Նորք-Մարաշ տարածքային ստորաբաժանումներին՝ ճշտելու նոր սեփականատերերի իրավաբանական հասցեները և հողի օգտագործման տեսակը, որից հետո հայցադիմումները կներկայացվեն դատարան՝ գումարը բռնագանձելու նպատակով: 140 վարձակալների համար ևս հարցում է պատրաստվել ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե: Ներկայումս 3 վարձակալի գործ գտնվում է դատաքննության փուլում, 10 գործ՝ ԴԱՀԿ-ում, 4 վարձակալի գործի քննություն կասեցվել է՝ վերջիններիս նկատմամբ հետախուզում հայտարարելու պատճառով: Արդյունքում բյուջե կմուտքագրվի ավելի քան 65 մլն դրամ:

• «Կենտրոն» թաղային համայնքի վարչական տարածքում գտնվող առևտրի իրականացման վայրերում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի առքուվաճառքով զբաղվող անձանց հետ, պետական ռեգիստրում իրենց գրանցվելու գործընթացին զուգահեռ, տարվում են աշխատանքներ՝ տեղական տուրքերը գանձելու և վաճառքի թույլտվություն տրամադրելու ուղղությամբ:

• Ապօրինի բենզալցակայանների քաղաքաշինական, ճարտարապետական և բնապահպանական պահանջներին համապատասխանեցնելու հնարավորության կամ հետագա գործունեության նպատակահարմարության որոշման նպատակով պահանջվել է դադարեցնել հեղուկ վառելիքի թվով 6 առևտրի կետերի գործունեությունը, և սուբյեկտները պարտավորվել են դիմել Երևանի քաղաքապետին՝ հողահատկացման որոշում ստանալու համար, որից հետո կգանձվի տեղական տուրք և կտրամադրվի թույլտվություն:

*2. Ոչ հարկային եկամուտներ*

• «Կենտրոն Կանաչապատում» ՓԲԸ-ի կողմից 2008 թվականի նոյեմբերի 25-ին համայնքի բյուջե է վճարվել 38,047.0 հազ. դրամ:

• Գովազդային վահանակների զբաղեցրած հողամասերի համար սահմանված կարգով պայմանագրեր կնքելու և վարձավճարների գանձումն ապահովելու նպատակով մշակվել է հողի վարձակալության նոր պայմանագրի ձև, իսկ համայնքի ղեկավարին և ավագանուն առաջարկվել է վերանայել 1 քմ համար սահմանված վարձավճարի չափը:

## 2.16. Երևան քաղաքի Դավթաշեն համայնք

<u>**Վերահսկողությամբ ընդգրկվող ժամանակահատվածը՝**</u> 2006 թվականի հունվարի 1-ից մինչև 2008 թվականի հուլիսի 1-ը:

<u>**Վերահսկողության արդյունքներով արձանագրվել է՝**</u>

*1. Համայնքային բյուջեի ձևավորում և կատարում*

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով դատարկ գովազդային վահանակների համար սահմանվել է ամսական 700 դրամ տեղական տուրք՝ մեկ քմ համար: 2007 թ.-ին և 2008 թվականի առաջին կիսամյակի համար համայնքի բյուջե պակաս է գանձվել 2,105.6 հազ. դրամի չափով տեղական տուրք, որը ենթակա է վերականգնման:

*2. Գույքահարկ և հողի հարկ*

1. 2006, 2007 և 2008թթ.-ների ավագանու որոշումներով «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամին տրվել է հողի հարկի գծով արտոնություն, որի արդյունքում համայնքի բյուջե պակաս է վճարվել 1,669.5 հազ. դրամ: «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով ավագանին նման իրավասություն չունի, ուստի գումարը ենթակա է վերականգնման:

2. Ներկայացված ելակետային ցուցանիշների անճշտության պատճառով համայնքի 2009թ.-ի ֆինանսական համահարթեցման դոտացիան ավելի է հաշվարկվել 43,626.6 հազ. դրամի չափով: Ենթակա է նվազեցման 2009 թվականի՝ ՀՀ պետական բյուջեից համայնքին հատկացվող դոտացիայի չափը:

*3. Համայնքի սեփականության ոչ բնակելի տարածքների օտարում*

1. 2007 և 2008 թթ.-ին համայնքը, խախտելով «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի պահանջները, գնահատել և ավագանու որոշումներով ուղղակի վաճառքով օտարել է ընդհանուր առմամբ 606.0 քմ համայնքային սեփականության ոչ բնակելի տարածք: 2008 թվականին նույնպես օրենքով սահմանված կարգի խախտմամբ, առանց գնահատման, աճուրդով օտարվել է 972,9 քմ ոչ բնակելի տարածք: Վերը նշված 1,578.9 քմ տարածքի վաճառքից համայնքի բյուջե է մուտքագրվել 47,336.4 հազ. դրամ, մինչդեռ տարածքների կադաստրային արժեքը կազմում է 78,175.0 հազ. դրամ: Համայնքի բյուջեն տուժել է առնվազն 30,838.6 հազ. դրամի չափով:

2. Շրջանցելով ՀՀ հողային օրենսգրքի պահանջները՝ օտարվել են պետության սեփականության 6445 քմ ընդհանուր մակերեսով հողատարածքներ, որոնք քաղաքապետարանին հանձնված են եղել վարձակալության իրավունքով: Արդյունքում քաղաքապետարանի անհետևողականության, նոտարի և կադաստրի անհասկանալի գործողությունների պատճառով հողատարածքները դարձել են շինությունները գնած անձանց սեփականություն:

*4. Կանաչ տարածքների խնամք և պահպանում*

<u>***«Դավթաշենի բարեկարգում կանաչապատում» ՍՊԸ***</u> 2006 և 2007 թվականների գործունեության ընթացքում ներկայացրած կատարողական ակտերի համաձայն քաղաքապետարանի կողմից ավելի է վճարվել 11,476.0 հազ. դրամի չափով այն դեպքում, երբ ընկերության հիմնական բանվորական աշխատուժը (թվով 7 հոգի) 2006 թվականի սեպտեմբերի 30-ին ազատված են եղել աշխատանքից, այսինքն՝ փաստացի չեն աշխատել: Վերոնշյալ գումարը, որպես չկատարված աշխատանքի դիմաց վճարում, ենթակա է վերականգնման համայնքի բյուջե:

Ընկերությունը 2007-2008 թվականներին փաստացի զբաղեցրել է համայնքի սեփականության 70 քմ տարածքն առանց վարձակալության պայմանագրի, որի արդյունքում համայնքի բյուջեն չի ստացել 334.3 հազ. դրամի չափով եկամուտ: Վերահսկողության արդյունքում նշված գումարն ընկերության կողմից վերականգնվել է համայնքի բյուջե:

*5. Փողոցների սանմաքրում և աղբահանություն*

***«Դավթաշենի Սանտեխսպասարկում» ՍՊԸ*** 01.01.2006-01.03.2006 թթ. ժամանակահատվածում պետք է իրականացներ համայնքի քաղաքային և տեղական նշանակության փողոցների սանմաքրման և աղբահանության աշխատանքներ՝ 8,367.9 հազ. դրամ արժեքով: Վերը նշված աշխատանքներն իրականացվել են պայմանագրով նախատեսված մակերեսից 25789 քմ պակաս: Փաստացի ընկերությանն ավելի է վճարվել 242.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման: Ընկերությանը սանիտարական վիճակի վերականգնման և մաքրման ծառայությունների համար 2008 թվականին կնքված գնման պայմանագրով չհիմնավորված աշխատանքների դիմաց ավելի է վճարվել 692.0 հազ. դրամ, որը նույնպես ենթակա է վերականգնման:

**Ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ**

Վերահսկիչ պալատի արձանագրած խախտումներին ի պատասխան Երևանի Դավթաշեն թաղային համայնքի ղեկավարի 11.03.2009թ. 29/01-204 գրությամբ տեղեկացվել է, որ բոլոր խախտումներն ու թերությունները ընդունելի են և դրանց վերացման ուղղությամբ արդեն ձեռնարկվում են համապատասխան միջոցառումներ:

## 2.17. Երևան քաղաքի Նոր Նորք համայնք

**Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակաշրջանը՝** 2007թ. և 2008թ. 1-ին կիսամյակ (գույքի օտարման մասով՝ նաև 2006 թ.):

**Վերահսկողության արդյունքներով արձանագրվել է՝**

*1. Համայնքային գույքի կառավարում և օգտագործում*

Համայնքային սեփականության կառավարումն ու օգտագործումը գնահատվում է անարդյունավետ: Հաշվետու ժամանակաշրջանում ուղղակի վաճառքով, առանց աճուրդի օտարվել է 8420.2 մ$^2$ ոչ բնակելի տարածքներ, որի 90%-ը՝ առանց գույքի գնահատման:

*2. Համայնքային գնումներ*

Համայնքի կարիքների համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումները հիմնականում կատարվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտումով: Արձանագրվել է չհիմնավորված ծախս և ապրանքի կորուստ (իրական վնաս) 1,876.3 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

*3. Ոչ բնակելի տարածքների վարձակալություն*

«ՆորՆորք բարեկարգում–սպասարկում» ՀՈԱԿ առանց իրավական հիմքերի համայնքին պատկանող ոչ բնակելի տարածքը «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ տվել է վարձակալության և դրա դիմաց գանձել վարձավճար՝ 3,240.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

*4. «Կանաչապատում» ՓԲԸ կողմից համայնքում իրականացված աշխատանքների և կատարված ծախսերի վերաբերյալ*

Աշխատանքներում թույլ են տրվել ծավալային հավելագրումներ, այսինքն՝ ընկերությանը չկատարած աշխատանքների դիմաց վճարվել է 5,990.5 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

*5. Սանիտարական մաքրման և աղբահանության աշխատանքներ*

«Արազափ» ՍՊԸ բնակիչներից աղբահանության համար սահմանված վճարից ավելի է գանձել 61,240.0 հազ. դրամ, բացի այդ կազմակերպությանը սանիտական մաքրման չկատարված աշխատանքների դիմաց վճարվել է 4,759.3 հազ. դրամ, որը ենթակա է հաշվանցման կամ վերականգնման:

*6. Տեղական տուրքեր*

Չի գանձվել համայնքի ավագանու որոշումներով նախատեսված տեղական տուրք՝ 2,631.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

*7. Գույքահարկ և հողի հարկ*

Գույքահարկի և տույժի մասով համայնքի ավագանու ոչ հիմնավոր որոշումներով հարկ վճարողների համար արտոնություններ են սահմանվել 19,174.5 հազ. դրամ:

*8. Պահպանման ծախսեր*

Կատարվել են առանց հիմնավոր փաստաթղթերի ծախսեր՝ 9,433.9 հազ. դրամ, այդ թվում՝ գործուղման ծախսեր՝ 3,533.0 հազ. դրամ և որպես վառելիք հատկացված միջոցներ՝ 5,900.9 հազ. դրամ, որոնք ենթակա են վերականգնման:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

***ՀՀ կառավարությանը***

• *Համայնքային սեփականության գույքի օտարման գները իրական չափերին մոտեցնելու, գույքի օտարումն արդյունավետ իրականացնելու նպատակով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանել գույքի օտարման նվազագույն գին՝ գույքի գնահատման արժեքի նկատմամբ:*

• *Ձեռնարկել միջոցներ՝ համայնքային սեփականության օտարվող գույքի գինը շուկայականին հնարավորինս մոտեցնելու ուղղությամբ՝ համայնքային բյուջեների եկամուտների ավելացման նպատակով:*

***ՀՀ ֆինանսների նախարարությանը՝***

*Ձեռնարկել միջոցներ՝ «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, գույքահարկի և հողի հարկի գծով համայնքից 2007 թվականի ճշտված եկամտային ցուցանիշների մասին տեղեկատվությունը ստանալուց հետո, ՀՀ 2009թ.-ի պետական բյուջեից համայնքներին հատկացվող դոտացիայի գումարները վերահաշվարկելու ուղղությամբ:*

***Երևանի Կենտրոն, Դավթաշեն և ՆորՆորք համայնքների ղեկավարներին***

*Ձեռնարկել համապատասխան միջոցառումներ թույլ տրված խախտումների արդյունքում, ինչպես նաև գանձման ենթակա, սակայն չգանձված, արձանագրված գումարները համայնքային բյուջե վերականգնելու ուղղությամբ:*

## 2.18. Ընդերքի օգտագործման տրամադրման օրինականության և ընդերքի օգտագործման մասին (ընտրանքային՝ Երևան)

**Վերահսկողությամբ ընդգրկվող ժամանակաշրջանը՝** 2006 - 2007 թվականներ:

**Վերահսկողության արդյունքներով արձանագրվել է.**

Երևանում հանքարդյունահանման նպատակով տրամադրվել է 23, իսկ երկրաբանական ուսումնասիրությունների նպատակով՝ 4 լիցենզիա:

Հանքարդյունահանման նպատակով տրամադրված քսաներեք տեղամասերից հողօգտագործման իրավունքը հավաստող օրենսդրությամբ պահանջվող փաստաթղթեր առկա են միայն վեցի վերաբերյալ: Խախտվել է ՀՀ հողային օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը ՝ պետական լիազորված մարմնի կողմից վերահսկողություն չի իրականացվել հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ:

«Հանքարդյունահանման նպատակով ընդերքօգտագործման լիցենզային պայմանագրի կնքման կարգը և օրինակելի ձևը հաստատելու մասին» ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի և ՀՀ բնապահպանության նախարարի համատեղ հրա-

մանը, ինչպես նաև «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության լիցենզային պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» ՀՀ բնապահպանության նախարարի հրամանը «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթներին և «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքին հակասելու ուժով ենթակա են համարվել անվավեր:

Չի կատարվել ՀՀ կառավարության 09.02.1998թ. «Պինդ օգտակար հանածոների հանքավայրերի պաշարների և կանխատեսումային ռեսուրսների դասակարգումը հաստատելու մասին» թիվ 80 որոշման 32-րդ կետի պահանջը, ըստ որի շահագործվող հանքավայրերում (տեղամասերում) պաշարները ենթակա են վերահաստատման ոչ ուշ, քան 10 տարին մեկ անգամ:

Խախտվել է «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի 42-րդ հոդվածի պահանջը, ըստ որի ընդերքօգտագործողները պարտավոր են ապահովել ընդերքօգտագործման նախագծերի, լեռնային աշխատանքների զարգացման պլանների և սխեմաների պահանջների կատարումը, երկրաբանական, մարկշեյդերական և այլ փաստագրության վարումը, դրանց պահպանումը, պայմանագրային բոլոր պարտավորությունների կատարումը: Արդյունքում, ընդերքօգտագործողների կողմից թաքցվել են մարված պաշարների ծավալները:

Լիազոր մարմինների կողմից բավարար աշխատանքներ չեն տարվել ապօրինի ընդերքօգտագործողների, ինչպես նաև օգտակար հանածոների արդյունահանված և չհաշվառված ծավալների հայտնաբերման ուղղությամբ: Կազմակերպությունների կողմից թույլ տրված բնօգտագործման վճարների սխալ հաշվարկների, ներկայացված հաշվետվությունների անհամապատասխանության, սահմանված չափաքանակների գերազանցման փաստերի, ապօրինի ընդերքօգտագործման դեպքերի, ինչպես նաև կատարված մարկշեյդերական չափագրումների արդյունքում հայտնաբերվել են չհաշվառված օգտակար հանածոների մարված պաշարներ, որոնց համար *հաշվարկված չվճարված բնօգտագործման վճարը կազմել է 78,487.2 հազ. դրամ :*

**ՀՀ բնապահպանության նախարարության վերաբերյալ.**

Երկրաբանական ուսումնասիրությունների աշխատանքների կատարման նախագծերը չեն անցել փորձաքննություն, որը հակասում է «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածին:

Բնապահպանական պետական տեսչությունն ընդերքի օգտագործման, պահպանության և ընդերքն օգտագործման տրամադրելու սահմանված պահանջների նկատմամբ իրականացրել է անբավարար վերահսկողություն: Մասնավորապես, ընդերքն ապօրինի (առանց պայմանագրի) օգտագործվել է «Կվարց» ԱԿ, «Հանքարդ» ՍՊԸ կողմից, ինչպես նաև «Արս ընդ Կար» ՍՊԸ տրամադրված ընդերքի տեղամասերում, «Դելտա ֆրագմենտ» ՍՊԸ կողմից արդյունահանումն իրականացվել է պայմանագրով տրամադրված պաշարից ավելի, արձանագրվել է առանց լիցենզիայի ընդերքօգտագործում «Ավանի աղի կոմբինատ» ՓԲԸ տարածքում գործող «Հանրապետական անձավաբուժական կենտրոն» ՓԲԸ կողմից: Մի շարք հանքավայրերում առկա են հանքարդյունահանման նախագծից շեղում, որն ըստ «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի, էական խախտում է, սակայն պայմանագրերը ուժը կորցրած ճանաչելու, լիցենզիաների գործողությունը կասեցնելու վերաբերյալ, օրենսդրությամբ սահմանված կարգով, լիազորված մարմիններին միջնորդագրեր չեն ներկայացվել: «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքով և Տեսչության կանոնադրությամբ նախատեսված մի շարք գործառույթներ ընդհանրապես չեն իրականացվել:

Նախարարությունը չի վերահսկել լիցենզային պայմանագրերով նախատեսված հատուկ պայմանները՝ պաշարների վերագնահատման վերաբերյալ, և չկատարման արդյունքում պայմանագրերը չեղյալ չեն ճանաչվել՝ խախտելով «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի 15-րդ հոդվածի 5-րդ մասը:

Նախարարության կողմից անհրաժեշտ հսկողություն չի տարվել լիցենզային պայմանագրերով տրամադրված հաշվեկշռային մարվող պաշարների և օգտակար հանածոների պաշարների հաշվեկշռի մասին 5-ՕՀՊՀ տարեկան հաշվետվությունների համապատասխանության նկատմամբ: Անհամապատասխանության փաստեր արձանագրվել են «Գաջեգործ» ՓԲԸ, «Գաջ» ՓԲԸ, «Շինֆորում» ՍՊԸ, «Հազրավարդ» ԱԿ, «Մաժեստիկ» ՍՊԸ, «Կվարց» ԱԿ փաստաթղթերում:

Ստուգման ընթացքում նախագծերին և փորձաքննական եզրակացություններին համապատասխան տարածքների լեռնատեխնիկական վերականգնում, ծառատունկ և փոշենստեցման աշխատանքներ ոչ մի տեղամասում չեն իրականացվել:

Ընդերքօգտագործման պետական ֆոնդերը, որպես ոչ նյութական ակտիվ, չեն գնահատվել և չեն հաշվառվել ՀՀ բնապահպանության նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ հաշվապահական հաշվեկշռում:

**ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության վերաբերյալ.**

Լիարժեք չեն կատարվել «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի պահանջները: Երևան քաղաքում արտադրական վտանգավոր օբյեկտ համարվող 23 ընդերքօգտագործման տեղամասերից Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի ռեեստրում գրանցվել են 16-ը: Հինգ ընդերքօգտագործման տեղամասեր չեն անցել 2006 և 2007թթ. տարեկան փորձաքննություն: Վարչական վարույթներ չեն իրականացվել, որի հետևանքով *ՀՀ պետական բյուջե կարող էր գանձվել 10,000.0 հազ. դրամ տուգանք:*

Նախարարությունը տիրապետում է տեղեկատվության պետական տուրքի միայն առաջին վճարումների մասին, անտեսելով ամենամյա վճարումների իրականացումը:

2005, 2006 և 2007 թվականների ընթացքում սահմանված չափաքանակի 50%-ից պակաս արդյունահանման դեպքում «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածին և լիցենզային պայմանագրերի 10.6 կետին համապատասխան հանքային իրավունքները չեն դադարեցվել:

ՀՀ կառավարության 30.09.2004 թվականի «Հայաստանի Հանրապետության ընդերքի պահպանության և օգտագործման ոլորտի բարելավման առաջնահերթ միջոցառումների մասին» թիվ 1782-Ն որոշման հանձնարարականները չեն կատարվել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և Երևանի քաղաքապետի կողմից:

Երևան քաղաքում վերահսկողությամբ հայտնաբերված խախտումներն ըստ ընդերքօգտագործողների ներկայացված են աղյուսակ 1-ում:

աղյուսակ 1, հազ. դրամ

| Հ/Հ | Կազմակերպությ ան անվանումը | Խախտման բովանդակությունը | ֆինանս-սական խախտ-ման չափը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | **«Արդիբաշ» ՍՊԸ** | | | |
| | Աջափնյակի դոլերիտային բազալտի հանքավայր | Բնօգտագործման վճար օգտակար հանածոյի սահմանված չափաքանակը գերազանցող մասով | 1,575.0 | Ենթակա է վերականգնման ՀՀ պետ բյուջե |
| | | Հողօգտագործում | | Լեռնահատկացմամբ տրամադրված 1.08 հա տարածքի համար չունի հողհատկացում: |
| 2 | **«Կվարց» ԱԿ** | | | |
| | Աստղիկի գիպսատար ապարների և բազալտի հանքավայրի 2-րդ տեղամաս | Բնօգտագործման վճար օգտակար հանածոյի սահմանված չափաքանակը գերազանցող մասով | 3,361.4 | Ենթակա է վերականգնման ՀՀ պետ բյուջե |
| | | Բնօգտագործման վճար ապօրինի շահագործման հետևանքով | 6,913.6 | Ենթակա է վերականգնման ՀՀ պետ բյուջե |
| | | Հողօգտագործում | | Լեռնահատկացմամբ տրամադրված 1.04հա տարածքի վերաբերյալ չունի հողհատկացում: |
| | | Տեխնիկական անվտանգության ռեեստրում գրանցման բացակայություն | 1,000.0 | Տուգանք |
| | | Տեխնիկական անվտանգության փորձաքննության բացակայություն | 1,000.0 | Տուգանք |
| | | Հատկացում շրջակա միջավայրի դրամագլխին | 3,318.0 | Ենթակա է վճարման |
| | Աստղիկի գիպսատար ապարների և բազալտի հանքավայրի 3-րդ տեղամաս | Բնօգտագործման վճար օգտակար հանածոյի սահմանված չափաքանակը գերազանցող մասով | 2,269.0 | Ենթակա է վերականգնման ՀՀ պետ բյուջե |
| | | Հողօգտագործում | | Լեռնահատկացմամբ տրամադրված 0.85 հա տարածքի վերաբերյալ չունի հողհատկացում: |
| | | Տեխնիկական անվտանգության ռեեստրում գրանցման բացակայություն | 1,000.0 | Տուգանք |
| | | Տեխնիկական անվտանգության փորձաքննության բացակայություն | 1,000.0 | Տուգանք |
| 3 | **«Դելտա-ֆրագմենտ»ՍՊԸ** | | | |
| | Աստղիկի գիպսատար ապարների և բազալտի հանքավայրի 2-րդ տեղամաս | Բնօգտագործման վճար ապօրինի շահագործման հետևանքով | 862.4 | Ենթակա է վերականգնման ՀՀ պետ բյուջե |
| | | Հողօգտագործում | | Լեռնահատկացմամբ տրամա-դրված 1.04հա տարածքի վե-րաբերյալ չունի հողհատկացում: |
| | | Հատկացում շրջակա միջավայրի դրամագլխին | 2,500.0 | Ենթակա է վերականգնման |
| 4 | **«Վարդաշենի Հանք» ՍՊԸ** | | | |
| | Ջրվեժի բազալտի հանքավայր | Բնօգտագործման վճար օգտակար հանածոյի սահմանված չափաքանակը գերազանցող մասով | 3,226.8 | Ենթակա է վերականգնման ՀՀ պետ բյուջե |
| | | Բնօգտագործման վճար, դրույքաչափերի սխալ կիրառման հետևանքով | 5,915.1 | Ենթակա է վերականգնման ՀՀ պետ բյուջե |
| | | Պաշարների վերագնահատում | | Չի կատարվել պայմանագրի հատուկ պայմանը պաշարների վերագնահատման վերաբերյալ |
| | | Հատկացում շրջակա միջավայրի դրամագլխին | | Բնապահպանության նախ. կողմից «Շրջակա միջավայրի պահպանության» դրամագլխին հատկացումներ չեն սահմանվել: |

| Հ/Հ | Կազմակերպության անվանումը | Խախտման բովանդակությունը | Ֆինան-սական խախտ-ման չափը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 5 | **«Արս ընդ Կար» ՍՊԸ** | | | |
| | Ջրվեժի գիպսակավերի և բազալտի հանքավայր | Հողօգտագործում | | Լեռնահատկացմամբ տրամադրված 1.5 հա տարածքի համար չունի հող-հատկացում: Ընդերքօգտագործման տեղամասի համար հողամասի տրա-մադրման վերաբերյալ դիմումը Երևա-նի քաղաքապետի կողմից մերժվել է, քանի որ այն ընդգրկված է բնակա-վայրերի հողերի կատեգորիայում |
| | | Հանքային իրավունքի դադարեցում | | Սահմանված չափաքանակի 50%-ից պակաս 3 տարվա ընթացքում արդյու-նահանում իրականացնելու համար, հանքային իրավունքը ենթակա է դա-դարեցման (ՀՀ Կոնցեսիայի մասին օրենքի 32 հ-ծ, Լիցենզային պայմա-նագրի 10.3.1. կետ): Չի կատարվել պայմանագրի հատուկ պայմանը պա-շարների վերագնահատման վերա-բերյալ |
| | | Հատկացում շրջակա միջավայրի դրամագլխին | | Բնապահպանության նախ. կողմից «Շրջակա միջավայրի պահպանութ-յան» դրամագլխին հատկացումներ չեն սահմանվել: |
| | | Ապօրինի ընդերքօգտագործում | | Ընկերությանը տրամադրված տեղա-մասում, ըստ ընկերության տնօրենի տեղամասը չի 2006թ. չի շահա-գործվել, սակայն արձանագրվել է ապօրինի ընդերքօգտագործում |
| 6 | **«Երևանյան բազալտ» ՍՊԸ** | | | |
| | Սպանդարյանի բազալտ | Բնօգտագործման վճար | 210.2 | Ենթակա է վերականգնման ՀՀ պետ բյուջե |
| 7 | **«Իքս-Իգրեկ» ՍՊԸ** | | | |
| | Հաղթանակի բազալտի հանքավայր | Բնօգտագործման վճար | 2,106.2 | Ենթակա է վերականգնման ՀՀ պետ բյուջե |
| | | Հողօգտագործում | | Լեռնահատկացմամբ տրամա-դրված 6.87 հա տարածքից 1.49 հա համար չունի հողհատկացում |
| | | Հատկացում շրջակա միջավայրի դրամագլխին | 274.0 | Ենթակա է վերականգնման |
| 8 | **«Հազրավարդ» ԱԿ** | | | |
| | Նորքի բազալտի հանքավայրի «Արմինե» տեղամաս | Բնօգտագործման վճար չափագրման տարբերություն | 2,364.3 | Ենթակա է վերականգնման ՀՀ պետ բյուջե |
| | | Բնօգտագործման վճար, դրույքաչափերի սխալ կիրառման հետևանքով | 5,447.2 | Ենթակա է վերականգնման ՀՀ պետ բյուջե |
| | | Տեխնիկական անվտանգության փորձաքննության բացակայություն | 1,000.0 | Տուգանք |
| | | Հողօգտագործում | | Հողամասի նպատակային նշանակությունը՝ անտառային հող |
| 9 | **«Շինֆորում» ՍՊԸ** | | | |
| | Սպանդարյանի բազալտի հանքավայր | Բնօգտագործման վճար | 3,662.3 | Ենթակա է վերականգնման պետ բյուջե |
| | | Հողօգտագործում | | Լեռնահատկացմամբ տրամադրված 5.81 հա տարածքի վերաբերյալ չունի հողհատկացում |
| 10 | **«Գիկար» ՍՊԸ** | | | |
| | Ողջաբերդի գիպսատար կավի հանքավայր | Բնօգտագործման վճար չափաքանակը գերազանցող մասով | 418.3 | Ենթակա է վերականգնման պետ բյուջե |
| | | Բնօգտագործման վճար | 146.7 | Ենթակա է վերականգնման պետ բյուջե |
| | | Բնօգտագործման վճար, դրույքաչափերի սխալ կիրառման հետևանքով | 181.4 | Ենթակա է վերականգնման պետ բյուջե |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Հողօգտագործում | | Լեռնահատկացմամբ տրամադրված 6.58 հա տարածքի վերաբերյալ չունի հողհատկացում |
| **Հ/Հ** | **Կազմակերպության անվանումը** | **Խախտման բովանդակությունը** | **Ֆինան-սական խախտ-ման չափը** | **Ծանոթություն** |
| 11 | **«Մաժեստիկ» ՍՊԸ** | | | |
| | Ողջաբերդի անդեզիտաբ ազալտի հանքավայրի Լեռնոյե տեղամաս | Բնօգտագործման վճար | **1,116.7** | Ենթակա է վերականգնման պետ բյուջե |
| | | Բնօգտագործման վճար, դրույքաչափերի սխալ կիրառման հետևանքով | **2,765.5** | Ենթակա է վերականգնման պետ բյուջե |
| | | Տեխնիկական անվտանգության փորձաքննության բացակայություն | **1,000.0** | Տուգանք |
| | | Հողօգտագործում | | Լեռնահատկացմամբ տրամադրված 23.2 հա տարածքի վերաբերյալ չունի հողհատկացում |
| 12 | **«Ավանի աղի կոմբինատ» ՓԲԸ** | | | |
| | Ավանի աղի հանք | Առանց լիցենզիայի ընդերքօգտագործում: | | Լեռնահատկացմամբ տրամադրված տարածքում գործում է առողջա-պահ. նախ. անձավաբուժության կենտրոնը առանց ընդերքօգտա-գործման լիցենզիայի: |
| | | Հատկացում շրջակա միջավայրի դրամագլխին | | Բնապահպան. նախ. կողմից «Շրջակա միջավայրի պահպանության» դրամա-գլխին հատկացումներ չեն սահմանվել: |
| 13 | **«Գաջեգործ» ՓԲԸ** | | | |
| | Սարի թաղի գիպսաստար կավի հանքավայր | Հողօգտագործում | | Հողամասի վարձակալության պայմանագիրը պետական իրավունքի գրանցում չի ստացել |
| | | Հանքային իրավունքի դադարեցում | | Սահմանված չափաքանակի 50%-ից պակաս 3 տարվա ընթացքում արդյու-նահանում իրականացնելու համար, հանքային իրավունքը ենթակա է դա-դրեցման (ՀՀ Կոնցեսիայի մասին օրեն-քի 32 հ-ծ, Լիցենզային պայմանագրի 10.3.1. կետ) |
| | Սարի թաղի բազալտ | Հողօգտագործում | | Հողամասի վարձակալության պայմանագիրը պետական իրավունքի գրանցում չի ստացել |
| | | Հանքային իրավունքի դադարեցում | | Սահմանված չափաքանակի 50%-ից պակաս 3 տարվա ընթացքում արդյունահանում իրականացնելու համար, հանքային իրավունքը ենթակա է դադրեցման (ՀՀ Կոնցեսիայի մասին օրենքի 32 հ-ծ, Լիցենզային պայմանագրի 10.3.1. կետ) |
| | Ջրվեժի գիպսաստար կավ | Հողօգտագործում | | Հողամասի վարձակալության պայմանագիրը պետական իրավունքի գրանցում չի ստացել |
| | | | | |
| | | Հանքային իրավունքի դադարեցում | | Սահմանված չափաքանակի 50%-ից պակաս 3 տարվա ընթացքում արդյունահանում իրականացնելու համար, հանքային իրավունքը ենթակա է դադրեցման (ՀՀ Կոնցեսիայի մասին օրենքի 32 հ-ծ, Լիցենզային պայմանագրի 10.3.1. կետ) |
| 14 | **«Գաջ» ՓԲԸ** | | | |
| | Ջրվեժի գիպսաստար կավի հանքավայրի 2-րդ տեղամաս | Բնօգտագործման վճար օգտակար հանածոյի սահմանված չափաքանակը գերազանցող մասով | **1,298.4** | Ենթակա է վերականգնման ՀՀ պետ բյուջե |
| | | Հողօգտագործում | | Լեռնահատկացմամբ տրամադրված 4.5 հա տարածքի վերաբերյալ չունի հողհատկացում |
| | Ջրվեժի գիպսաստար կավի հանքավայրի 1-ին հանքամարմին | Հանքային իրավունքի դադարեցում | | Սահմանված չափաքանակի 50%-ից պակաս 3 տարվա ընթացքում արդյո-ւնահանում իրականացնելու համար, հանքային իրավունքը ենթակա է դա-դարեցման (ՀՀ Կոնցեսիայի մասին օրենքի 32 հ-ծ, Լիցենզային պայմանագրի 10.3.1. կետ) |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Հողօգտագործում | | Լեռնահատկացմամբ տրամադրված10.2 հա տարածքից Կոտայքի մարզում 6.058 հա տարածքի համար չունի հողհատկացում, |
| **Հ/Հ** | **Կազմակերպության անվանումը** | **Խախտման բովանդակությունը** | **ֆինանսական խախտման չափը** | **Ծանոթություն** |
| 15 | **«Գրանիտ» ԱԿ** | | | |
| | Փարաքարի բազալտի հանքավայրի Հաղթանակի տեղամաս | Բնօգտագործման վճար չափաքանակը գերազանցող մասով | **4,314.0** | Ենթակա է վերականգնման ՀՀ պետ բյուջե |
| | | Հողօգտագործում | | Լեռնահատկացմամբ տրամադրված 1.75 հա տարածքի վարձակալության պայմանագիրը չի ստացել պետական գրանցում: |
| | | Հատկացում շրջակա միջավայրի դրամագլխին | **277.8** | Ենթակա է վերականգնման |
| 16 | **«Գյուղշինսպասարկում» ՍՊԸ** | | | |
| | Նորքի բազալտի հանքավայրի Քարաժայռի տեղամաս | Բնօգտագործման վճար օգտակար հանածոյի սահմանված չափաքանակը գերազանցող մասով | **1,005.6** | Ենթակա է վերականգնման ՀՀ պետ բյուջե |
| | | Բնօգտագործման վճար չափագրման տարբերություն հետևանքով | **5,265.9** | Ենթակա է վերականգնման ՀՀ պետ բյուջե |
| | | Բնօգտագործման վճար, դրույքաչափերի սխալ կիրառում | **262.7** | Ենթակա է վերականգնման ՀՀ պետ բյուջե |
| | | Տեխնիկական անվտանգության փորձաքննության բացակայություն | **1,000.0** | Տուգանք |
| | | Հողօգտագործում | | Լեռնահատկացմամբ տրամադրված 2.3 հա տարածքի համար չունի հողհատկացում |
| | | Հատկացում շրջակա միջավայրի դրամագլխին | **163.0** | Ենթակա է վերականգնման |
| 17 | **«Հանքարդ» ՍՊԸ** | | | |
| | Ջրվեժի գիպսատար կավերի և բազալտի հանքավայր | Բնօգտագործման վճար (ընկերությունը չունենալով հանքային իրավունք կատարել է ապօրինի շահագործում) | **23,798.5** | Ենթակա է վերականգնման ՀՀ պետ բյուջե |
| | | Հողօգտագործում | | Լեռնահատկացմամբ տրամադրված 4.85 հա տարածքի համար չունի հողհատկացում |
| 18 | **«Ամելիա մայնինգ Քամփնի» ՓԲԸ** | | | |
| | Սպանդարյանի բազալտի հանքավայր | Հողօգտագործում | | Լեռնահատկացումը կատարվել է 2008թ., տրամադրված 5.81 հա տարածքի համար ստուգման պահին դեռևս հողհատկացում չկար |
| 19 | **«Ուրցաքար» ՍՊԸ** | | | |
| | Նորքի բազալտի հանքավայրի «Գոռ» տեղամաս | Հողօգտագործում | | Լեռնահատկացմամբ տրամադրված 2.0 հա տարածքի համար չունի հողհատկացում |

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը, ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությանը.***

*1. Իրականացնել միջոցառումներ ստուգման ընթացքում արձանագրված խախատումների վերացման, «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքների և լրացուցիչ վճարման ենթակա բնօգտագործման վճարների՝ ՀՀ պետական բյուջե գանձման ուղղությամբ.*

*1. Արդյունահանված ծավալների շարժի նկատմամբ հսկողության նպատակով ընդերքօգտագործող կազմակերպություններում ներդնել և վարել արդյունահանված ծավալների վերաբերյալ օրական գրանցման գրքեր:*

***Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը.***
*Հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 91-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը՝ միջոցներ ձեռնարկել «Հանքարդյունահանման նպատակով ընդերքօգտագործման լիցենզային պայմանագրի կնքման կարգը և օրինակելի ձևը հաստատելու մասին» ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման և ՀՀ բնապահպանության նախարարների համատեղ հրամանը, ինչպես նաև «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության լիցենզային պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» ՀՀ բնապահպանության նախարարի հրամանը անվավեր ճանաչելու ուղղությամբ:*

***Հայաստանի Հանրապետության կառավարությանը***
*1. Վերանայել ՀՀ կառավարության 30.09.2004 թվականի՝ «Հայաստանի Հանրապետության ընդերքի պահպանության և օգտագործման ոլորտի բարելավման առաջնահերթ միջոցառումների մասին» թիվ 1782-Ն որոշման հանձնարարականները:*
*2. Քննարկել ընդերքօգտագործման նպատակով հողօգտագործման օրինականացման խնդիրը:*
*3. Քննարկել օգտակար հանածոների արդյունահանման հետ չկապված ստորերկրյա կառույցների ստեղծման նպատակով ընդերքօգտագործման օրինականացման խնդիրը:*
*4. Հանձնարարել ընդերքօգտագործման ոլորտում լիազոր մարմնին՝ վարել բոլոր հանքային իրավունքների (ուսումնասիրության և ուսումնասիրության հատուկ, հանքարդյունահանման և հանքարդյունահանման հատուկ լիցենզիաներ) միասնական գրանցամատյան, ինչպես նաև ստեղծել հանրապետությունում օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման ենթակա ընդերքի բոլոր տեղամասերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվական բազա:*
*5. Ամրագրել երկրաբանական ուսումնասիրության և հանքավայրերի շահագործման նախագծերի փորձաքննության իրականացման միասնական նորմատիվ պահանջներ և սահմանել փորձաքննության իրականացումը միասնական համակարգի միջոցով:*
*6. Հանձնարարել ընդերքն օգտագործման տրամադրման բնագավառում լիազոր մարմնին վերանայել «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (Կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքով նախատեսված «Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի» հատկացումների գումարների չափերի հիմնավորությունը և վերացնել նախատեսված բացառությունները:*
*7. Քննարկել օգտակար հանածոների արդյունահանման պայմանագրերում արտադրանքի բաժանման հիմունքների ամրագրման խնդիրը:*
*8. Վերանայել ՀՀ կառավարության 09.02.1998 թ. «Պինդ օգտակար հանածոների հանքավայրերի պաշարների և կանխատեսումային ռեսուրսների դասակարգումը հաստատելու մասին» թիվ 80 որոշման 32-րդ կետի պահանջով շահագործվող հանքավայրերում /տեղամասերում/ հանքային հումքի կոնդիցիաների և պաշարների՝ ոչ ուշ, քան 10 տարին մեկ անգամ վերահաստատման խնդիրը:*

## 2.19. Ընդերքի օգտագործման տրամադրման օրինականության և ընդերքի օգտագործման մասին (ընտրանքային)

<u>Վերահսկողությամբ ընդգրկվող ժամանակաշրջանը՝</u> 01.01.2006-01.07.2008թթ.:

<u>Վերահսկողության արդյունքներով արձանագրվել է.</u>

1. Ընտրանքային կարգով վերահսկողության են ենթարկվել հանքային իրավունք կրող 20 սուբյեկտ՝ 41 հանքավայր:
2. Հայտնաբերվել են հանքային իրավունքներով տրամադրված տարածքից դուրս (ապօրինի) հանքարդյունահանման 11 դեպք, որի արդյունքում հաշվարկվել է շուրջ 22,500.0 հազ. դրամ բնօգտագործման վճար, որը ենթակա է վերականգնման պետական բյուջե:
3. «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասով և 20-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով հաշվարկվել է շուրջ 11,000.0 հազ. դրամ լրացուցիչ բնօգտագործման վճար, որը ենթակա է վերականգնման պետական բյուջե:
4. Հայտնաբերվել է 126.8 խմ տուֆի, 46,185.9 խմ լիթոիդային պեմզայի, 10,202.0 խմ հրաբխային խարամի շուրջ 83,000.0 հազ. դրամի չարտացոլված իրացման շրջանառություն, որից գոյացող հասույթը, հարկային մարմինների կողմից սահմանված կարգով հաշվարկվելու և արձանագրվելու արդյունքում, ենթակա է վերականգնման պետական բյուջե:
5. 20 կազմակերպություններից 6-ը սահմանված կարգով չեն անցկացրել արտադրական վտանգավոր օբյեկտ համարվող հանքավայրերի տեխնիկական անվտանգության փորձաքննություն, ինչի հետևանքով յուրաքանչյուր դեպքի համար պետք է նշանակվի տուգանք՝ մեկ մլն դրամի չափով:
6. Լիցենզային պայմանագրերի 5.4.2. կետի պահանջը 41 հանքավայրերից կատարվել է միայն 9-ում, հետևաբար, երկրաբանական և մարկշեյդերական պարբերաբար սպասարկումներ չկատարելու և անհրաժեշտ փաստաթղթեր չվարելու յուրաքանչյուր դեպքի համար, թվով 17 ընդերքօգտագործող կազմակերպությունների պաշտոնատար անձինք, (ընդհանուր առմամբ՝ 32 դեպք) «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի $60^1$ հոդվածով սահմանված կարգով պետք է տուգանվեն նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

   Հայտնաբերվել են հողամասի նպատակային նշանակությանը չհամապատասխանող հողօգտագործման 4, առանց հողամասի վարձակալության պայմանագիր կնքելու հող-օգտագործման 4, առանց հողամասի վարձակալության պայմանագրի նոտարական վավերացում և դրանից ծագող իրավունքների պետական գրանցում իրականացնելու հողօգտագործման 8 և ընդերքի իրավունքը հաստատող փաստաթղթերին չհամապատասխանող հողահատկացման 17 դեպք (աղյուսակ1):

*աղյուսակ 1*

| Կազմակերպության անվանումը | Խախտման բովանդակությունը | Խախտման չափը | Ծանոթություն |
|---|---|---|---|
| | | *«ՄԳՄ Անդրգրանտ» ՍՊԸ* | |
| Բյուրականի տուֆի հանքավայր | Բնօգտագործման վճար (5 ապօրինի շահագործվող տեղամաս) | 8,990.5 | Ենթակա է վճարման ՀՀ պետ. բյուջե |
| Կոշի տուֆի հանքավայր | Բնօգտագործման վճար (ապօրինի շահագործվող տեղամաս) | 1,685.5 | Ենթակա է վճարման ՀՀ պետ. բյուջե |
| Ուջանի տուֆի հանքավայր | Բնօգտագործման վճար (ապօրինի շահագործվող տեղամաս) | 540.3 | Ենթակա է վճարման ՀՀ պետ. բյուջե |
| | | *«Քար և ավազ» ՓԲԸ* | |
| Ջրաբերի լիթոիդային պեմզայի հանքավայր | Բնօգտագործման վճար (ապօրինի շահագործվող տեղամաս) | 1,592.0 | Ենթակա է վճարման ՀՀ պետ. բյուջե |
| | Հանքային իրավունքի դադարեցում | | Սահմանված չափաքանակի 50%-ից պակաս 3 տարվա ընթացքում արդյունահանում իրականացնելու համար, ընկերության հանքային իրավունքը ենթակա է դադարեցման (ՀՀ Կոնցեսիայի մասին օրենքի 32 հ-ծ, Լիցենզային պայմանագրի 10.3.1. կետ) |
| Արմավիրի մարզի Փարաքարի բազալտի հանքավայր | Բնօգտագործման վճար | 258.6 | Ենթակա է վճարման ՀՀ պետ. բյուջե |
| | Հանքային իրավունքի դադարեցում | | Սահմանված չափաքանակի 50%-ից պակաս 3 տարվա ընթացքում արդյունահանում իրականացնելու համար, ընկերության հանքային իրավունքը ենթակա է դադարեցման ( ՀՀ Կոնցեսիայի մասին օրենքի 32 հ-ծ, Լիցենզային պայմանագրի 10.3.1. կետ) |
| Նորագյուղի անդեզիտային բազալտի հանքավայր | Բնօգտագործման վճար | 816.9 | Ենթակա է վճարման ՀՀ պետ. բյուջե |
| | Հանքային իրավունքի դադարեցում | | Սահմանված չափաքանակի 50%-ից պակաս 3 տարվա ընթացքում արդյունահանում իրականացնելու համար, ընկերության հանքային իրավունքը ենթակա է դադարեցման ( ՀՀ Կոնցեսի-այի մասին օրենքի 32 հ-ծ, Լիցենզային պայմանագրի 10.3.1. կետ) |
| Խարկովի տուֆի հանքավայր | Հանքային իրավունքի դադարեցում | | Սահմանված չափաքանակի 50%-ից պակաս 3 տարվա ընթացքում արդյունահանում իրականացնելու համար, ընկերության հանքային իրավունքը ենթակա է դադարեցման ( ՀՀ Կոնցեսիայի մասին օրենքի 32 հ-ծ, Լիցենզային պայմանագրի 10.3.1. կետ) |
| Անիի Քարանձավի տուֆի հանքավայր | Հանքային իրավունքի դադարեցում | | Սահմանված չափաքանակի 50%-ից պակաս 3 տարվա ընթացքում արդյունահանում իրականացնելու համար, ընկերության հանքային իրավունքը ենթակա է դադարեցման ( ՀՀ Կոնցեսիայի մասին օրենքի 32 հ-ծ, Լիցենզային պայմանագրի 10.3.1. կետ) |

| Կազմակերպության անվանումը | Խախտման բովանդակությունը | Խախտման չափը | Ծանոթություն |
|---|---|---|---|
| *«ԲՖՅ» ԲԲԸ* Քյորփլիի ֆերզիտային տուֆի հանքավայր | Բնօգտագործման վճար | 1,849.6 | Ենթակա է վճարման ՀՀ պետ. բյուջե |
| | Տեխնիկական անվտանգության փորձաքննության բացակայություն | 1,000.0 | Տուգանք |
| | Հանքավայրի պաշարների վերահաստատում | | Անհրաժեշտ է դադարեցնել հանքավայրի շահագործումը և ՀՀ կառ. 09.02.1998թ. թիվ 80 որոշման 32 կետի բ) ենթակետի համաձայն կատարել հանքավայրի պաշարների վերահաստատում |
| *«Բազալտ» ԱԿ* | | | |
| Գյամրեզի բազալտի հանքավայր | Բնօգտագործման վճար | 586.9 | Ենթակա է վճարման ՀՀ պետ. բյուջե |
| Արամուսի բազալտի հանքավայր | Հողօգտագործում | | Վարձակալության ընդհանուր 3.2 հա տարածքից 3.0 հա նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է |
| *«Ֆրակցիա» ԲԲԸ* | | | |
| Ջրաբերի լիթոիդային պեմզայի հանքավայր | Բնօգտագործման վճար | 1,780.1 | Ենթակա է վճարման ՀՀ պետ. բյուջե |
| | Հասույթ իրացման շրջանառություն | 48,300.0 | Առաջացնում է հարկային պարտավորություն |
| *«Վառմաշ» ՍՊԸ* | | | |
| Լեռնաջրի ԱԿԽ | Բնօգտագործման վճար (ապօրինի շահագործում) | 2,547.4 | Ենթակա է վճարման ՀՀ պետ. բյուջե |
| | Հողօգտագործում | | Լեռնահատկացման ակտ չունի Հողի նպատակային նշանակությունը-գյուղատնտեսական |
| Այրումի գիպսատար կավի հանքավայր | Հողօգտագործում | | Լեռնահատկացման ակտ չունի |
| | Տեխնիկական անվտանգության փորձաքննության բացակայություն | 1,000.0 | Տուգանք |
| *«Կարիեր Ինվեստ» ՍՊԸ* | | | |
| Կարապիճորի լիթոիդային պեմզայի հանքավայր | Բնօգտագործման վճար | 121.2 | Ենթակա է վճարման ՀՀ պետ. բյուջե |
| | Հողօգտագործում | | Ընդհանուր երկու հանքավայրերի համար չունի վարձակալության պայմանագիր, վարձակալության պայմանագիրը ֆիզ. անձի՝ նախկին տնօրենի անունով է 26 հա տարածքի համար |
| Կարապիճորի բազալտի հանքավայր | Հողօգտագործում | | |

| Կազմակերպության անվանումը | Խախտման բովանդակությունը | Խախտման չափը | Ծանոթություն |
|---|---|---|---|
| ***«Բազմաբերդ » ՍՊԸ***<br><br>Վերին Բազմաբերդի տուֆի հանքավայր | Բնօգտագործման վճար | 157.5 | Ենթակա է վճարման ՀՀ պետ. բյուջե |
| | Հասույթ իրացման շրջանառություն | 507.6 | Առաջացնում է հարկային պարտավորություն |
| | Հանքավայրի պաշարների վերահաստատում | | Անհրաժեշտ է դադարեցնել հանքավայրի շահագործումը և ՀՀ կառ. 09.02.1998թ. թիվ 80 որոշման 32 կետի բ) ենթակետի համաձայն կատարել հանքավայրի պաշարների վերահաստատում |
| ***«Ավագ և Աշոտ » ՍՊԸ***<br>Կաքավնածորի տուֆի հանքավայր | Տեխնիկական անվտանգության փորձաքննության բացակայություն | 1,000.0 | Տուգանք |
| ***«Անիպեմզա կոմբինատ» ԲԲԸ***<br><br>Անիպեմզայի պեմզային ապարների և տուֆի հանքավայր | Հանքային իրավունքի դադարեցում | | Սահմանված չափաքանակի 50%-ից պակաս 3 տարվա ընթացքում արդյունահանում իրականացնելու համար, ընկերության հանքային իրավունքը ենթակա է դադարեցման ( ՀՀ Կոնցեսիայի մասին օրենքի 32 հ-ծ, Լիցենզային պայմանագրի 10.3.1. կետ) |
| | Հատուկ պայման | | Անհրաժեշտ է դադարեցնել հանքավայրի շահագործումը և ՀՀ կառ. 09.02.1998թ. թիվ 80 որոշման 32 կետի բ) ենթակետի համաձայն կատարել հանքավայրի պաշարների վերահաստատում |
| | Հողօգտագործում | | Հողամասի վարձակալության պայմանագիր չունի |
| | Տեխնիկական անվտանգության փորձաքննության բացակայություն | 1,000.0 | Տուգանք |
| ***«Սերժմոսկովյան» ԲԲԸ***<br>Աղամի ԱԿԽ | Հողօգտագործում | | Հողամասի վարձակալության պայմանագրից ծագող իրավունքը պետական գրանցում չի ստացել |
| ***«Իջևանի ճՇՇ» ՓԲԸ***<br>Գետահովիտի ավազակոպճային խառնուրդի հանքավայր | Լիցենզիայի տուրք | 500.0 | Ենթակա է վճարման ՀՀ պետ. բյուջե |
| | Հողի վարձավճար | 98.2 | Ենթակա է վճարման |
| | Հողօգտագործում | | Հողամասի վարձակալության պայմանագրից ծագող իրավունքը պետական գրանցում չի ստացել |
| ***«Լոռի ճՇՇ» ՓԲԸ***<br>Ղուրսալի-Խաչակապի ավազակոպճային խառնուրդի հանքավայր | Հողի վարձավճար | 313.1 | Ենթակա է վճարման ՀՀ պետ. բյուջե |
| | Տեխնիկական անվտանգության փորձաքննության բացակայություն | 1,000.0 | Տուգանք |
| | Հողօգտագործում | | Վերակնքել է նոր պայմանագիր,որը իրավունքի գրանցում չի ստացել |

| Կազմակերպության անվանումը | Խախտման բովանդակությունը | Խախտման չափը | Ծանոթություն |
|---|---|---|---|
| ***«Հասակ» ՍՊԸ*** | | | |
| Վերին Բազմաբերդի տուֆի հանքավայր | Հանքավայրի պաշարների վերահաստատում | | Անհրաժեշտ է դադարեցնել հանքավայրի շահագործումը և ՀՀ կառ. 09.02.1998թ. թիվ 80 որոշման 32 կետի բ) ենթակետի համաձայն կատարել հանքավայրի պաշարների վերահաստատում |
| | Բնօգտագործման վճար | 1,418.3 | Ենթակա է վերականգման ՀՀ պետ. բյուջե Հանքավայրի պաշարները Պաշարների Պետական Հանձնաժողովի արձանագ-րությամբ և լիցենզային պայմանագրով հաստատված են որպես բարձր արժեքի օգտակար հանածո` (երեսա-պատման սալիկ) սակայն ընկերությունը փաստացի արտահանում է ցածր արժեքի օգտակար հանածո (ուղիղ կտրվածի քար): |
| | Տեխնիկական անվտանգության փորձաքննության բացակայություն | 1,000.0 | Տուգանք |
| | Հողօգտագործում | | Վարձակալ.պայմանագիրը իրավունքի պետական գրանցում չի ստացել |
| ***«Գրիար» ՓԲԸ*** | | | |
| Ջրաբերի լիթոիդային պեմզայի հանքավայր | Բնօգտագործման վճար | 518.4 | Ենթակա է վճարման ՀՀ պետ. բյուջե |
| | Հասույթ իրացման շրջանառություն | 15,600.0 | Առաջացնում է հարկային պարտավորություն |
| Աշտարակի հրաբխային խարամի հանքավայր | Բնօգտագործման վճար | 775.0 | Ենթակա է վճարման ՀՀ պետ. բյուջե |
| | Հասույթ իրացման շրջանառություն | 18,300.0 | Առաջացնում է հարկային պարտավորություն |
| ***«Գետն-Գրուպ» ՓԲԸ*** | | | |
| Արաքսի ԱԿԽ ավազի հանքավայր | Բնօգտագործման վճար (ապօրինի շահագործվող տեղամաս) | 7,000.0 | Ենթակա է վճարման պետ. բյուջե «Գետն -Գրուպ» ՓԲԸ տնօրենի համապա-տասխան տեղեկա-նքի համաձայն, հանքավայրում կա շուրջ 40000մ$^3$ ծավալի ապօրինի արդյունահանման փաստ: ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի գյուղապետի գրության համաձայն, մինչև «Գետն- Գրուպ» ՓԲԸ կողմից հանքա-վայրը շահագործելն ընկած ժամանակահատվածում, հանքավայրին կից եղել է միայն մեկ ավազահանք` «Երևանշին» ԲԲԸ «Լցոն » ԴՓԲԸ-ն: |
| Չիչհանքրովի պեմզային տուֆի հանքավայր | Հողօգտագործում | | Հողամասի վարձակալության պայմանագրից ծագող իրավունքի պետական գրանցում չի ստացել |
| Բագրավանի պեմզային տուֆի հանքավայր | Հողօգտագործում | | Հողամասի վարձակալության պայմանագրից ծագող իրավունքի պետական գրանցում չի ստացել |
| Սևքարի կարբոնատացված փխ-րոկլաստիկ տուֆիտների հանքավայր | Հողօգտագործում | | Հողամասի վարձակալության պայմանագրից ծագող իրավունքի պետական գրանցում չի ստացել |

<table>
<tr><th>Կազմակերպության անվանումը</th><th>Խախտման բովանդակությունը</th><th>Խախտման չափը</th><th>Ծանոթություն</th></tr>
<tr><td rowspan="2">«Քարաբերդ» ՍՊԸ<br>Սարալի անդեզիտա-բազալտի հանքավայր</td><td>Բնօգտագործման վճար</td><td>2,925.4</td><td>Ենթակա է վճարման ՀՀ պետ. բյուջե</td></tr>
<tr><td>Հողօգտագործում</td><td></td><td>Հողամասի ոչ նպատակային նշանակության ենթավարձակալություն</td></tr>
<tr><td>Պետական լիազորված մարմին՝</td><td>Երեք տարվա ընթացքում սահմանված չափաքանակի 50%-ից պակաս արդյունահանման 6 դեպք</td><td colspan="2">Ընդերքօգտագործողների հանքային իրավունքները պետական լիազորված մարմնի կողմից չեն դադարեցվել</td></tr>
<tr><td rowspan="5">(մինչև 10.07.2008թ. ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն, այնուհետև՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն)</td><td>ՀՀ կառավարության 09.02.1998թ. որոշմամբ (մի շարք դեպքերում նաև լիցենզային պայմանագրով կամ լիցենզիայով) սահմանված պաշարների վերահաստատման պահանջը չկատարելու 7 դեպք</td><td colspan="2">Պետական լիազորված մարմնի կողմից համապատասխան միջոցներ չեն ձեռնարկվել</td></tr>
<tr><td>Լիցենզային պայմանագրերի 5.4.5 և 5.4.9 կետերով նախատեսված պարտավորությունների չկատարման 41 դեպք</td><td colspan="2">Պետական լիազորված մարմնի կողմից պատշաճ հսկողություն չի իրականացվել պայմանագրային պարտավորություն-ների կատարման նկատմամբ</td></tr>
<tr><td>Լիցենզային պայմանագրի 5.2.1 կետի չկատարման 41 դեպք</td><td colspan="2">Հանքավայրերը պետական լիազորված մարմնի կողմից ընդերքօգտագործողներին են տրամադրվում առանց համապատասխան հանձնում-ընդունում կատարելու</td></tr>
<tr><td>Հանքային իրավունքներ ձեռքբերելու համար օրենսդրությամբ սահմանված ժամկետը (01.07.2004թ.) խախտելու 11 դեպք</td><td colspan="2">Պետական լիազորված մարմնի կողմից հանքային իրավունքները տրամադրել են սահմանված ժամկետն անցնելուց հետո:</td></tr>
<tr><td colspan="3">Հանքային իրավունքների տրամադրման գործընթացում առկա են պետական լիազորված մարմնի կողմից թույլ տրված բազմաթիվ այլ խախտումներ և բացթողումներ:</td></tr>
</table>

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությանը***

*Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել լիազոր մարմնի համար իրավական ակտերով ամրագրված իրավասությունների արդյունավետ իրականացումն ապահովելու ուղղությամբ: Այդ նպատակով՝*

***1.*** *հետևել հանքային իրավունքի տրամադրման ընթացակարգին՝ բացառելով լիցենզիաներում, նախագծերում, լիցենզային պայմանագրերում և այլ փաստաթղթերում (օրինակ՝ Պաշարների Պետական կամ Տարածքային Հանձնաժողովների արձանագրություններ) իրարամերժ դրույթների առկայությունը,*

***2.*** *ապահովել լիցենզային պայմանագրերով սահմանված պարտավորությունների լիարժեք կատարումը, անհրաժեշտության դեպքում օրենսդրությամբ նախատեսված կարգով դադարեցնելով պայմանագրերի գործողությունը,*

***3.*** *կատարել «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի պահանջը՝ դադարեցնել հանքային իրավունքը, եթե արդյունահանումը սահմանված չափաքանակի 50 տոկոսից քիչ է,*

***4.*** *միջոցներ ձեռնարկել ՀՀ կառավարության 09.02.1998թ. թիվ 80 որոշման 32-րդ կետի բ) ենթակետով սահմանված՝ օգտակար հանածոների պաշարների վերահաստատման պահանջի կատարման ուղղությամբ,*

***5.*** *հողամասերի և ընդերքի օգտագործման իրավունքներ հաստատող փաստաթղթերի միջև անհամապատասխանությունից խուսափելու նպատակով՝ ապահովել համագործակցությունը հողօգտագործման բնագավառում լիազորված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև,*

***6.*** *հնարավոր տարընթերցումից և տարաբնույթ ընկալումներից խուսափելու համար՝ մշակել և ներկայացնել առաջարկություններ՝ բնագավառը կանոնակարգող իրավական ակտերում՝ «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքում և «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքում առկա հակասությունները վերացնելու վերաբերյալ:*

***ՀՀ ԿԱ առընթեր պետական եկամուտների կոմիտեին***

*Ապահովել արձանագրված բնօգտագործման վճարների, ինչպես նաև չարտացոլված իրացման շրջանառությունից գոյացող հասույթի՝ ընդերքօգտագործողների կողմից ՀՀ պետական բյուջե վճարման գործընթացը:*

***ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը***

*Ապահովել արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում գրանցման և տեխնիկական անվտանգության փորձաքննության անցկացման գործընթացը՝ անհրաժեշտության դեպքում սահմանված կարգով իրականացնելով համապատասխան վարչական վարույթ:*

***ՀՀ բնապահպանության նախարարությանը***

*Ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ ընդերքօգտագործողների կողմից հանքային իրավունքով տրամադրված տարածքից դուրս՝ ապօրինի օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքներ իրականացնելը բացառելու ուղղությամբ:*

***ՏԻՄ ղեկավարներին***

*1. Պատշաճ կերպով իրականացնել ՀՀ հողային օրենսգրքի 43-րդ հոդվածով սահմանված վերահսկողական գործառույթը: Ընդերքօգտագործման նպատակով հողահատկացումներն ու ձևակերպումներն իրականացնել հողամասերի նպատակային նշանակությանը և ընդերքի օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերին համապատասխան:*

***ՀՀ ԿԱ առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին***

*Ընդերքօգտագործման նպատակով հողամասերի վարձակալության պայմանագրերից ծագող իրավունքների պետական գրանցման գործառույթն իրականացնելիս՝ պատշաճ ուշադրություն դարձնել հողամասերի՝ նպատակային նշանակությամբ օգտագործման և հողօգտագործման ու ընդերքի օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերում նշված ժամկետների և տրամադրվող տարածքների համապատասխանության խնդիրներին:*

## 2.20. Պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների լուծարման գործընթացի մասին (ընտրանքային)

<u>Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակահատվածը՝</u> 01.01.2006թ. – 01.07.2008թ.
<u>Վերահսկողության արդյունքներով արձանագրվել է.</u>

Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակահատվածում ՀՀ կառավարության կողմից ընդունված 11 որոշումով նախատեսվել է լուծարել 146 կազմակերպություն, դրանից լուծարվել է 30-ը, լուծարման գործընթացում է գտնվում 99-ը, իսկ 17-ը՝ ճանաչվել են սնանկ: Ընտրանքային կարգով ուսումնասիրված 30 կազմակերպություններից 8-ը լուծարվել են, իսկ 22-ը՝ գտնվում են լուծարման գործընթացում:

ՀՀ ԿԱ պետական կառավարման վարչության, պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների բաժնեմասի կառավարման լիազորությամբ օժտված պետական մարմինների և լուծարային հանձնաժողովների կողմից խախտվել են լուծարային հանձնաժողովներ ստեղծելու, վերջիններս իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցելու, լուծարման մասին մամուլում հայտարարություն հրապարակելու, լուծարվող կազմակերպությունների գույքի գույքագրում և հանձնում կատարելու, հաշվեկշիռներ կազմելու ու հաստատման ներկայացնելու, ինչպես նաև իրավական ակտերով նախատեսված այլ գործառույթներ իրականացնելու համար սահմանված ժամկետները (աղյուսակ 1):

«Վերանորոգշին տրեստ հրապարակ» ՓԲԸ լուծարման ընթացքում գույքի գույքագրումն օրենսդրությամբ սահմանված կարգով չի կատարվել. հիմք է ընդունվել ընկերության տնօրենի կողմից տրված տեղեկանքը: Հետագայում, այդ գույքի մի մասը, գնահատված արժեքի ընդամենը 50%-ով, գնվել է նույն տնօրենի կողմից:

Լուծարվող կազմակերպությունների սահմանված կարգով գնահատված գույքը, որպես կանոն, «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ կամ ԴԱՀԿ կողմից աճուրդով վաճառվում է գնահատված արժեքից անհամեմատ ցածր գնով: Մասնավորապես՝ «Բաղրամյանի նավթամթերք» ՓԲԸ շենքերը և շինությունները, մեքենաները և սարքավորումները գնահատվել են 20,000.0 հազ. դրամ, սակայն Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության (այսուհետ՝ ԴԱՀԿ) կողմից հարկադիր աճուրդով վաճառվել են ընդամենը 1,4 մլն դրամով: «Վանաձորի Նավթամթերք» ՓԲԸ ամբողջ գույքը՝ 1,997.8 քմ շենքերն ու շինությունները, 754 գծամետր պարիսպը, 750 գծամետր երկաթգիծը գնահատվել է 10,600.0 հազ. դրամ, սակայն ԴԱՀԿ կողմից հարկադիր աճուրդով վաճառվել է ընդամենը 3,800.0 հազ. դրամով:

«Վանաձորի Նավթամթերք» ՓԲԸ լուծարման միջանկյալ հաշվեկշռում արտացոլված է 19.800.0 հազ. դրամ դեբիտորական պարտք, որն առկա է նաև ընկերության հաշվապահական հաշվեկշռում: Լուծարային հանձնաժողովը սահմանված կարգով համապատասխան միջոցներ չի ձեռնարկել պարտատերերին հայտնաբերելու և այդ պարտքը ստանալու ուղղությամբ:

ՀՀ կառավարության որոշումներով լուծարման են ներկայացվում բազմաթիվ կազմակերպություններ, որոնք իրականում գոյություն չունեն կամ գոյություն ունեն միայն թղթով:

աղյուսակ 1

| Հ/Հ | Կազմակերպության անվանումը | Լուծարային հանձնաժողովի ստեղծման ՀՀ ԿԱ պետ գույքի կառավարման վարչության կողմից 15-օրյա կամ հիմնադրի կողմից 5 -օրյա ժամկետի խախտում (ուշացման օր) | Լուծարային հանձնաժողովի պետական ռեգիստրում գրանցման ՀՀ ԿԱ պետ գույքի կառավարման վարչության կողմից 7-օրյա կամ հիմնադրի կողմից 10-օրյա ժամկետի խախտում (ուշացման օր) | Լուծարային հանձնաժողովի կողմից իրավաբանական անձանց լուծարման մասին մամուլում հայտարարություն տալու 5-օրյա ժամկետի խախտում (ուշացման օր) | Պետական լիազոր մարմինների կողմից լուծարվող իրավաբանական անձի գույքի գույքագրման և հանձնման մեկամսյա ժամկետի խախտում (ուշացման օր) | Լուծարային հանձնաժողովի կողմից լուծարման միջանկյալ հաշվեկշռի կազմման և հաստատման 10-օրյա կամ հիմնադրի կողմից 30-օրյա ժամկետի խախտում (ուշացման օր) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | «Արագշին» շինարարական տրեստ» ՊՓԲԸ | 124 | 5 | 7 | 120 | չի կազմվել |
| 2 | «Ամուր-Բազիս» ՓԲԸ | 124 | 5 | 7 | 120 | չի կազմվել |
| 3 | «Ամուր վերնաշենք» ՓԲԸ | 124 | 5 | 7 | 120 | չի կազմվել |
| 4 | «Միջնորմ» ՍՊԸ | 124 | 5 | 7 | 120 | չի կազմվել |
| 5 | «Բաղրամյանի նավթամթերք» ՓԲԸ | 48 | 118 | 112 | - | 190 |
| 6 | «Վանաձորի նավթամթերք» ՓԲԸ | 48 | 118 | 112 | 30 | 270 |
| 7 | «Ջրմուղ-կոյուղու «Թիվ 7» ԴՁ | 27 | 28 | 10 | չի հանձնվել | չի կազմվել |
| 8 | «Արաբկիր սանմաքրման մասնագի-տացված ավտոտնտեսություն» ՊՁ | 27 | 28 | 10 | չի հանձնվել | չի կազմվել |
| 9 | Երևանի քաղաքապետարանի «Հողօգտագործում» ՊՁ | 27 | 28 | 10 | չի հանձնվել | չի կազմվել |
| 10 | Ջրմուղ-կոյուղու տնտեսություն ՀՆՊՁ Ավտոտրասպորտային ԴՁ | - | - | - | չի հանձնվել | - |
| 11 | «Գյուղատնտեսության վարչության մեքենատրակտորային» ՊՁ | 27 | 28 | 10 | չի հանձնվել | 680 |
| 12 | «Դեկորատիվ բույսերի աճեցման» ՊՁ | 27 | 28 | 10 | չի հանձնվել | չի կազմվել |

| Հ/Հ | Կազմակերպության անվանումը | Լուծարային հանձնաժողովի ստեղծման ՀՀ ԿԱ պետ գույքի կառավարման վարչության կողմից 15-օրյա կամ հիմնադրի կողմից 5 -օրյա ժամկետի խախտում (ուշացման օր) | Լուծարային հանձնաժողովի պետական ռեգիստրում գրանցման ՀՀ ԿԱ պետ գույքի կառավարման վարչության կողմից 7-օրյա կամ հիմնադրի կողմից 10-օրյա ժամկետի խախտում (ուշացման օր) | Լուծարային հանձնաժողովի կողմից իրավաբանական անձանց լուծարման մասին մամուլում հայտարարություն տալու 5-օրյա ժամկետի խախտում (ուշացման օր) | Պետական լիազոր մարմինների կողմից լուծարվող իրավաբանական անձի գույքի գույքագրման և հանձնման մեկամսյա ժամկետի խախտում (ուշացման օր) | Լուծարային հանձնաժողովի կողմից լուծարման միջանկյալ հաշվեկշռի կազմման և հաստատման 10-օրյա կամ հիմնադրի կողմից 30-օրյա ժամկետի խախտում (ուշացման օր) |
|---|---|---|---|---|---|---|
| 13 | «Ջեյթուն» հանգստյան տուն | 27 | 28 | 10 | չի հանձնվել | - |
| 14 | «Գլխամասային կոմունտնտ» ՊՓԲԸ | 27 | 28 | 10 | 90 | 280 |
| 15 | «Նոր Երկիր» ՊՓԲԸ | 27 | 28 | 10 | 28 | 180 |
| 16 | «Ջահ» ՊՁ | 27 | 28 | 10 | չի հանձվել | 680 |
| 17 | Երառսպասարկում ՓԲԸ Արտադրական և սովորողների Մ/Ս թիվ 7 ԴՁ | 27 | 28 | 10 | 150 | չի կազմվել |
| 18 | «Երևանի հատուկ ՇՎՎ» ՓԲԸ | 115 (հիմն. կողմից) | 4 (հիմն. կողմից) | - | չի հանձվել | չի կազմվել (հիմն.կողմից) |
| 19 | «Տեխնոմարկետ» ՓԲԸ | 115 (հիմն. կողմից) | 4 (հիմն. կողմից) | - | չի հանձվել | չի կազմվել (հիմն.կողմից) |
| 20 | ՌՏԻ-ի շինվերանորոգման վարչության | 115 (հիմն. կողմից) | 4 (հիմն. կողմից) | - | չի հանձվել | չի կազմվել (հիմն.կողմից) |
| 21 | «Նայրի» ԲԲԸ | 115 (հիմն. կողմից) | 4 (հիմն. կողմից) | | - | 60 (հիմնադրի կողմից) |
| 22 | Վերանորոգշին տրեստ հրապարակ ԲԲԸ | 115 (հիմն. կողմից) | 4 (հիմն. կողմից) | - | - | 270 (հիմնադրի կողմից) |
| 23 | «Ստեփանտրանս» ՓԲԸ | 115 (հիմն. կողմից) | 4 (հիմն. կողմից) | 77 (հիմն. կողմից) | - | - |
| 24 | Հայդեղագործություն ՊՁ թիվ-7 ԴՁ | 41 | 6 | - | չի հանձվել | չի կազմվել |
| 25 | Հայդեղագործություն ՊՁ Արալես ԴՁ | 41 | 6 | - | չի հանձվել | չի կազմվել |
| 26 | Հայդեղագործություն ՊՁ Գորիսի ԴՁ | 41 | 6 | - | չի հանձվել | չի կազմվել |
| 27 | «Փրկարար» ՓԲԸ | 30 | - | 5 | - | 35 |
| 28 | «Ջրհոս» ՓԲԸ | 95 | 50 | - | չի հանձնվել | չի կազմվել |
| 29 | «Էլաստիկ» ֆիրմային խանութ ՊՓԲԸ | 30 | - | 8 | - | 210 |
| 30 | «Հայթուրքբեյդ» ՓԲԸ | - | - | - | - | - |

ՀՀ կառավարության որոշումներով լուծարվող 51 կազմակերպությունների գույքը պետական լիազորված մարմինների կողմից սահմանված կարգով լուծարային հանձնաժողովներին չհանձնելու պատճառով այդ կազմակերպությունների լուծարման գործընթացը շուրջ մեկ տարի 6 ամիս ձգձգվում է:

Մասնավորեցման ծրագրերում շարունակվում են ընդգրկվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված կազմակերպական-իրավական տեսակներին չհամապատասխանող կազմակերպություններ, որոնք պետք է ընդգրկվեն լուծարման ցանկերում:

Ներկայումս ՀՀ առկա են շուրջ 600 կազմակերպություններ, որոնց մի մասը չունեն պետական գրանցում կամ լուծարման համար անհրաժեշտ փաստաթղթեր, իսկ մյուս մասի վերակազմակերպման արդյունքում գործունեության դադարեցման վերաբերյալ համապատասխան գրառում չի կատարվել իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում, դրա հետևանքով այդ կազմակերպությունների լուծարումն օրենսդրությամբ սահմանված կարգով հնարավոր չէ իրականացնել:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

***ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչությանը***

*1. պահպանել կազմակերպությունների լուծարման գործընթացին վերաբերող իրավական ակտերով սահմանված ժամկետները,*

*2. պետական լիազորված մարմինների հետ համատեղ պատրաստել և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել որոշման նախագիծ՝ պետական գրանցում և համապատասխան փաստաթղթեր չունեցող շուրջ 600 կազմակերպությունների հարցին լուծում տալու վերաբերյալ,*

*3. անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել լուծարային հանձնաժողովների գործունեության արդյունավետությունն ապահովելու ուղղությամբ, մշտապես հետևել, որպեսզի լուծարային հանձնաժողովները հստակ կատարեն լուծարման գործընթացին վերաբերող իրավական ակտերի պահանջները,*

*- ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 69-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել լուծարվող կազմակերպությունների պարտատերերին հայտնաբերելու և դեբիտորական պարտքն ստանալու ուղղությամբ,*

*- լուծարվող կազմակերպությունների պարտատերերի գումարների վճարումը կատարել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 70-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ,*

*- սահմանված կարգով կատարել լուծարվող կազմակերպությունների գույքագրումն ու գնահատումը,*

*- ճշտել լուծարվող կազմակերպության գույքի փաստացի առկայությունը և պակաս գույք հայտնաբերելու դեպքում՝ ձեռնարկել միջոցներ այդ ուղղությամբ,*

*- պարզել լուծարվող կազմակերպության բոլոր հարկային պարտավորությունները և միջոցներ ձեռնարկել դրանք ժամանակին կատարելու ուղղությամբ,*

*- կազմակերպությունների լուծարման մասին սահմանված ժամկետում տեղեկացնել իրավաբանական անձանց պետական ռեգիստրին:*

***Երևանի քաղաքապետարանին և ՀՀ գյուղատնտեսության, կրթության և գիտության, մշակույթի, առողջապահության և էկոնոմիկայի նախարարություններին՝***

*միջոցներ ձեռնարկել իրենց ենթակայության տակ գտնվող լուծարման ենթակա կազմակերպություններում գույքագրում կատարելու և գույքը լուծարային հանձնաժողովներին հանձնելու ուղղությամբ:*

## 2.21. «Սևան» ազգային պարկի հողերի օգտագործման տրամադրման, այդ հողերի օգտագործման, ինչպես նաև վարձավճարների գանձման մասին

**Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակաշրջանը՝** 2006-2007թթ.

**Վերահսկողության արդյունքներով արձանագրվել է՝**

1. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ հողերի վարձակալության 64 պայմանագրերի գծով պակաս վարձավճար է հաշվարկվել և գանձվել՝ գումարով 68,775.5 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

2. ՊՈԱԿ կողմից 2006թ. ընթացքում անհիմն զիջել են 10 վարձակալների վարձավճարների գծով առաջացած 9,806.7 հազ. դրամի ապառքը, որը ենթակա է վերականգնման:

3. 2006-2007թթ. պայմանագրերով նախատեսված վարձավճարները ժամանակին չվճարելու համար չի հաշվարկվել և չի գանձվել ժամկետանց օրերի տույժ՝ 2,782.5 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

4. Անտառահատումից առաջացած փայտանյութի վաճառքից 2006 և 2007թթ. պակաս է գանձվել 4,837.4 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

5. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ ամրացված գույքը վարձակալության է հանձնվել սահմանված չափից 7,166.4 հազ. դրամով պակաս, որը ենթակա է վերականգնման:

6. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ ամրացված գույքը՝ վարչական շենք, մոտորանավակների համար նախատեսված քարե պահեստներ, քարե չորս ավտոտնակ, ֆիննական նախագծով կառուցված 13 հատ փայտյա տնակներ, քարե պահակատուն և ուք վագոնտնակ 01.08.2003թ. երեք տարի ժամանակով վարձակալության է հանձնվել «Նորալուսին» ՍՊ Ընկերությանը՝ 165.3 հազ. դրամ վարձավճարով: Ստուգման պահի դրությամբ վարձակալը չէր վճարել պայմանագրով նախատեսված վարձավճարները, դեռ ավելին. վարձակալած գույքը քանդել և ապամոնտաժել է, այնուհետև վաճառել, իսկ տեղում իրականացրել շինարարական այլ աշխատանքներ:

7. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ հողատարածքներում արձանագրվել են ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ հողամասերի վարձակալության և կառուցապատման իրավունքի տրամադրման բազմաթիվ դեպքեր (աղյուսակ 1):

աղյուսակ 1

| | |
|---|---|
| **Ընդհանուր հողօգտագործողների թիվը – 904** | |
| | ✓ **կառուցապատված տարածք – 412 դեպք** |
| | ✓ **չկառուցապատված տարածք – 492 դեպք** |

**412 կառուցապատված տարածքների նկարագիրը**

| | |
|---|---|
| **1908 մ նիշից ցածր գտնվող կառուցապատված տարածքներ – 227 դեպք** | |
| | ✓ **ինքնակամ շինություն – 142 դեպք** |
| | ✓ **շին թույլտվություն ունեցող – 4 դեպք** |
| | ✓ **հողազավթում – 12 դեպք** |
| | ✓ **Խորհրդային պետության ժամանակ կառուցված – 12 դեպք** |
| **1908 մ նիշից բարձր գտնվող կառուցապատված տարածքներ – 78 դեպք** | |
| | ✓ **ինքնակամ շինություն – 30 դեպք** |
| | ✓ **շին թույլտվություն ունեցող – 8 դեպք** |

| | |
|---|---|
| | ✓ հողազավթում – 5 դեպք |
| | ✓ Խորհրդային պետության ժամանակ կառուցված – 12 դեպք |
| 1908 մ նիշից բարձր և ցածր գտնվող կառուցապատված տարածքներ– 100 դեպք | |
| | ✓ ինքնակամ շինություն – 56 դեպք |
| | ✓ շին. թույլտվություն ունեցող – 13 դեպք |
| | ✓ հողազավթում – 5 դեպք |
| | ✓ Խորհրդային պետության ժամանակ կառուցված – 3 դեպք |
| տեղեկություններ չկան - 7 դեպք | |

<u>**Ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ**</u>

ՀՀ վերահսկիչ պալատի արձանագրած խախտումներին ի պատասխան ՀՀ բնապահպանության նախարարի 26.02.2009թ. թիվ 1-AA/212 գրությամբ տեղեկացվել է.

- 68,775.5 հազ. դրամի չափով պակաս հաշվարկված և գանձված վարձավճարից ստուգման արդյունքում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ հաշվին վերականգնվել է 23,800.0 հազ. դրամ: Մնացած վարձակալների մասով ձևակերպված է ապառք, որի վերականգնման ուղղությամբ տարվում են աշխատանքներ:
- 2,782.5 հազ. դրամի պակաս հաշվարկված տույժն առաջացել է սխալ հաշվարկից, որի համար կատարվել է վերահաշվարկ և դրանք կգանձվեն վարձակալներից:
- Պակաս հաշվարկված վարձավճարների գծով կատարվել է վերահաշվարկ՝ համաձայն 2001 թվականի փետրվարի 22-ի թիվ 125 որոշման, որի արդյունքում 7,166.4 հազ. դրամը ձևակերպվել է որպես համապատասխան վարձակալների մասով ապառք:

## 2.22. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագիր

<u>**Վերահսկողությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝**</u> 15.07.2007թ. – 30.09.2008թ.:

<u>**Վերահսկողության արդյունքներով արձանագրվել է՝**</u>

*1. Գյուղատնտեսական աշխատանքներ*

Գյուղատնտեսական աշխատանքներ իրականացրած կազմակերպությունների կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման համապատասխանությունը ստուգելու նպատակով ստուգման ընթացքում իրականացվել է հողի լաբորատոր հետազոտություն, որի արդյունքներով բացահայտվել է 9,427.6 հազ. դրամի անարդյունավետ ծախս, որը ենթակա է վերականգնման:

*2. Անտառաշինական և անտառավերականգնման աշխատանքներ*

«Լանդշաֆտ Դենդրոսերվիս» ՍՊԸ կողմից պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացման գծով Իջևանի անտառտնտեսության Սևքար և Աչաջրի անտառապետություններում ստուգման արդյունքում արձանագրվել է 2,667.2 հազ. դրամի անարդյունավետ ծախս, որը ենթակա է աշխատանքով վերականգնման:

*3. Շինարարական և շինվերանորոգման աշխատանքներ*

Որոշ օբյեկտներում մետաղապլաստե պատուհանների տեղադրումը կատարվել է նախագծերի խախտումներով, ավարտված շինարարական աշխատանքների վերաբերյալ ավարտական ակտերը ժամանակին չէին կազմվել, իսկ առանձին օբյեկտներում տա-

րածքները չշահագործելու հետևանքով առաջացել է լրացուցիչ հարդարման աշխատանքների կարիք: «Դիլիջան» և «Սևան» ազգային պարկերում հսկիչ չափագրման արդյունքներով կատարողական ակտերում բացահայտվել է 1,335.0 հազ. դրամի չափով հավելավճար, որից՝ «Դիլիջան» ազգային պարկում՝ 980.0 հազ. դրամի և «Սևան» ազգային պարկում՝ 355.0 հազ. դրամի չափով: 1,335.0 հազ. դրամ լրավճարը ենթակա է վերականգնման:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***<u>ԾԻԳԻ կառավարման խորհրդին և ԾԻԳ՝</u>***

- *Գործնական միջոցներ ձեռնարկել վերահսկողության արդյունքներով բացահայտված անարդյունավետ ծախսերը վերացնելու, հայտնաբերված 13,429.8 հազ. դրամի, այդ թվում՝ գյուղատնտեսական աշխատանքների գծով 9,427.6 հազ. դրամի, անտառավերականգնման և անտառաշինական աշխատանքների գծով՝ 2,667.2 հազ. դրամի և շինարարական աշխատանքների գծով՝ 1,335.0 հազ. դրամի թերի կատարված աշխատանքների դիմաց անարդյունավետ ծախսերը վերականգնելու, Ծրագրի ընթացիկ և ավարտական փուլում նախատեսված բոլոր աշխատանքներն ամբողջությամբ իրականացնելու ուղղությամբ:*
- *Հատուկ ուշադրություն դարձնել «Աշխատանքներ» կատեգորիայով իրականացված գործունեության ընթացքի և արդյունքների նկատմամբ, այդ հարցում բարձրացնել ԾԻԳ առանձին բաղադրիչները համակարգող մասնագետների պատասխանատվությունը իրենց ոլորտում տիրող իրավիճակի, թերությունների կանխարգելման և բացահայտված բաց թողումների վերացման համար:*
- *Քննարկել գյուղատնտեսական, անտառաշինական ու անտառավերականգնման աշխատանքները անմիջականորեն համայնքների միջոցով իրականացնելու հնարավորությունները՝ հաշվի առնելով մրցույթում շահած կազմակերպությունների կողմից նշված աշխատանքները համապատասխան համայնքների գյուղացիների միջոցով կատարելու հանգամանքը, ստացվող արդյունքների համար նրանց շահագրգռության ավելի բարձր աստիճանը, ինչպես նաև վարկային միջոցների փոշիացումը նվազեցնելու միտումը:*
- *Ծրագրի կառավարման խորհրդի նիստում և ՄԶԸ հետ քննարկել Ծրագրի շրջանակներում իրականացվող գյուղատնտեսական, անտառաշինական ու անտառավերականգնման, ինչպես նաև շինարարական-վերանորոգման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող խորհրդատվական կազմակերպությունների փոխարեն այդ գործը ԾԻԳ անձնակազմի համապատասխան մասնագետների միջոցով կազմակերպելու առաջարկությունը:*

**<u>Ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ</u>**

ՀՀ վերահսկիչ պալատի արձանագրած խախտումներին ի պատասխան ՀՀ բնապահպանության նախարարի 26.02.2009թ. թիվ 1-AA/212 գրությամբ տեղեկացվել է.

*1. Գյուղատնտեսական աշխատանքներ*

9,427.6 հազ. դրամ անարդյունավետ ծախսերը վերացնելու նպատակով ԾԻԳ կազմել է թերի կատարված լրացման աշխատանքների ժամանակացույց, որով ցարնանը «Մեգա-Ագրո», «Զինա» ՍՊ ընկերությունները և «Տավուշի ֆերմերների ասոցիացիա» ՀԿ պարտավորվել են գյուղաշխատանքներն ամբողջությամբ կատարել:

*2. Անտառաշինական և անտառավերականգնման աշխատանքներ*

2,667.2 հազ. դրամ անարդյունավետ ծախսերը վերացնելու նպատակով «Լանդշաֆտ Դենդրոսերվիս» ՍՊԸ-ն պարտավորվել էր մինչև մայիս ամիսը կատարել անհրաժեշտ բոլոր աշխատանքները:

*3. Շինարարական և շինվերանորոգման աշխատանքներ*

1,335.0 հազ. դրամի չափով հավելավճարից 853.8 հազ. դրամը վերականգնվել է, իսկ մնացած՝ 481.2 հազ. դրամը կվերականգնվի գարնանը աշխատանքով կամ գումարով:

## 2.23. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ծրագիր

**Վերահսկողությամբ ընդգրկվող ժամանակահատվածը՝** 01.10.2006-01.01.2008 թթ.:

**Վերահսկողության արդյունքներով արձանագրվել է՝**

*1. «Գյուղական ֆինանսական ծառայություններ» ենթաբաղադրիչ*

• Վարկային գծի իրականացման շրջանակներում ընդգրկված 5 առևտրային բանկերից փաստացի աշխատում են 4-ը:

• Ծրագրով նախատեսված առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների մասնակցությունը՝ որպես լիզինգային և միկրոֆինանսավորման ապրանքներ առաջարկող միջնորդներ փաստացի չի ապահովվել :

• Բանկերի կողմից վարկերը տրամադրվել են միայն 18 ամիսը գերազանցող մարման ժամկետով ենթածրագրերի համար, իսկ շրջանառու կապիտալի (մինչև 18 ամիս) ֆինանսավորում առևտրային բանկերի կողմից ընդհանրապես չի իրականացվել, սակայն ծրագրով նախատեսված էր:

*2. «Սերմերի և տնկիների շուկայի հզորացում» ենթաբաղադրիչ*

«Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ և դրա լաբորատորիաներին հատկացվել է 422.0 հազ. ԱՄՆ դոլար (աղյուսակ 1)՝ վերջիններիս աջակցելու նպատակով, սակայն արդյունքում լաբորատորիաները լիարժեք չէին գործում, դրանց համար ձեռք բերված սարքավորումների և ավտոմեքենաների մի մասը դեռևս չեն տրամադրվել լաբորատորիաներին, իրականացված շինաշխատանքները չեն ծառայում իրենց նպատակին:

աղյուսակ 1, հազ. ԱՄՆ դոլար

| Ֆինանսավորման ուղղությունները | Գումար |
|---|---|
| *6 «ՆԻՎԱ» մակնիշի ավտոմեքենա* | 57.5 |
| *գրասենյակային կահույք* | 3.9 |
| *լաբորատոր սարքավորումներ* | 97.8 |
| *շինվերանորոգման աշխատանքներ* | 220.4 |
| *գործառնական ծախսեր, այդ թվում՝ վառելիք, բրոշյուրների պագրություն* | 30.6 |
| *խորհրդատվական ծառայություններ (նախագծային աշխատանքներ)* | 6.4 |
| *Ուսուցում և սեմինարներ* | 6.1 |
| ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | **422.6** |

Ընդ որում.

- 6 ավտոմեքենաներից 3-ը (28.75 հազ. ԱՄՆ դոլար) 01.06.2008թ. դրությամբ չէին հատկացվել «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ Գյումրիի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզային լաբորատորիաներին:
- «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ շենքի վերանորոգման շրջանակներում «Երկրագործության և բույսերի պաշտպանության գիտական կենտրոն» ՊՈԱԿ վարչական շենքից անժամկետ օգտագործման իրավունքով ամրացված տարածքը (Արմավիր, Մերձավան) 01.06.2008թ. դրությամբ գույքային իրավունքների պետական գրանցում չի ստացել: Իսկ «Նիկ Դավ Գրուպ» ԲԲԸ - «ԳՈՌՏԻԳ» ՍՊԸ կոնսորցիումի հետ կնքված պայմանագրի շրջանակներում 64,919.9 հազ. դրամ գումարի վերանորոգման աշխատանքներն ուղղվել են ոչ միայն «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ հատկացված տարածքի, այլ ամբողջ «Երկրագործության և բույսերի պաշտպանության գիտական կենտրոն» ՊՈԱԿ վարչական շենքի վերանորոգմանը:
- «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ Գյումրիի լաբորատորիայի վերանորոգման (14,291.8 հազ. դրամ) աշխատանքներն ավարտվել էին մոտ մեկ տարի առաջ, սակայն լաբորատորիան դեռևս չի գործում: Ծախսը դիտվում է որպես անարդյունավետ:
- Գյումրիի լաբորատորիայի համար ձեռք բերված սարքավորումները, գրասենյակային կահույքը, ավտոմեքենան ստուգման պահի դրութամբ գտնվում են Մերձավանում՝ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ:
- Գյումրիի լաբորատորիային ամրացված տարածքի գույքային իրավունքների պետական գրանցման գործընթացը նույնպես իրականացված չէր:
- Պայմանագրով նախատեսված ժամկետների ուշացման պատճառով («Մակիչ և Մաջո» ՍՊԸ, «Տրիտոն» ՍՊԸ, «Արգիկ» ՍՊԸ, «Բաղրամյանշին» ԲԲԸ, «Սերժ Մկրտչյան» ՍՊԸ (2 դեպքով), «Ծովասարշին» ՍՊԸ) չեն հաշվարկվել ուշացման տույժեր՝ 1,844.4 հազ. դրամ ընդհանուր գումարով, որը ենթակա է վերականգնման:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***ԾԻԳ-ին և Ծրագրի կառավարման խորհրդին՝***

*1. Բարձրացնել ենթավարկերի մատչելիությունը՝ տարբեր ֆինանսական միջնորդների և մեծ թվով բանկերի մասնակցության միջոցով: Բարելավել ԾԻԳ կողմից Գյուղացիական ֆինանսավորման կառույցին վճարումների պլանավորման և կատարման գործընթացը:*

*2. Բարելավել «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ և դրա լաբորատորիաների աշխատանքը, հետևել Ծրագրով տրամադրված սարքավորումների, գույքի և փոխադրամիջոցների, ինչպես նաև՝ վերանորոգված տարածքների արդյունավետ և նպատակային օգտագործմանը:*

*3. Շինարարական աշխատանքների համար մրցույթները հայտարարելիս հաշվի առնել աշխատանքների իրականացման ժամանակահատվածում ձմռան ամիսների բացառումը, որպեսզի աշխատանքները կատարելիս լրացուցիչ չերկարաձգվեն պայմանագրերով նախատեսված ժամկետները:*

**Չեռնարկված միջոցառումների վերաբերյալ**

ՀՀ վերահսկիչ պալատի արձանագրած խախտումներին ի պատասխան ՀՀ գյուղատնտեսության նախարարի 04.03.2009թ. թիվ 07-ԱԳ-ԳԲԱԾ-874 գրությամբ տեղեկացվել է.

- Կրկին ուսումնասիրվել են բոլոր հայտերը և ծրագրում ներառելու նպատակով ընտրվել են 3 կազմակերպություն, որոնցից մեկը (ԱԿԲԱ-լիզինգ ՓԲԸ) իրականացնելու է նաև լիզինգային ֆինանսավորում:
- «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ Գյումրիի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզային լաբորատորիաներին 3 չհատկացված ավտեմեքենաներն արդեն հատկացվել են և օգտագործվում են ըստ նշանակության:
- ՀՀ Արմավիրի մարզի Մերձավան համայնքի տարածքում գտնվող «Երկրագործության և բույսերի պաշտպանության գիտական կենտրոն, ՊՈԱԿ-ի վարչական շենքից ««Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ին անժամկետ օգտագործման իրավունքով ամրացված տարածքի գույքային իրավունքի պետական գրանցումը ընթացքի մեջ է:
- «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ Գյումրու լաբորատորիան արդեն կահավորված է և գործում է ըստ նշանակության:
- Ուշացման համար չհաշվարկված 1,844.4 հազ. դրամ ընդհանուր տույժերն ամբողջությամբ վերականգնվել են:
- Այսուհետ, շինարարական աշխատանքների կապալի պայմանագրերում բացառվելու է ձմռան ժամանակահատվածում շինարարական աշխատանքների իրականացումը:

## 2.24. Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող՝ Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագիր

**Վերահսկողությամբ ընդգրկվող ժամանակահատվածը՝** 01.10.2006-01.04.2008 թթ.:
**Վերահսկողության արդյունքներով արձանագրվել է՝**

*1. Տնտեսապես հիմնավորված ենթակառուցվածքների վերականգնման բաղադրիչ*

Վարկերի բաշխվածությունը մարզերի միջև բավական անհամաչափ է (աղյուսակ 1):

աղյուսակ 1, հազ. ԱՄՆ դոլար

| Մարզ | Վարկերի քանակ | Վարկերի ընդհանուր գումարը մարզում | Վարկառուների տեսակարար կշիռ, % |
|---|---|---|---|
| Վայոց Ձոր | 40 | 1,531.4 | 23.8 |
| Արագածոտն | 42 | 1,455.2 | 25 |
| Լոռի | 22 | 1,361.1 | 13.1 |
| Գեղարքունիք | 33 | 911.4 | 19.6 |
| Շիրակ | 10 | 676.0 | 5.9 |
| Սյունիք | 14 | 516.5 | 8.3 |
| Տավուշ | 7 | 370.0 | 4.1 |
| ***Ընդամենը*** | ***168*** | ***6,821.6*** | ***100*** |

Այսպես, մի կողմից Շիրակի մարզը, որպես աղետի գոտի և պաշտոնական վիճակագրական տվյալներով բնակչության աղքատության բավականաչափ բարձր ցուցանիշ ունեցող, և մյուս կողմից Տավուշի մարզը, որպես սահմանամերձ և սոցիալ-տնտեսական ու

քաղաքական բավական խորությամբ խնդիրներ ունեցող տարածաշրջաններ, ծրագրով նախատեսված վարկերի քանակով, ինչպես նաև ընդհանուր գումարով Վայոց ձորի մարզին զիջում են մի քանի անգամ այն դեպքում, երբ Վայոց ձորի մարզը առանձնապես զերծ է նշված խնդիրներից և համարվում է տարածքով ամենափոքր տարածաշրջանը:

*2. Շինարարական աշխատանքներ*

• Հսկիչ չափագրումների արդյունքներով չկատարված աշխատանքների դիմաց վճարվել է 1,770.9 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

• Ծրագրի շրջանակներում 20 համայնքներում իրականացված գազիֆիկացման աշխատանքների ավարտական ակտերով շահագործման հանձնված 693,308.1 հազ. դրամ արժեքով օբյեկտները պետական գրանցում չեն ստացել և որևէ հաշվեկշռում չեն արտացոլվել:

*3. Պարբերական ծախսեր*

2007 և 2008 թվականների 1-ին եռամսյակում Գրասենյակը շինարարական աշխատանքների հաշվին պարբերական ծախսերի առանձին հոդվածներով թույլ է տվել 27,092.5 հազ. դրամի գերածախս, որը շինարարության բաղադրիչի մասով ենթակա է վերականգնման:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***«Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի վերլուծության և կառավարման գրասենյակ» պետական հիմնարկին.***
*Ձեռնարկել միջոցառումներ՝ թույլ տրված խախտումների արդյունքում գանձման ենթակա, սակայն չգանձված գումարները պետական բյուջե վերականգնելու ուղղությամբ:*

<u>*Ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ*</u>

ՀՀ վերահսկիչ պալատի արձանագրած խախտումներին ի պատասխան ՀՀ գյուղատնտեսության նախարարի 05.03.2009թ. թիվ 07-ԱԳ-ԳԾՎԿԳ-887 գրությամբ տեղեկացվել է.

• շինարարական աշխատանքներում թույլ տրված 1,770.9 հազ. դրամի ծավալային հավելագրումներն ամբողջությամբ վերականգնվել են:

• 2008 թ. նեյմբերի 6-ի թիվ 1279-Ն որոշմամբ լուծվել է ծրագրի շրջանակներում ավարտական ակտերով շահագործման հանձնված օբյեկտների նկատմամբ իրավունքների պետական գրանցման հարցը, որով իրականացվել է նաև գազիֆիկացման օբյեկտների հանձնման-ընդունման գործընթացը:

• Շինարարական աշխատանքների հաշվին պարբերական ծախսերի առանձին հոդվածներով թույլ տրված 27,092.5 հազ. դրամի գերածախսը լիազոր մարմնի կողմից վերաբաշխման արդյունքում ամբողջությամբ վերականգնվել է:

## 2.25. Նավթ արդյունահանող երկրների կազմակերպության հիմնադրամի և Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արտադրական ենթակառուցվածքների վերականգնման ծրագիր

<u>**Վերահսկողությամբ ընդգրկվող ժամանակահատվածը՝**</u> 01.03.2007-01.04.2008թթ. :

<u>**Վերահսկողության արդյունքներով արձանագրվել է՝**</u>

*1. Տնտեսապես հիմնավորված ենթակառուցվածքների վերականգնում*

- Չպահպանելով Համաձայնագրի պահանջը՝ Ծրագրին հարկային արտոնություն չի տրվել և արդյունքում առաջացել է ավելացված արժեքի հարկի գծով 89,861.6 հազ. դրամի չհաշվարկված տարբերություն, ինչը ենթակա է վերականգնման:
- 42 օբյեկտներից 5-ում իրականացված հսկիչ չափագրման արդյունքներով չկատարված աշխատանքների դիմաց կապալառուին վճարվել է 3,606.4 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:
- Նույն տեխնիկական բնութագրով աշխատանքները արհեստականորեն բաժանելու արդյունքում չի իրականացվել ընդհանուր գնային քաղաքականություն, ինչի արդյունքում նույն աշխատանքները ձեռք են բերվել տարբեր արժեքներով, հետևաբար, չի տնտեսվել 10,706.4 հազ. դրամ: Ծախսը դիտարկվում է որպես անարդյունավետ:
- Ծրագրի շրջանակներում 25 համայնքներում իրականացված գազիֆիկացման աշխատանքների ավարտական ակտերով շահագործման հանձնված 982,903.0 հազ. դրամ արժեքով օբյեկտները պետական գրանցում չեն ստացել և համապատասխան հաշվեկշիռներում չեն արտացոլվել:
- Շենիկ համայնքի գազատարի կառուցման նպատակով գյուղապետարանը նախահաշվից դուրս ստացել է խողովակներ՝ 14,805.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***ՀՀ կառավարությանը.***

- *Քննարկել Ծրագրի շրջանակներում ավարտական ակտերով շահագործման հանձնված օբյեկտների նկատմամբ իրավունքների պետական գրանցման խնդիրը:*
- *Ապահովել միջպետական համաձայնագրերով հարկային արտոնությունների տրամադրման համապատասխանությունը համաձայնագրերի պահանջներին:*

***«Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի վերլուծության և կառավարման գրասենյակ» պետական հիմնարկին.***

- *Ձեռնարկել համապատասխան միջոցներ գանձման ենթակա գումարները պետական բյուջե վերականգնելու ուղղությամբ:*

<u>**Ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ**</u>

ՀՀ վերահսկիչ պալատի արձանագրած խախտումներին ի պատասխան ՀՀ գյուղատնտեսության նախարարի 05.03.2009թ. թիվ 07-ԱԳ-ԳԾՎԿԳ-888 գրությամբ տեղեկացվել է.

- 2008 թ. նոյեմբերի 6-ի թիվ 1279-Ն որոշմամբ լուծվել է ծրագրի շրջանակներում ավարտական ակտերով շահագործման հանձնված օբյեկտների նկատմամբ իրավունքների պե-

տական գրանցման հարցը, որով իրականացվել է նաև գազիֆիկացման օբյեկտների հանձնման-ընդունման գործընթացը:

- Շինարարական աշխատանքներում թույլ տրված 3,606.4 հազ. դրամի ծավալային հավելագրումն ամբողջությամբ վերականգնվել է:

## 2.26. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագիր

**<u>Վերահսկողությամբ ընդգրկվող ժամանակահատվածը՝</u>** 05.07.2007-01.07.2008թթ.:

**<u>Վերահսկողության արդյունքներով արձանագրվել է՝</u>**

*1. ՀՀ պետական բյուջեի հետ փոխհարաբերություններ*

Ծրագրի իրականացման գրասենյակն, անտեսելով ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ցուցումը, 1-ին Ծրագրի՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման մնացորդային միջոցները՝ 24,466.1 հազ. դրամ, ինչպես նաև մրցույթների փաթեթների վաճառքից գոյացած միջոցները՝ 7,920.0 հազ. դրամ պետական բյուջե վերադարձնելու փոխարեն օգտագործել են համապատասխանաբար՝ 2-րդ Ծրագրի ծախսերը կատարելու և 1-ին Ծրագրի աուդիտն իրականացնելու համար:

*2. Ապրանքների ձեռք բերում*

«Սի-Այ-Թի» ՍՊԸ հետ կնքած պայմանագրերի շրջանակներում չի հաշվարկվել պայմանագրերով մատակարարման ժամկետների խախտման համար նախատեսված տույժ՝ 3,604.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

*3. Շինարարական աշխատանքներ*

- Տեխնիկական հսկողություն իրականացնող «Ղարբախ» ՓԲԸ չկատարված պայմանագրային պարտավորությունների դիմաց վճարվել է 1,100.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:
- Չկատարված աշխատանքների դիմաց Կապալառուին («ՀԱԷԿ Շինարարություն» ՓԲԸ) վճարվել է 6,859.4 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***ՀՀ ֆինանսների նախարարությանը.***

*Իրականացնել միջոցառումներ՝ «ԾԻԳ» պետական հիմնարկների կողմից անցկացվող մրցույթների փաթեթների վաճառքից գոյացած միջոցները և վարկային ծրագրերին ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցների չօգտագործված մնացորդը պետական բյուջե փոխանցելու իրավական մեխանիզմներ (ժամկետներ և այլ պայմաններ) մշակելու ուղղությամբ:*

***Դատաիրավական բարեփոխումների Երկրորդ Ծրագրի կառավարման խորհրդին և ԾԻԳ-ին.***

*Ձեռնարկել միջոցառումներ չվճարված տույժերի, արձանագրված ծավալային հավելագրումների, կատարված թերի աշխատանքների վերականգնման ուղղությամբ:*

<u>**Չեռնարկված միջոցառումների վերաբերյալ**</u>

ՀՀ վերահսկիչ պալատի արձանագրած խախտումներին ի պատասխան ՀՀ արդարադատության նախարարի 24.02.2009թ. թիվ Ե 959 գրությամբ տեղեկացվել է.

*1. ՀՀ պետական բյուջեի հետ փոխհարաբերություններ*

Համաֆինանսավորման մնացորդային միջոցների՝ 24,466.1 հազ. դրամ, ինչպես նաև մրցույթների փաթեթների վաճառքից գոյացած միջոցների՝ 7,920.0 հազ. դրամ պետական բյուջե վերադարձնելու փոխարեն այլ նպատակներով օգտագործելու փաստերը հետագայում բացառելու նպատակով միջոցներ կձեռնարկվեն օրենսդրական բացը լրացնելու ուղղությամբ:

*1. Ապրանքների ձեռք բերում*

Մատակարարման ժամկետների խախտման համար նախատեսված 3,604.0 հազ. դրամ տույժից վերականգնվել է միայն 194.5 հազ. դրամ:

*2. Շինարարական աշխատանքներ*

Ի հայտ եկած թերությունների վերացման ուղղությամբ ԾԻԳ-ի և կապալառուի միջև կազմվել է արձանագրություն-ժամանակացույց:

## 2.27. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Քաղաքային ջեռուցման ծրագիր

<u>**Վերահսկողությամբ ընդգրկվող ժամանակահատվածը՝**</u> 01.10.2006 - 01.03.2008թթ.:

<u>**Վերահսկողության արդյունքներով արձանագրվել է՝**</u>

**1.** «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ կողմից «Երֆրեզ» ԲԲԸ տրված 500,000.0 ԱՄՆ դոլարի վարկի համապատասխանության և նպատակայնության հարցը: Ըստ դրա՝ վարկի գումարները փոխանցվել են պանամական մի կազմակերպությանը, իսկ մատակարարման ժամկետը հետաձգվել է 3 անգամ:

Ստուգման պահին «Երֆրեզ» ԲԲԸ ստացել էր գումարն ամբողջությամբ, սակայն աշխատանքները կատարված չէին:

**2.** Այս ծրագրով նախատեսվում էր բազմաբնակարան շենքերում բնակվող Աղքատության ընտանեկան նպաստի ծրագրի համակարգում ընդգրկված անապահով 17.000 ընտանիքներին (բացառությամբ՝ Երևան քաղաքի Կենտրոն համայնքի) ապահովել ջեռուցմամբ:

Աշխատանքների իրականացման տեմպերը բավականաչափ ցածր են: Ջեռուցում անցկացվել է 2688 բնակարանում՝ նախատեսված 17.000-ի դիմաց:

**3.** Վերահսկողությամբ արձանագրվել է, որ Ծրագրի կանխավճարի շրջանակներում մոտ 350.5 հազ. ԱՄՆ դոլար գումարով փոխառության տեսքով տրամադրված կաթսայատների սարքավորումները 01.03.2008թ. դրությամբ չեն գործում և Ծրագրի նպատակներին չեն ծառայում, որից մոտ 317.0 հազ. ԱՄՆ դոլարի «մայր» գումարը պարտքի տեսքով նույնիսկ չի վերադարձվել, որը ենթակա է վերականգնման:

Ծրագիրը նախատեսվում է ավարտել 2009թ. դեկտեմբերի 31-ին:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

***Հիմնադրամին և Հոգաբարձուների խորհրդին՝***

- *Տրամադրված վարկերի և փոխառությունների արդյունավետ օգտագործման նպատակով՝ ձեռնարկել միջոցառումներ Ծրագրերի Իրականացման Գրասենյակների աշխատանքը կարգավորելու, ինչպես նաև անարդյունավետ օգտագործված վարկային միջոցները հետ վերադարձնելու ուղղությամբ:*
- *Հատուկ ուշադրություն դարձնել անապահով ընտանիքներին տրամադրվելիք օժանդակության հարցին: Ձեռնարկել միջոցներ՝ բնակիչների կողմից պարտադիր համաֆինանսավորման գումարների վճարման պահանջը կարգավորելու ուղղությամբ:*

**<u>Ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ</u>**

ՀՀ վերահսկիչ պալատի արձանագրած խախտումներին ի պատասխան «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի» տնօրենի 2008թ. դեկտեմբերի 19-ի.թիվ 614 և դեկտեմբերի 29-ի թիվ 633 նամակների համաձայն՝

1. «Երֆրեզ» ԲԲԸ կողմից Պանամա փոխանցված 500.0 հազար ԱՄՆ դոլարը «Արդշինինվեստ» բանկի կողմից վերադարձվել է հիմնադրամ:
2. Հոգաբարձուների խորհուրդը ճշտել է ծրագրի շահառուների թիվը, որը ՀՀ դրամի արժևորման և շինարարության գների աճի հետևանքով 17000-ից դարձել է 10000: 2008թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ ջեռուցում են ստացել 4886 բնակարան:
3. Հիմնադրամի կողմից ներկայացված ժամանակացույցի համաձայն 317.0 հազ. ԱՄՆ դոլարը ենթակա է վերականգնման մինչև 2015թ.: Ներկայումս վերականգնվել է՝ 49.7 հազ. ԱՄՆ դոլար («Կա ընդ Կո» ՍՊԸ կողմից ամբողջապես մարվել է ս.թ. դեկտեմբերի 15-ի դրությամբ վճարման ենթակա գումարը՝ 1,373 մլն դրամ, «Արգիշտի» համատիրությունը կատարել է 92 % մարում, «Սաուտթերմ» ՍՊԸ կողմից մարումը կազմում է 80 տոկոս, «Հայռուսգազարդ» ՓԲԸ՝ 57 %):

## 2.28. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Առողջապահական համակարգի արդիականացման I և II ծրագրեր

**<u>Վերահսկողությամբ ընդգրկվող ժամանակահատվածը՝</u>** 01.01.2007-01.12.2008թթ.:

**<u>Վերահսկողության արդյունքներով արձանագրվել է՝</u>**

*1. «Ընտանեկան բժշկության զարգացում» բաղադրիչ*

- Ընտանեկան բժշկության 2-րդ կլինիկական կենտրոնի համար գնված և մատակարարված ապրանքները (9,658.0 հազ. դրամ արժեքով) ստուգման պահի դրությամբ նպատակին չէին ծառայում (շուրջ 17 ամիս): Ծախսը դիտվում է որպես անարդյունավետ:
- Շինարարական աշխատանքների պայմանագրով սահմանված ժամկետների խախտման հետևանքով չի գանձվել 1,226.5 հազ. դրամի տույժ, որը ենթակա է վերականգնման:
- «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին (ԾԻԳ) մատակարարված տպագրական նյութերը (15,134.7հազ. դրամ) հեղինակային իրավունքի հետ կապված խնդիրների պատճառով վերջնական հասցեատերերին չէին բաշխվել: Ծախսը դ*իտվում է որպես անարդյունավետ:*

• Բժշկական սարքավորումների և կահույքի թվով 50 խմբաքանակներից 29-ը (67,848.1 հազ. դրամ արժեքով) բաշխված չեն և գտնվում են մատակարարի պահեստում, մինչդեռ *դրանց վնասվելու հնարավորությունը բավականին բարձր է:*

• 2007-2008թթ. համար նախատեսված 40 համայնքներից 3-ն են դրամաշնորհ ստացել:

*2. II Ծրագրի իրականացման ցածր տեմպեր*

«Հիվանդանոցային ենթակառուցվածքների օպտիմալացում» և «Ինստիտուցիոնալ զարգացում» բաղադրիչները վերահսկվող ժամանակահատվածում կատարվել են համապատասխանաբար՝ 4.4% և 0.1%-ով:

### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***«Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին և Ծրագրի կառավարման խորհրդին՝***

- *Բարելավել Ծրագրի բաղադրիչների իրականացման տեմպերը:*
- *Ձեռնարկել միջոցներ կապալառուներից ուշացման տույժերը գանձելու ուղղությամբ:*

**Ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ**

ՀՀ վերահսկիչ պալատի արձանագրած խախտումներին ի պատասխան ՀՀ առողջապահության նախարարի 25.03.2009թ. թիվ 12/8-06-1278 գրությամբ տեղեկացվել է՝

*1. «Ընտանեկան բժշկության զարգացում» բաղադրիչ*

Ձեռնարկված միջոցների արդյունքում.

• 2-րդ կլինիկական կենտրոնի համար գնված և մատակարարված ապրանքները՝ 9,658.0 հազ. դրամ, արդեն հանձնվել են ՀՀ ԱՆ ԱԱԻ-ին:

• Շինարարական աշխատանքների պայմանագրով սահմանված ժամկետների խախտման հետևանքով չգանձված 1,226.5 հազ. դրամի տույժն ամբողջությամբ վերականգնվել է:

• 15,134.7հազ. դրամի մատակարարված տպագրական նյութերը արդեն բաշխվել են վերջնական հասցեատերերին:

• 67,848.1 հազ. դրամի բժշկական սարքավորումների և կահույքի 29 խմբաքանակն արդեն բաշխվել է հասցեատերերին:

## 2.29. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Թռչնագրիպին հակազդման ծրագիր

*Գյուղատնտեսության մասով*

**Վերահսկողությամբ ընդգրկվող ժամանակահատվածը՝** 01.01.2006-01.06.2008թթ.:

**Վերահսկողության արդյունքներով արձանագրվել է՝**

*1. Ծրագրի իրականացման ցածր տեմպեր*

01.06.2008թ. դրությամբ Ծրագրի ժամկետի 60%-ը լրանալու պարագայում Ծրագիրն իրականացվել է ընդամենը 21.9%-ով:

*2. Ծրագրով իրականացված վճարումներ*

Ապրանքներ, սարքավորումներ կատեգորիայով կատարված վճարումները կազմում են՝ 845,735 ԱՄՆ դոլար, որից միայն 24,4%-ն է (206,776 ԱՄՆ դոլար) ուղղվել ծրագրի անմիջական նպատակի իրականացմանը (լաբորատոր և անասնաբուժական սարքավորումների և նյութերի ձեռք բերում), մնացած մասը ծախսվել է այլ ուղղություններով, դրանց ընտ-

րությունը ուղղակի անհասկանալի է, օրինակ՝ 426,210 ԱՄՆ դոլար ծախսվել է մարդատար և բեռնատար ավտոմեքենաների (Նիվա, Գազել մակնիշի) ձեռք բերման համար, մինչդեռ ծրագրի նպատակի իրագործման տեսանկյունից դրանց իրական անհրաժեշտությունը հիմնավորված չէր:

*3. «Անասնաբուժություն» բաղադրիչ*

Ոչնչացված թռչունների դիմաց սեփականատերերին դրամական փոխհատուցում տրամադրելու համար 750.0 հազ. ԱՄՆ դոլար արժեքով նախատեսված «Փոխհատուցման հիմնադրամը» չի ստեղծվել:

- 240.0 հազ. ԱՄՆ դոլար արժեքով նախատեսված կենդանիների դիակների վերացման 16 բիոթերմալ բեկարի հորերը չեն կառուցվել, իսկ դրանց փոխարեն հետագայում նախատեսված շարժական դիակիզարանները ձեռք չեն բերվել:
- «Չվող թռչունների չուի տեղեկատվության թարմացման» հետազոտությունների՝ 47.5 հազ. ԱՄՆ դոլար արժեքով շարունակությունը չի իրականացվել:
- Պայմանագրերով նախատեսված ժամկետների խախտման համար կապալառուն չի վճարել 1,342.35 հազ. դրամ տույժ, որը ենթակա է վերականգնման :

*Առողջապահության մասով*

**<u>Վերահսկողությամբ ընդգրկվող ժամանակահատվածը՝</u>** 01.01.2007-01.12.2008թթ.:

**Վերահսկողության արդյունքներով արձանագրվել է՝**

*1. «Առողջապահություն» բաղադրիչ*

*«ՄԵԴԻՏԵՔ» ՍՊԸ կողմից լաբորատոր սարքերի մատակարարում*

- Ձեռք բերված 111,831.5 հազ. դրամ արժեքով լաբորատոր սարքավորումները չեն օգտագործվում:
- Մատակարարից չի գանձվել մատակարարման համար ուշացման տույժ՝ 1,979.7 հազ. դրամի չափով, որը ենթակա է վերականգնման:
- Ապրանքների ներմուծումը ազատված է հարկային և մաքսային պարտավորություններից, սակայն մատակարարը պայմանագրի գնի մեջ ներառել է մաքսային վճարումները՝ 4,131.1 հազ. դրամ արժեքով, որը ԾԻԳ-ի կողմից վճարվել է մատակարարին: Նշված գումարը ենթակա է վերականգնման:
- Հաղթող ճանաչված «Կապավոր» ԱԿ (17,644.6 հազ. դրամ արժեքով) և «Կարեն և Իդա» ՍՊԸ (42,916.2 հազ. դրամ արժեքով) մրցույթին մասնակցելիս չեն ներկայացրել նախատեսված՝ ֆինանսական միջոցների առկայությունը հավաստող փաստաթղթեր:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***«Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցություն ծրագրի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին և Ծրագրի կառավարման խորհրդին՝***

- *ձեռնարկել միջոցներ Ծրագրի տեմպերի բարելավման, արձանագրված թերությունների վերացման և հաշվարկված տույժերի գանձման ուղղությամբ:*

***«Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին և Ծրագրի կառավարման խորհրդին՝***

- *ձեռնարկել միջոցներ՝ արձանագրված թերությունների վերացման, ինչպես նաև՝ վերականգնման ենթակա գումարների գանձման ուղղությամբ:*

**<u>Ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ</u>**

Առողջապահության մասով ՀՀ վերահսկիչ պալատի արձանագրած խախտումներին ի պատասխան ՀՀ առողջապահության նախարարի 25.03.2009թ. թիվ 12/8-06-1278 գրությամբ տեղեկացվել է.

- Մատակարարման համար ուշացման տույժ՝ 1,979.7 հազ. դրամ, ամբողջությամբ վերականգնվել է:
- ԾԻԳ կպահանջի մատակարարից ներկայացնել ապրանքների ներմուծման համար կատարված հարկային և մաքսային վճարումները հավաստող փաստաթղթեր:

## 2.30. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ «Պատվարների անվտանգության երկրորդ ծրագիր»

**<u>Վերահսկողությամբ ընդգրկվող ժամանակաշրջանը՝</u>** 10.08.2004-01.10.2008թթ. :

**Վերահսկողության արդյունքներով արձանագրվել է՝**

*1. Ծրագրի իրականացման ցածր տեմպեր*

2008 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ ծրագիրն իրականացվել է 59.9%-ով, մինչդեռ ծրագիրը նախատեսվում է ավարտել 2009թ.-ի մարտի 31-ին:

*2. 22 պատվարների առաջնահերթ վերականգնման աշխատանքների մրցութային փաթեթներ /ընտրանքային ստուգում/*

Մրցութային գործընթացում հաղթող ճանաչված «Աստղիկ-5» ՍՊ ընկերությունը (պայմանագրի արժեքը՝ 233,023.0 հազ. դրամ) տվյալ պահին, ըստ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության կողմից տրված տեղեկանքի, ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է պարտավորություններ՝ 5,783.9 հազ. դրամ գումարով, մինչդեռ համաձայն սահմանված կարգի, մրցույթի մասնակիցների համար հարկային և պետական պարտադիր սոցիալական ապահովագրության գծով պարտավորություններ չունենալը պարտադիր պայման է:

### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***ՀՀ կառավարությանը.***

*Քննարկել Ծրագրի կատարման պլանավորման խնդիրը և միջոցներ ձեռնարկել Ծրագրի իրականացման տեմպերի բարելավման ուղղությամբ:*

***«Ջրային տնտեսության զարգացման և բարեփոխումների ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին.***

*Ձեռնարկել համապատասխան միջոցառումներ թույլ տրված խախտումների արդյունքում գանձման ենթակա, սակայն չգանձված գումարները պետական բյուջե վերականգնելու ուղղությամբ:*

## 2.31. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Կրթության որակի և համապատասխանության ծրագիր

**Վերահսկողությամբ ընդգրկվող ժամանակահատվածը՝** 01.04.2007-30.09.2008թթ.:
**Վերահսկողության արդյունքներով արձանագրվել է՝**

*1. Ապրանքների ձեռք բերում*

«Դավսար» ՍՊԸ «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ համար մատակարարել է 57,000 եվրո արժողությամբ տպագրական սարքավորում՝ պայմանագրով նախատեսված վերջնաժամկետից ուշ, որի համար ընկերության նկատմամբ չի հաշվարկվել 1,499.0 եվրո գումարի տույժ: Հաշվի առնելով, որ մատակարարի կողմից ուշացման համար ԾԻԳ ուղարկված նամակը չունի համապատասխան հիմնավորում, տույժը ենթակա է վերականգնման:

*2. Խորհրդատվություն և վերապատրաստում/սեմինարներ*

- 179.2 հազ ԱՄՆ դոլարի չափով կնքված պայմանագրերի շրջանակներում աշխատանքների կատարման համար խորհրդատուների ընտրությունն իրականացվել է Վարկային համաձայնագրով նախատեսված խորհրդատուների ընտրության պահանջների շեղումով:
- Windows օպերացիոն համակարգից բացի, այլ օպերացիոն համակարգերի ներդրմամբ համակարգիչների ձեռք բերումը զգալիորեն սահմանափակում է դրանցից օգտվելու հնարավորությունը, արդյունքում՝ դպրոցներն ինքնուրույն տեղադրում են Windows օպերացիոն համակարգ: Ստուգմամբ պարզվել է, որ վերահսկվող ժամանակաշրջանում ձեռք բերված համակարգիչների շուրջ 73%-ը (1773 հատ) ունեն UBUNTU օպերացիոն համակարգ:

*3.Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների մշակում և ներդրում դպրոցներում*

«Համակարգիչների շրջանառու հիմնադրամի» շրջանակներում դպրոցների կողմից համապատասխան բանկային հաշվին («HSBC Բանկ Հայաստան» ՓԲԸ) կատարված վճարումների մնացորդը, ըստ առանձին տարիների, չի համապատասխանում «ՀՀ հանրակրթական դպրոցները համակարգիչներով ապահովելու և համակարգիչների շրջանառու համակարգ» ուղեցույցի պահանջներին: Բանկային հաշվին հավաքված գումարները կարող էին մուտքագրվել ոչ թե սովորական ընթացիկ հաշվին, այլ՝ ավանդային հաշվին, ինչի արդյունքում, որպես տոկոսավճար, կարող էր մուտքագրվել շուրջ 40,000.0 հազ. դրամ, դրա հնարավորությունը նախատեսված էր նաև ուղեցույցով: Արդյունքում, «Համակարգիչների շրջանառու հիմնադրամի համար շուրջ 40,000.0 հազ. դրամի օգուտը բաց է թողնվել:

*4. Օժանդակություն կրճատված ուսուցիչներին*

Վարկային համաձայնագրով «Օժանդակություն կրճատված ուսուցիչներին» կատեգորիայով նախատեսվել էր 1,788.4 հազ. ԱՄՆ դոլար: Ծրագիրն ավարտվել է 2007թ. հունիսի 30-ին: Փաստացի ծախսը կազմել է 537.4 հազ. ԱՄՆ դոլար: Այնուհետև, վարկային համաձայնագրում 2007 թվականի նոյեմբերի 28-ին կատարված փոփոխության արդյունքում կատեգորիայով նախատեսված գումարը՝ 1,788.4 հազ. ԱՄՆ դոլար, նվազեցվել է և կազմել՝ 954.0 հազ. ԱՄՆ դոլար: Անհասկանալի է այս կատեգորիայով 954.0 հազ. ԱՄՆ դոլար նախատեսելը, եթե այլևս այս ուղղությամբ վճարումներ չէին իրականացվելու (ծրագիրն ավարտվել էր): Նախատեսվածից փաստացի ծախսված 537.4 հազ. ԱՄՆ դոլարի տարբե-

րության արդյունքում առաջացած 416.6 հազ. ԱՄՆ դոլար վարկային միջոցները չեն օգտագործվել մինչև ծրագրի փակումը: Արդյունքում՝ ծրագրում ներգրավված ոչ արդյունավետ վարկային միջոցները՝ գումարով 416.6 հազ. ԱՄՆ դոլար, ենթակա են վերաբաշխման ծրագրի մյուս կատեգորիաների միջև:

*5. Ծրագրի կառավարում*

Պայմանագրով նախատեսված «Լանս» ՍՊԸ կողմից տրամադրված պրոյեկտորների պահեստային լամպերը չեն տրամադրվել դպրոցներին (53 հատ՝ 2,650.0 հազ. դրամ արժողությամբ): Գումարը ենթակա է վերականգնման:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***ԾԻԳԻ-ի կառավարման խորհրդին և ԾԻԳ-ին՝***

- «Դավսար» ՍՊԸ-ից գանձել մատակարարումն ուշացնելու համար նախատեսված տույժը:
- Խորհրդատուների ընտրությունն իրականացնել Վարկային համաձայնագրի ընթացակարգով՝ մասնավորապես խորհրդատուների որակավորման և գնի հիման վրա մեթոդի կիրառումը:
- Քննարկել դպրոցների համակարգչային ուսումնական կենտրոնների համար ձեռք բերվող համակարգիչների՝ Windows օպերացիոն համակարգով ապահովման անհրաժեշտությունը, քանի որ համակարգչային հմտությունների վերապատրաստումն իրականացվում են միայն Windows օպերացիոն համակարգով:
- «Համակարգիչների շրջանառու հիմնադրամի» շրջանակներում դպրոցների կողմից կատարված վճարումներն օգտագործել նպատակային՝ միաժամանակ այդ գումարների մուտքագրման հաշիվը փոխելով ավանդային հաշվի:
- Քննարկել «Օժանդակություն կրճատված ուսուցիչներին» կատեգորիայով նախատեսված՝ օգտագործման ոչ ենթակա միջոցների՝ ծրագրի շրջանակներում այլ նպատակով օգտագործելու հնարավորությունը:

***<u>Ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ</u>***

ՀՀ վերահսկիչ պալատի արձանագրած խախտումներին ի պատասխան ՀՀ կրթության և գիտության նախարարի 29.01.2009 թ. թիվ 21-01-19/12 գրությամբ տեղեկացվել է՝

*1. Ապրանքների ձեռք բերում*

Պայմանագրով նախատեսված ժամկետից ուշ մատակարարելու համար «Դավսար» ՍՊԸ կողմից 1.499.0 եվրո գումարի չափով տույժն ամբողջությամբ վերականգնվել է:

*2. Խորհրդատվություն և վերապատրաստում/սեմինարներ*

- Խորհրդատուների ընտրության կատարման մասով Համաշխարհային բանկի կողմից Վարկային Համաձայնագրում պետք է կատարվի համապատասխան ճշտում, այդ նպատակով ԾԻԳ կողմից 2009 թվականի հունվարի 20-ին Համաշխարհային բանկ է ուղղվել համապատասխան գրություն:
- ՀՀ կրթության և գիտության նախարարությունը պայմանագիր է կնքել MICROSOFT ընկերության հետ, համաձայն դրա վարկային ծրագրով գնված համակարգիչներում տեղադրվելու է Windows օպերացիոն համակարգը:

*3.Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների մշակում և ներդրում դպրոցներում*
«Համակարգիչների շրջանառու հիմնադրամի» շրջանակներում դպրոցների կողմից կատարված վճարումների ընթացիկ հաշիվն ավանդային հաշվի փոխելու կապակցությամբ համապատասխան գրություններ են ուղարկվել Համաշխարհային բանկ և ՀՀ ֆինանսների նախարարություն՝ համաձայնություն ստանալու նպատակով: ՀՀ ֆինանսների նախարարության կողմից համաձայնություն արդեն տրվել է:
*4. Օժանդակություն կրճատված ուսուցիչներին*
Համաշխարհային բանկի հետ համաձայնեցնելու արդյունքում «Օժանդակություն կրճատված ուսուցիչներին» կատեգորիայով չծախսված գումարը լրիվությամբ կվերաբաշխվի մյուս կատեգորիաների միջև: ՀՀ ֆինանսների նախարարի 08.01.2009թ. գրությունը վարկային միջոցների վերաբաշխման մասին արդեն ուղարկվել է Համաշխարհային բանկ:
*5. Ծրագրի կառավարում*
«Լանս» ՍՊԸ արդեն ավարտել է 2,650.0 հազ. դրամ արժողությամբ պահեստային լամպերի բաշխումը դպրոցներին:

## 2.32. ՀՀ համայնքներում գազիֆիկացման աշխատանքների կատարման համար բյուջեներից հատկացված միջոցների օգտագործում

*(արտադրագրային վերահսկողության թեմա)*

**Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակաշրջանը՝** 01.01.2005-01.09.2008թթ.:
**Վերահսկողության արդյունքներով արձանագրվել է՝**
*1. «Մանշին» ՍՊԸ*
ՀՀ Արմավիրի մարզի Երվանդաշատ, Կողբավան, Վանանդ, Բագարան, Շենիկ համայնքները սնող գազատարների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման, կառուցման և համայնքների ներքին ցանցի շինմոնտաժային աշխատանքների իրականացման նպատակով ՀՀ Արմավիրի մարզի տվյալ համայնքի գյուղապետարանի և «Մանշին» ՍՊԸ միջև կնքվել են համապատասխան պայմանագրեր՝ 298.5 մլն դրամ ընդհանուր գումարով: Ընկերության կողմից պայմանագրերում ամրագրված աշխատանքների կատարման համար սահմանված վերջնաժամկետները բազմիցս երկարաձգվել են, սակայն գազիֆիկացման հետ կապված աշխատանքները «Մանշին» ՍՊ ընկերության կողմից ավարտված չեն: Պայմանագրերը կնքվել են 2004, 2005 և 2006 թվականներին, սակայն մինչ ստուգման պահը աշխատանքներն ավարտված չէին:
*2. «Մաննախ» ՍՊԸ*
2006 թվականի հոկտեմբերի 2-ին «Մաննախ» ՍՊ ընկերության և Արագածավան, Արտենի համայնքների միջև կնքվել է եռակողմ պայմանագիր: Ըստ պայմանագրի գազիֆիկացման համար հատկացվել է 89 մլն դրամ: «Մաննախ» ՍՊ ընկերությանը Արտենի համայնքի բյուջեից փոխանցվել է 34 մլն դրամ, Արագածավան համայնքի բյուջեից՝ 51 մլն դրամ: 2008 թվականի սեպտեմբեր ամսվա դրությամբ արդեն ընկերության հաշվին փոխանցված ընդհանուր գումարը կազմել է 85 մլն դրամ, որի դիմաց ՍՊ ընկերությունը չի կատարել նախագծով նախատեսված աշխատանքները:
*3. «Տեղաս» ՍՊԸ*
2004թ. դեկտեմբերի 24-ին ՀՀ Արմավիրի մարզի Արտամետ համայնքի և «Տեղաս» ՍՊ ընկերության միջև կնքվել է պայմանագիր՝ 52 մլն դրամ ընդհանուր արժեքով, որն ամբող-

ջությամբ վճարվել է: Ըստ պայմանագրի աշխատանքների կատարման վերջնաժամկետը 2005թ. նոյեմբերի 30-ից երկարաձգվել է մինչև 2006թ. մայիսի 10-ը, որից հետո կրկին ՍՊ ընկերությունը չի կատարել նախագծով նախատեսված աշխատանքները:

***Ծանոթություն. ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 26/1 որոշմամբ «ՀՀ Արմավիրի մարզի Արտամետ համայնքի գազիֆիկացման աշխատանքների կատարման նպատակով «Տեղաս» ՍՊԸ կողմից պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման նկատմամբ իրականացված վերահսկողության ընթացքում կազմված արձանագրությունը» ուղարկվել է ՀՀ գլխավոր դատախազություն:***

«Մանշին», «Մաննախ», «Տեղաս» ՍՊԸ-ների և Վանանդ, Կողբավան, Բագարան, Երվանդաշատ, Շենիկ, Արտամետ, Արագածավան, Արտենի համայնքների գյուղապետարանների միջև կնքված պայմանագրային պարտավորությունները մանրամասն ներկայացված են աղյուսակ 1-ում:

աղյուսակ 1 (հազ. դրամ)

| Պատվիրատու / Կապալառու | Պայմանագրի ընդհանուր արժեքը | Համայնքների բյուջեներից փոխանցված գումարները | Կատարված աշխատանքները՝ ըստ տեղեկանք-ների | Վճարված գումարների դիմաց չկատարված աշխատանքներ | Պայմանագրերի կնքման տարեթիվը | Աշխատանքների ավարտը՝ ըստ պայմանագրերի | Պայմանագրերի ժամկետների վերանայում, երկարաձգում |
|---|---|---|---|---|---|---|---|
| Վանանդ/ (Մանշին ՍՊԸ) | 65,000.0 | 65,000.0 | 55,680.0 | 9,320.0 | 14.04.05 | 01.11.05 | N1 մինչև 30.09.06թ<br>N2 29.09.06 թ մինչև 30.09.07թ<br>N3 30.09.07 թ մինչև 21.07.08թ |
| Կողբավան/ (Մանշին ՍՊԸ) | 32,000.0 | 30,000.0 | 1,896.8 | 28,103.2 | 14.04.05 | 01.11.05 | N1 մինչև 30.09.06թ<br>N2 29.09.06 թ մինչև 30.09.07թ<br>N3 10.09.07 թ մինչև 21.07.08թ |
| Բագարան/ (Մանշին ՍՊԸ) | 60,000.0 | 45,900.0 | 14,537.2 | 31,362.8 | 14.04.05 | 01.11.05 | N1 մինչև 30.09.06 թ<br>N2 29.09.06 թ մինչև 30.09.07թ<br>N310.09.07 թ մինչև 21.07.08 թ |
| Երվանդաշատ/ (Մանշին ՍՊԸ) | 60,000.0 | 33,044.6 | 2,630.0 | 30,414.6 | 14.04.05 | 01.11.05. | N1 մինչև 30.09.06 թ<br>N229.09.06 թ մինչև 30.09.07 թ<br>N310.09.07 թ մինչև 21.07.08 թ |
| Շենիկ/ (Մանշին ՍՊԸ) | 81,500.0 | 78,700.0 | 28,815.6 | 49,884.3 | 10.03.05 | 25.12.05 | 25.12.05թ.մինչև08.01.06թ..<br>10.08.06թ.-30.11.06թ.<br>30.11.06թ.-25.04.07թ.<br>25.04.07թ.-31.07.07թ.<br>31.07.07թ.-31.07.08թ. |
| Արտամետ/ (Տեղաս ՍՊԸ) | 52,000.0 | 52,000.0 | 25,000.0 | 27,000.0 | 24.12.04 | 30.11.05 | 10.03.06թ.այլ պայմանագրեր կնքված չեն |
| Արագածավան, Արտենի/ (Մաննախ ՍՊԸ) | 89,000.0 որից պ/բ 70,000.0 հ/բ 19,000.0 | 85,000.0 | 42,000.0 | 43,000.0 | 02.10.06 | 30.12.06 | 30.12.06թ.մինչև 30.11.07թ.<br>26.11.07թ.-30.09.08թ. |
| Ընդամենը | 439,500.0 | 389,644.6 | 170,559.5 | 219,085.0 | | | |

**Ծանոթություն**. ՀՀ վերահսկիչ պալատի ստուգման արդյունքում «Մանշին» և «Մաննախ» ՍՊԸ-ների խնդրանքով չկատարված աշխատանքների իրականացման վերջնաժամկետ է սահմանվել.

«Մանշին» ՍՊԸ համար՝ Վանանդ համայնքում 25.03.2009 թ., Կողբավան համայնքում 15.05.2009թ., Շենիկ համայնքում 15.06.2009թ. և Բագարան ու Երվանդաշատ համայնքներում 01.07.2009թ.,

«Մաննախ» ՍՊԸ համար՝ Արտենի և Արագածավան համայնքներում 01.06.2009թ.:

## 2.33. «Պետական աջակցություն ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագիր

*(արտածրագրային վերահսկողության թեմա)*

**Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակաշրջանը`** «Սոկոլ Գրուպ» ՍՊ ընկերության մասով` 2004- 2008թթ., իսկ «Արիաց Գրուպ» ՍՊ ընկերության մասով` 2007-2008թթ.:

**Վերահսկողության արդյունքներով արձանագրվել է`**

*1. «Սոկոլ Գրուպ» ՍՊԸ*

Ընկերությունը 2004-2006թթ. համար նախատեսված 746.2 մլն դրամ արժողությամբ 132 բնակարանի փոխարեն հանձնել է միայն 70-ը, մնացած 62 բնակարանները` 295 մլն դրամ արժողությամբ, 2008 թվականի սեպտեմբերի 29-ի դրությամբ հանձնված չէին:

2005 թվականի ընթացքում ընկերության կողմից հանձնված և պատվիրատուի կողմից ընդունված թվով 12 բնակարաններից յուրաքանչյուրի ընդհանուր մակերեսը պակաս է սահմանված 38 $մ^2$:

Ըստ հաստատված տեխնիկական բնութագրերի պետք է գնվեին մեկ սենյականոց տիպային բնակարաններ` առանձին կոմունալ հարմարություններով, ջեռուցման համակարգով, սալիկապատված սանհանգույցով, բնակելի մասի հատակը` մանրահատակ, բնակարանը պետք է լիներ բնակության համար պատրաստի վիճակում և չունենար վերանորոգման կարիք: Մինչդեռ, հանձնաժողովի կողմից ուսումնասիրված բոլոր բնակարաններում բացակայել է ջեռուցման համակարգը, բնակելի մասում` մանրահատակը, թվով 13 բնակարաններ գտնվում են տեխնիկական հարկերում, ոչ բնակելի տարածքներում: Մասնագիտական հետազոտության արդյունքում արձանագրվել է, որ բնակպայմանները չեն համապատասխանում գործող ինժեներական և սանիտարական նորմերին: Տեխնիկական հարկերում բնակելի տարածքների ձեռք բերման ուղղությամբ կատարված ծախսը` 92,200.0 հազ. դրամ, համարում ենք ոչ արդյունավետ:



Ձեռք բերված բնակարաններից մեկը

**ՀՀ վերահսկիչ պալատի կողմից տվյալ ծրագրի նկատմամբ վերահսկողությունն իրականացվել է 2008 թվականի սեպտեմբերի 8-ից և ավարտվել սեպտեմբերի 25-ին: Սեպտեմբերի 27-ին արձանագրությունը ծանոթացման նպատակով ներկայացվել է «Սոկոլ Գրուպ» ՍՊ ընկերության ղեկավարությանը: Սեպտեմբերի 29-ին և 30-ին «Սոկոլ Գրուպ» ՍՊ ընկերության կողմից չկատարած աշխատանքի դիմաց 296.2 մլն դրամ վերականգնվել է ՀՀ պետական բյուջե:**

*2. «Արիաց գրուպ» ՍՊԸ*

2007թ. դեկտեմբերի 24-ին պետական գնումների գործակալության և «Արիաց գրուպ» ՍՊ ընկերության միջև կնքվել է 344.7 մլն դրամի գնման պայմանագիր, որի հիման վրա ամբողջ գումարը, որպես կանխավճար, փոխանցվել է ընկերությանը: «Արիաց գրուպ» ՍՊ ընկերության կողմից 2008 թվականի ընթացքում գնվել և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն է ներկայացվել պայմանագրով նախատեսված 45-ի փոխարեն թվով 19 բնակարան, այդ թվում 11-ը՝ Էջմիածին, 4-ը՝ Հրազդան, երեքը՝ Վանաձոր, մեկը՝ Սպիտակ քաղաքներում: Հրազդան քաղաքում թվով 4 բնակարանները ձեռք են բերվել Շինտրեստի հանրակացարանի N 1 մասնաշենքում, որը գտնվում է խիստ անմխիթար և բնակության համար ոչ պիտանի վիճակում, որի պատճառով դրանք չեն ընդունվել պատվիրատուի կողմից, թեև 2008 թվականի մարտ-հունիս ամիսների ընթացքում դրանք արդեն ձևակերպվել էին որպես պետական սեփականություն: Էջմիածին քաղաքի Զարենցի թաղամասի թիվ 6 շենքում «Արիաց գրուպ» ընկերության կողմից ձեռք բերված թվով 11 բնակարանները գտնվում են ոչ բնակելի հարկերում:

Ձեռք բերված 15 բնակարանների համար հատկացվածծ միջոցները՝ 92,000.0 հազ. դրամ, դիտվում է որպես անարդյունավետ ծախս:

«Արիաց գրուպ» ՍՊԸ հատկացված միջոցներից 252,700.0 հազ. դրամը ենթակա է վերականգնման:





Մանկատան շրջանավարտների համար ձեռք բերված բնակարաններ

**Ծանոթություն.** ***Վերահսկողության արդյունքներով արձանագրվել է նաև, որ ծրագրի շրջանակներում 2008 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսված 335 մլն դրամի սահմաններում մանկատների շրջանավարտների բնակապահովման ուղղությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից որևէ աշխատանք չի կատարվել:***

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***ՀՀ կառավարությանը՝***

- *Քննարկել «Պետական աջակցություն ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագրի հետագա իրականացման հարցը, միջոցառումներ ձեռնարկել ծրագրի լիարժեք կատարումն ապահովելու ուղղությամբ և խախտումներ ու բացթողումներ թույլ տված պաշտոնատար անձանց ենթարկել պատասխանատվության:*
- *Հաշվի առնելով, որ ծրագրի շրջանակներում գնված և շահառուներին տրամադրված բնակարանները մասամբ չեն համապատասխանում կնքված գործակալական պայմանագրերով հաստատված տեխնիկական բնութագրերի պահանջներին, առաջարկվում է համապատասխան նախարարությունների միջոցով սեղմ ժամկետում ամփոփել յուրաքանչյուր բնակարանի մասով տեխնիկական բնութագրից թույլ տրված շեղումը և մշակել թերությունների ու բացթողումների վերացման աշխատանքային ծրագիր ու ժամանակացույց:*

<u>Ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ</u>

ՀՀ վերահսկիչ պալատի խորհուրդը 2008 թվականի նոյեմբերի 5-ին և դեկտեմբերի 3-ին կայացրել է համապատասխան որոշումներ՝ «Պետական աջակցություն ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագրի կատարման նպատակով հատկացված բյուջետային միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունը «Սոկոլ Գրուպ» և «Արիաց Գրուպ» ՍՊԸ-ների մասերով ՀՀ գլխավոր դատախազություն ուղարկելու մասին:

## 2.34. ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն

*(ընթացիկ հաշվետվությունը պարունակում է «հույժ գաղտնի» տեղեկատվություն)*

## 2.35. «ՀՀ պետական բյուջեներով նախատեսված հիմնական խմբին չդասվող այլ ծախսային ծրագրերով ՀՀ պետական այլ մարմիններին հատկացված միջոցների օգտագործման նկատմամբ իրականացրած վերահսկողության արդյունքների մասին»

*(ընթացիկ հաշվետվությունը պարունակում է «հույժ գաղտնի» տեղեկատվություն)*

## 3. Վերահսկիչ պալատի միջազգային հարաբերությունները

Հաշվետու տարում Վերահսկիչ պալատի միջազգային համագործակցության շրջանակը նախորդ տարիների համեմատ կտրուկ մեծացել է:

1. Արտաքին հարաբերություններում Վերահսկիչ պալատի գործունեությունն ուղղված էր INTOSAI, EUROSAI և ASSOSAI, ինչպես նաև ԱՊՀ բարձրագույն վերահսկիչ մարմինների ղեկավարների խորհրդի շրջանակներում տարվող աշխատանքներին, մասնավորապես Վերահսկիչ պալատի տարբեր պատվիրակություններ և աշխատակիցներ համագործակցության խորացման, ուսուցման և վերապատրաստման նպատակով մասնակցել են հետևյալ միջոցառումներին.

- 2008 թ., ապրիլ 9-11, ք. Բեռլին, EUROSAI «Բարձրագույն վերահսկիչ մարմինների կառավարում» միջազգային կոնֆերանս,
- 2008 թ., մայիս 19-22, ք. Մոսկվա, INTOSAI, «Առանցքային ազգային ցուցանիշներ» միջազգային կոնֆերանս,
- 2008 թ., հունիս 1-6, ք. Կրակով, EUROSAI-ի 7-րդ համաժողով,
- 2008 թ., հուլիս 20-30, ք. Սոֆիա, ԱՄՆ ՄԶԳ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագիր, «Ճանաչողական և փոխգործակցության պաշտոնական այց Բուլղարիայի Հանրապետության աուդիտի ազգային գրասենյակ»,
- 2008 թ., սեպտեմբեր 3-5, ք. Մոսկվա, ԱՊՀ բարձրագույն վերահսկիչ մարմինների ղեկավարների խորհրդի 8-րդ համագումար,
- 2008 թ., հոկտեմբեր 2-3, ք. Վիլնյուս, EUROSAI, «Ֆինանսական վերահսկողության ստանդարտներ» միջազգային կոնֆերանս,
- 2008 թ., հոկտեմբեր 22-24, ք. Պրզնո, EUROSAI, «Մարդկային ռեսուրսների կառավարում» միջազգային կոնֆերանս,
- 2008 թ., դեկտեմբեր 17, ք. Մոսկվա, ԱՊՀ բարձրագույն վերահսկիչ մարմինների ղեկավարների խորհրդի «Առանցքային ազգային ցուցանիշների փորձագիտական խումբ»:

2. Միջազգային կառույցների հետ տարվող աշխատանքներում նույնպես արձանագրվել են էական հաջողություններ: Այսպես.

- Վերահսկիչ պալատի և Գերմանական տեխնիկական համագործակցության կազմակերպության (GTZ) հայաստանյան գրասենյակի միջև հարաբերությունները տեղափոխվել են որակապես նոր փուլ: Հաշվետու տարվա ընթացքում գերմանացի պաշտոնյաները բազմաթիվ հանդիպումներ են ունեցել նաև Վերահսկիչ պալատի նախագահի հետ, դրանց արդյունքում Գերմանիայի հաշվիչ պալատի հետ ձեռք են բերվել համագործակցության նոր պայմանավորվածություններ, հատկապես տեխնիկական աջակցությանը զուգահեռ, 2009 թվականին նախատեսվում է Գերմանիայի հաշվիչ պալատի մասնագետների հետ իրականացնել համատեղ վերահսկողություն, որը եվրոպական համագործակցության նոր էջ կլինի Հայաստանի արտաքին պետական վերահսկողության պատմության մեջ: Բացի այդ, գերմանացի փորձագետների կողմից Երևանում կազմակերպվել են և դեռ նախատեսվում է կազմակերպել տարբեր սեմինարներ և համաժողովներ:
- Վերահսկիչ պալատի և Համաշխարհային բանկի համագործակցությունն իր հերթին նույնպես խորացել է: Ավարտվեց «Պետական հատվածի արդիականացման» ծրագրի

շրջանակներում Համաշխարհային բանկի կողմից ցուցաբերվող տեխնիկական աջակցությունը և, արդեն իսկ, կողմերը նոր և լուրջ հիմքեր են դրել առաջիկայում Վերահսկիչ պալատին աջակցել կարողությունների զարգացման, վերահսկողության ուժեղացման և կադրերի վերապատրաստման ուղղությամբ:

Հաշվետու տարում իրականացվող վերահսկողության ամենաթեժ պահին Վերահսկիչ պալատի և Համաշխարհային բանկի ղեկավարները պաշտոնապես հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որտեղ, հատկապես, նշվում էր, որ վերահսկողության բնագավառում և կոռուպցիայի դեմ պայքարում Համաշխարհային բանկն աջակցում և աջակցելու է Վերահսկիչ պալատին:

Համաշխարհային բանկն ու Վերահսկիչ պալատը սկսել են համագործակցել նաև ինչպես պետական, այնպես էլ՝ վարկային ծրագրերի շրջանակներում գնումների համակարգի արդյունավետության բարձրացման բնագավառում:

• Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային Զարգացման գործակալության (USAID) միջոցներով իրականացվող հակակոռուպցիոն գործունեության մոբիլիզացման ծրագրի շրջանակներում սկիզբ դրվեց Վերահսկիչ պալատի և «Կասալս ենդ ասոշիեյթս» ընկերության հետ համագործակցությանը:



Այդ շրջանակներում արդեն կազմակերպվել է Վերահսկիչ պալատի պատվիրակության ճանաչողական և համագործակցությանն ուղղված այցը Բուլղարիայի Հանրապետություն: Բացի այդ, տարբեր միջազգային փորձագետների կողմից խարհրդատվական աջակցություն է ցուցաբերվել Վերահսկիչ պալատին, հատկապես կոռուպցիայի դեմ պայքարում ժամանակակից մեթոդաբանության կիրառման ուղղությամբ:

3. Էապես ընդլայնվել է միջազգային երկկողմ հարաբերությունների աշխարհագրությունը, բարձրացել է դրանց արդյունավետությունը, ինչպես նաև լուրջ հիմքեր են ստեղծվել փոխհարաբերությունների հետագա զարգացման և խորացման համար, հատկապես Ֆրանսիայի, Հոլանդիայի, Լեհաստանի, Բուլղարիայի բարձրագույն վերահսկիչ մարմինների հետ:

4. Մինչև 2010 թվականն ընկած ժամանակաշրջանում ԱՊՀ տնտեսական զարգացման ռազմավարության պահանջներից ելնելով նաև առանձնահատուկ կարևորություն է ձեռք բերել միջազգային հարաբերությունները ԱՊՀ շրջանակներում: Մոսկվայում տեղի ունեցած ԱՊՀ բարձրագույն վերահսկիչ մարմինների ղեկավարների խորհրդի 8-րդ համագումարում Վերահսկիչ պալատի նախագահի նախաձեռնությամբ համաձայնություն ձեռք բերվեց 2010 թվականին 10-րդ համագումարը անցկացնել Երևանում, որով նշված խորհրդը կնախագահի Հայաստանը:



# 4. Հավելված և տեղեկանքներ

հավելված 1, հազ. դրամ

| Հ/Հ | Վերահսկվող օբյեկտ | Ֆինանսական խախտումներ և թերություններ | Արձանագրված խախտման չափը, որը ենթակա է վերականգնման | Վերականգնված է | | Արձանագրվել է անարդյունավետ ծախս |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | գումարով | աշխատանքով | |
| 1 | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 220,342.5 | 220,342.5 | 12,858.1 | 150,012.0 | |
| 2 | ՀՀ բնապահպանության նախարարություն | 221,937.7 | 61,755.3 | | | 160,182.4 (տեղեկանք 1) |
| 3 | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 422,791.8 | 190,084.4 | 45,061.9 | 140,778.2 | 232,707.4 (տեղեկանք 2) |
| 4 | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | 189,069.6 | 126,521.3 | 35,766.8 | 62,548.3 | 62,548.3 (տեղեկանք 3) |
| 5 | ՀՀ առողջապահության նախարարություն | 940,555.5 | 150,842.5 | 8,935.0 | 998,460.0 | 789,713.0 (տեղեկանք 4) |
| 6 | ՀՀ Սյունիքի մարզպետարան | 250,936.4 | 108,924.0 | 13,417.4 | 96,549.7 | 142,012.4 (տեղեկանք 5) |
| 7 | ՀՀ Սյունիքի մարզի համայնքներ | 330,885.1 | 232,762.6 | 61,154.1 | 13,375.0 | 98,682.5 (տեղեկանք 6) |
| 8 | ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան | 155,223.4 | 147,913.8 | 42,849.5 | 54,312.2 | 7,309.6 (տեղեկանք 7) |
| 9 | ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքներ | 291,853.7 | 167,950.0 | 57,021.5 | 9,303.9 | 18,695.0 (տեղեկանք 8) |
| 10 | ՀՀ Արարատի մարզպետարան | 26,794.6 | 26,794.6 | 1,229.0 | 3,453.1 | |

| Հ/Հ | Վերահսկվող օբյեկտ | Ֆինանսական խախտումներ և թերություններ | Արձանագրված խախտման չափը, որը ենթակա է վերականգնման | Վերականգնված է | | Արձանագրվել է անարդյունավետ ծախս |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | գումարով | աշխատանքով | |
| 11 | ՀՀ Արարատի մարզի համայնքներ | 35,450.9 | 36,109.9 | 4,590.0 | 2,335.4 | |
| 12 | Երևան քաղաքի Կենտրոն համայնք | 2,838,563.3 | 2,838,563.3 | 68,501.2 | | |
| 13 | Երևան քաղաքի Դավթաշեն համայնք | 91,000.0 | 16,519.4 | 334.3 | | |
| 14 | Երևան քաղաքի Նոր Նորք համայնք | 108,345.5 | 89,170.5 | | | |
| 15 | Սևան ազգային պարկ | 95,576,8 | 95,576.8 | | | |
| 16 | Բնական պաշարների կառավարում և չքավորության նվազեցման ծրագիր | 13,429.8 | 1,335.0 | 853.8 | | 12,094.8 (տեղեկանք 9) |
| 17 | Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ծրագիր | 81,056.1 | 1,844.4 | 1,844.4 | | 79,211.7 (տեղեկանք 10) |
| 18 | Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագիր | 28,863.4 | 28,863.4 | 28,863.4 | | |

| Հ/Հ | Վերահսկվող օբյեկտ | Ֆինանսական խախտումներ և թերություններ | Արձանագրված խախտման չափը, որը ենթակա է վերականգնման | Վերականգնված է | | Արձանագրվել է անարդյունավետ ծախս |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | գումարով | աշխատանքով | |
| 19 | Արտադրական ենթակառուցվածքների վերականգնման ծրագիր | 118,979.4 | 108,273.0 | 3,606.4 | | 10,706.4 (տեղեկանք 111) |
| 20 | Դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագիր | 11,572.2 | 11,572.2 | 194.5 | | |
| 21 | Քաղաքային ջեռուցում ծրագիր | 245,100.0 | 245,100.0 | 164,910 .0 | | |
| 22 | Առողջապահության համակարգի արդիականացման ծրագիր (I, II) | 93,867.3 | 1,226.5 | 1,226.5 | | 92,640.8 (տեղեկանք 12) |
| 23 | Թռչնագրիպին հակազդելու ծրագիր | 7,453.2 | 7,453.2 | 1,979.7 | | |
| 24 | Կրթության որակի և համապատասխանության ծրագիր | 3,273.9 | 3,273.9 | 623.9 | 2,650.0 | |
| 25 | ՀՀ համայնքներում գազիֆիկացման աշխատանքների իրականացման ծրագիր | 435,500.0 | 435,500.0 | | | |
| 26 | «Պետական աջակցություն ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագիր | 825,100.0 | 640,900.0 | 296,200.0 | | 184,200.0 (տեղեկանք 13) |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **8,083,522.1** | **5,995,172.5** | **852,020.5** | **1,533,777.8** | **1,890,704.3** |

**տեղեկանք 1**

ՀՀ բնապահպանության նախարարություն

հազ. դրամ

| | | |
|---|---|---|
| 1. | Բնապահպանության ոլորտի տեխնիկական կանոնակարգի մշակման աշխատանքներ | 2,600.0 |
| 2. | Բնության հատուկ պահպանվող տարածքների վերանայման, սահմանների ճշտման և քարտեզագրման աշխատանքներ | 25,000.0 |
| 3. | Ծաղկաձորի օդային ավազանի աղտոտվածության մոնիտորինգի կայանի ստեղծում և շահագործում | 31,752.0 |
| 4. | Հիդրոլոգիական նավի գնման համար բյուջեից հատկացված գումարի (153,000.0 հազ. դրամ) և ըստ հանրապետություն ներմուծված մաքսային փաստաթղթի ապրանքի արժեքի (79,931.6 հազ. դրամ) տարբերություն | 73,068.4 |
| 5. | Սևանա լճի ափին սպորտային նավերի ակումբի շինարարության նախագծային և մտադրության հռչակագրի մշակումների աշխատանքներ | 27,762.0 |

**տեղեկանք 2**

ՀՀ քաղաքաշինության նախարարություն

հազ. դրամ

| | | |
|---|---|---|
| 1. | Արհեստական թանկացրած և ապրանքների նախահաշիվ-ները գերազանցող գումարներ | 100,323.8 |
| 2. | Նախագծահետազոտական աշխատանքների իրականացում (Սևանա լճի առափնյա տարածքներ) | 15,300.0 |
| 3. | Բնակարանային ապահովում բնակարանների գնման վկայագրերի տրամադրում | 110, 916.0 |

**տեղեկանք 3**

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն

հազ. դրամ

| | | |
|---|---|---|
| 1. | 4908 հատ ճանապարհային նշանները և 10024 գծ/մետր երկաթյա ցինկապատ ճողերը չէին օգտագործվել | 62,548.3 |

**տեղեկանք 4**

ՀՀ առողջապահության նախարարություն

հազ. դրամ

| | | |
|---|---|---|
| 1. | 126411 սրվակ ինսուլինի գնման համար չնռտեսված գումար (պիտանելիության ժամկետի անհամապատասխանություն) | 75,205.5 |
| 2. | Հանրապետություն ներմուծված դեղերի գնման համար արհեստական թանկացումներ | 453,738.1 |
| 3. | Ժամանակին չբաշխելու հետևանքով պիտանելիության ժամկետը կորցրած դեղորայք | 60,761.4 |
| 4. | 17 անվանում դեղերի համար շուկայական նվազագույն գներից ավելի վճարված գումար | 200,008.0 |

**տեղեկանք 5**

ՀՀ Սյունիքի մարզպետարան

հազ. դրամ

| | | |
|---|---|---|
| 1. | Շինմոնտաժային աշխատանքների նախահաշվային թանկացում | 39,462.0 |
| 2. | Սիսիանի Որոտան գյուղի դպրոցի տանիքի վերակառուցման աշխատանքներ | 7,171.5 |
| 3. | Սառնակունք գյուղի դպրոցի հատակի վերանորոգման աշխատանքներ | 2,100.0 |
| 4. | Շաքի գյուղի դպրոցի վերանորոգման աշխատանքներ | 2,040.0 |
| 5. | Սյունիքի մարզի սահմանամերձ գյուղերում (Սրաշեն, Շամբ, Լծեն, Վերին Շիշկերտ) բնակելի շենքեր ձեռք բերելու և դրանք հետագայում որպես դպրոց վերակառուցելու ծրագիր | 22,900.0 |
| 6. | Լեռնաձոր գյուղի փայտյա տնկաներում ժամանակավորապես բնակեցված ընտանիքների բնակարանների լուծման ծրագիր | 66,631.0 |

**տեղեկանք 6**

ՀՀ Սյունիքի մարզի համայնքներ

հազ. դրամ

| | | |
|---|---|---|
| 1. | Աղիտու համայնք, խողովակների վաճառք | 16,905.0 |
| 2. | Ախլաթյան համայնք, խողովակների վաճառք | 43,627.5 |
| 3. | Բալաք համայնք, խողովակների վաճառք | 35,350.0 |
| 4. | Որոտան համայնք, խողովակների վաճառք | 2,800.0 |

**տեղեկանք 7**

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան

հազ. դրամ

| | | |
|---|---|---|
| 1. | Գեղամասարի ջրագծի կառուցում | 7,309.6 |

**տեղեկանք 8**

ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքներ

հազ. դրամ

| | | |
|---|---|---|
| 1. | Վարդենիս քաղաք, խողովակների վաճառք | 18,695.0 |

**տեղեկանք 9**

Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագիր

հազ. դրամ

| | | |
|---|---|---|
| 1. | Գյուղատնտեսական աշխատանքներ (հողի լաբորատոր հետազոտություն): | 9,427.6 |
| 2. | Անտառաշինական և անտառավերականգնման աշխատանքներ | 2,667.2 |

**տեղեկանք 10**

Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ծրագիր

հազ. դրամ

| | | |
|---|---|---|
| 1. | «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ վերանորոգման աշխատանքներ (վարչական այլ տարածքների վերանորոգում) | 64,919.9 |
| 2. | «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ Գյումրիի լաբորատորիայի վերանորոգման աշխատանքներ: Ստուգման պահին լաբորատորիան չէր գործում | 14, 291.8 |

**տեղեկանք 11**

Արտադրական ենթակառուցվածքների վերականգնման ծրագիր

հազ. դրամ

| | | |
|---|---|---|
| 1. | Նույն տեխնիկական բնութագրով աշխատանքներն արհեստականորեն բաժանելու արդյունքում նույն աշխատանքները ձեռք են բերվել տարբեր արժեքներով, հետևաբար նշված գումարը չի տնտեսվել | 10,706.4 |

**տեղեկանք 12**

Առողջապահության համակարգի արդիականացման ծրագիր (I, II)

հազ. դրամ

| | | |
|---|---|---|
| 1. | Ընտանեկան բժշկության համար գնված ապրանքներ, որոնք շուրջ 17 ամիս չէին օգտագործվում և գտնվում էին պահեստում | 9,658.0 |
| 2. | Հեղինակային իրավունքի հետ կապված խնդիրների պատճառով չբաշխված տպագրական նյութեր | 15,134.7 |
| 3. | Չբաշխված բժշկական սարքավորումներ, որոնք գտնվում էին մատակարարի պահեստում | 67,848.1 |

**տեղեկանք 13**

«Պետական աջակցություն ՅՅ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագիր

հազ. դրամ

| | | |
|---|---|---|
| 1. | Ձեռք բերված բնակարանների բնակպայմանների անհամապատասխանություն գործող ինժեներական և սանիտարական նորմերին, և ընդհանրապես հաստատված տեխնիկական բնութագրերին, այդ թվում՝<br>- «Սոկոլ Գրուպ» ՍՊԸ | 184,200.0<br><br>92,200.0 |

| | | |
|---|---|---|
| | - «Արիաց Գրուպ» | 92,000.0 |